Ա 11/1335

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ԳՅՈՒՂԱԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I.

Անցյալ դարի քառասնական թվականներից մինչև այսոր հայ գյուղագիրներն ուսումնասիրել և պատկերացրել են մեր գյուղը։ Արովյանից մինչև Ակսել—դա գրեթե մի հարյուրամյա ժամանակամիջոց է, յեթե նկատի առնելու լինենք, որ քանաքեռցի վիպագիրը, ճիշտ է, 1841 թվին է գրել իր համբավավոր «Վերք Հայաստանին», բայց ընդգրկել է հայ գյուղի տնտեսական և հասարակական զարգացման դարասկզբի, տասնեվիններորդ դարի քառասնական թվականների շրջանը։

Այդ հարյուրամյակի ընթացքում քանանչինգ հայ գյուղագետներ պրպտել են մեր գյուղական կյանքը, ուսումնասիրել են այդ կյանքի հասարակական ու տնտեսական յերևույթները, և այդ ամենը մարմնացրել են գրական ձևերի, տիպերի և պատկերների մի յերկար հաջորդությամբ։

Նրանց գրեթե բոլոր գրվածքներում գործողության վայրը հայ գյուղն է և գլխավոր գործող անձը՝ հայ գյուղացին։ Բայց մի հարյուրամյակի ընթացքում, հարկավ, այդ գյուղն ու գյուղացին նույնը կամ, ավելի շուտ՝ անփոփոխ չեն մնացել։ Գյուղական կյանքը հասարակականորեն զարգացել է, իր հիմնական եությամբ, այսինքն տնտեսական գործոնների հարկադրանքով՝ առաջ է շարժվել, կերպարանափոխվել։ Ցավ ահա մեր գյուղագիրներն իրենց յերկերում այդ փոփոխություններն հն արձանագրել այն չափով հաջող, որքան այդ թույլատրել է նրանց դասակարգային պատկանելությունը, հասարակական աշխարհայացքը և գրական ձիրքը։

Այն գրական ժառանգությունը, որ մենք ստացել ենք հայ գյուղագիրներից՝ արժեքավոր է մի շարք տեսակետներով։

Ամենից առաջ՝ այսորվա գյուղը ճանաչելու համար անհրաժեշտ է այդ գյուղի անցյալն իմանալ, նրա զարգացման պատմությանն իրազեկ լինել։ Բայց թույլատրելի՞ յե նման մի վերաբերմունք, կարելի՞ յե գեղարվեստական գործերից ոգտվել հասարակական զարգացման պատմության համար։ Ոմանք մերժում են այդ տեսակետը, մանավանդ նրանք, ովքեր պատկանում են գրականագիտության, այսպես կոչված, «Իմմանենտ դպրոցին»։ Սակայն այդ մտայնությունը սխալ է հենց այն տեսակետից, որ ոչ ոք չի քարոզում պատմությունն անցնել գեղարվեստական յերկերի առաջնորդությամբ։ Գեղարվեստական յերկը պատմության, ավելի վորոշ հասարագիտության համար մի ժամանակ միջոց և ճիշտ այնպես, ինչպես մատենագիտակը

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

բնագիտության համար։ Այդ ճշմարտությունն առաջին անգամ ցայտուն կերպով նիշել է այնպիսի մի հեղինակավոր տեսաբան, ինչպես Գեորգ Վալենտինովիչը։ Նա շատ խոշոր արժեք է տալիս գյուղագիրների յերկերի ուսումնասիրության գործին, լուրջ վերաբերմունք և ուշադրություն է պահանջում ժողովրդագրող հեղինակների վաստակների նկատմամբ։ «Մեր ժողովրդագրող վիպագիրների գրվածքները,—ասում է նա,—պետք է ուսումնասիրել այնպիսի ուշադրությամբ, ինչպես ուսումնասիրում են ռուսական ժողովրդական տնտեսության վիճակագրական հետազոտությունները կամ գյուղացիների սովորութական իրավունքին նվիրված յերկերը» (Г. В. Плеханов, т. X, стр. 16)։

Դա վոչ միայն տեսականապես, այլ և գործնական առումով ճիշտ մոտեցում է։ Ի՞նչ են ասում տնտեսական վիճակագրությունը և սովորութական իրավունքը։ Մ. Շահինյանը տալիս է հայ գյուղի տնտեսական վիճակի նկարագիրն այն չափով, վորքան դա Հայաստանի Գյուղատնտեսական Առաջին Համագումարն է ընձեռել։ Ն. Սամվելյանը հայ գյուղի սովորութական իրավունքի մի փորձ է արել՝ ընտանեկան «համայնքի» ուսումնասիրության դիտավորությամբ։ Եվ յեթե նրանց ուսումնասիրությունները բաղդատելու լինենք հայ գյուղագիրների գրվածքների հետ, մենք կ՝տեսնենք, վոր հիշյալ յերկու հեղինակի դատողությունները գյուղագիրների մոտ արտահայտված են պակերացումներով։ Տեսական, ավելի շուտ՝ վերացական միտքը ստացել է թանձրացում, մարմնացել է տիպերի մեջ։ Այդ տիպերը լուծելով, վերածելով կենսական փաստերի, մենք շուտով իրազեկ կ՝դառնանք, թե հայ գյուղագիրների գիտակցության մեջ ինչ բեկում է ստացել իրական կյանքը և այդ բեկումը վորքան է պայմանավորված նրանց դասակարգային պատկանելությամբ։ Այդպիսով կ՝պարզվի վոչ միայն հեղինակների գաղափարախոսությունը, այլ և նրանց հասարակական մտայնությունը։ Իսկ այս վերջինս խոշոր նշանակություն ունի գեղարվեստական գործի համար։ Վոչ միայն հարկավոր է իմանալ, թե ինչ գաղափարախոսության տեր է հեղինակը, այլ և թե նա ինչ հասարակական մտայնության ներկայացուցիչ է։ Մենք ունենք «սոցիալիստ» և «նոր—դարական» գյուղագիրներ։ Գաղափարական տեսակետից ինչ տարբերություն։ Բայց յերկուսի հասարակական հոգեբանությունը մի սարսափ և վախ է առաջ բերել հայ գյուղի «ինդուստրիալիզմի» դեմ։ Դավանանքը չի կարողացել հաղթահարել հասարակական հոգեբանության իրական տվյալներին։ Այդ տեսակետից ճիշտ է նկատում պրոֆ. Սակուլինը, ասելով. «Կյանքի մեջ բացի սիստեմատիկ գաղափարախոսությունից՝ վոչ պակաս նշանակություն ունի նաև հասարակական հոգեբանությունը, այսինքն սիստեմի տակ չ՝դրված զգացմունքների և տրամադրությունների այն կոմպլեքսը, վոր իշխում է այս կամ այն դասի կամ դասակարգի մեջ» (Տես «Русская литература и социализм», стр. 8)։

Նույն բանը մենք նկատում ենք վոչ միայն հեղինակների, այլ և հենց գյուղացիների մեջ։ Մեր այսորվա գյուղացին «ըստ ամենայնի» նոր մարդ

և, նոր հասարակական հոգեբանություն ունի, որը պայմանավորված է իր ապրած նոր տնտեսակարգի ավյալներով։ Բայց յեթե դուք վերցնեք մեր այսորվա գյուղագիրների յերկերը, կ՝տեսնենք թե որքան շատ բան ունի այդ գյուղացին, որ ժառանգել է անցյալից։ Վերցնենք նախ արտաքինը։ Գյուղ մտնողն ամենից առաջ նկատում է նույն աթարի դեզերը, նույն ծուռ ու մուռ և կեղտոտ փողոցները, գետնին կպած և անլուսամուտ նույն տները, խոտի ցաք ու ցրիվ կույտեր, քուջուջ անող հավեր և հորանջող ու շնթռկած գամփռներ այդ խոտադեզերի մեջ, և այլն, և այլն։ Այդ ամենն ուրիշ տեսնողներ են յեղել նաև անցյալում, սրանից մի քանի տասնամյակ առաջ։ Այժմ գանք ներքինին։ Բոլոր այլ հանդամանքները մեկդի դնենք և վերցնենք միայն յերկու կետ։ Աղքատ գյուղացու վերաբերմունքը դեպի վաշխառուն և տղամարդի վերաբերմունքը կնոջ նկատմամբ։ Աղքատ գյուղացին իր «բարերարն» և համարում վաշխառվին, ամուսինը կնոջն իր «սեպհականությունն» է ճանաչում։ Այդ ամենն ուրիշներն ել են տեսել և պատկերացրել շատ առաջ, մի քանի տասնամյակների ընթացքում։ Նոր գյուղացին ինչու՞ յե պահում այդ հին մտայնությունը։ Պլեխանովն ասում է՝ այդ հարցին պատասխանելու համար կարդացեք գյուղագիրներին, ուսումնասիրեցեք նրանց յերկերը։ Վո՛չ միայն Պլեխանովն է այդպես ասում, այլ և մի ուրիշ տեսաբան—Ա. Վ. Լունաչարսկին նույն հրահանգն է տալիս. «կարդացեք կլասիկներին» (տես „Вестник Знания“, 1926 г. № 5, „Читайте классиков“ В. А. Луначарского):

Այսպես, ուրեմն, այսորվա գյուղացուն հասկանալու և ճանաչելու համար պետք է գիտենալ նրա անցյալը, պատմական զարգացման տեսակետով պետք է մոտենալ նրան։ Հայ գյուղագիրների ուսումնասիրության անհրաժեշտության սա առաջին պահանջն է։

Յերկրորդ պահանջը բղխում է այդ առաջին նախադրյալից։ Յեթե նոր գյուղացին հին մտայնություն է ցուցնում, դրա գլխավոր պատճառն այն է, որ նրա տնտեսությունը մեծ մասամբ հինն է մնացել։ Թե ռուս և թե հայ ուսումնասիրողները միաբերան այդ փաստն են շեշտում։ Այսպես, որինակ, մի հասարակական գործիչ, ինչպես Յա. Յակովլևն է, և մի այնպիսի տնտեսագետ, ինչպես Ա. Խրյաշչևն է, միմյանցից անկախ և իրար լրացնելով՝ պնդում են նույնը։ Մեկն իր գյուղական գործունեությունից, իսկ մյուսը վիճակագրական ուսումնասիրություններից յելնելով՝ հաստատում են այն բացահայտ իրողությունը, որ գյուղատնտեսության տեխնիկայի հազիվ հազ փոփոխման հետևանքով՝ «մեր գյուղը մնացել է հինը»։ «Գյուղացիական տնտեսությունն իր արտադրական եյությամբ մնացել է նույնը,—ասում է Ա. Խրյաշչևը,—ինչ որ եր մինչև հեղափոխությունը... Ժամանակակից գյուղացու վիճակը շատ է տարբերվում նախահեղափոխական գյուղացու վիճակից, բայց այդ տարբերությունը չի բղխում տնտեսության եյությունից, այլ դրսի պայմաններից, (Տես А. Хрящев, „Группы и классы в крестьянстве“, стр. 120):

Այդ փաստը ցույց է տալիս, որ մանր սեպհականատեր գյուղացու

հին մտայնությունը վերացնելու համար պետք է խախտել այդ մտայնությունն ուժեղացնող տնտեսակարգը։ Մանր գյուղացու հասարակական հոգեբանության, նրա բնազդական աշխարհի մեջ բեկումը պետք է կատարվի այդ ուղղությամբ։ Դժվար է, ի հարկե, արմատացած ըմբռնումների, քարացած հասկացողությունների վոչնչացումը, բայց անհնարին չէ, յեթե դրան ոգնության է գալիս տնտեսական նոր ձևերի հաստատումը հին, պապենական և անդարգացած տեխնիկայի հանդեպ։ Այդ հանգամանքն է շեշտում հիշյալ Իա. Յակովլևին ասելով. «Մանր տնտեսություն ունեցող գյուղացին ինդիվիդուալիստ է իր բնությամբ, նրան հատուկ է բնազդական, հարուրավոր արմատներով իր տնտեսության մեջ նստած անվստահություն աշխատանքի վորև է հասարակական ձևի նկատմամբ „(Я. Яковлев, „Наша деревня“, стр 41):

Այդ դժվարությունը նորագույն գեղարվեստական գրականության մեջ մի քանի հոռետեսական թեքումներ է առաջ բերել։ Այդպիսի թեքումներ կարելի յե նկատել թե ռուս և թե մեր գրականության մեջ։

Մի յերկու նմուշ բերենք։ Պիլնյակը յուրաքանչյուր գյուղում տեսնում է գայլեր, հեթանոսական սովորույթներ, գազանական կացություն, «հողի իշխանություն» և ատելություն քաղաքի վերաբերմամբ։ Ռուս գեղագետի այդ թեքումը նիշել են ռուս քննադատները, մանավանդ Գեորգ Գորբաչևը, և մերակել։ Նույնը կարելի յե ասել Սեյֆուլլինայի մասին։ Նրա «կույր ու անողոք» գյուղացիներն արդյունք են «խավար և հնամյա հողի», վորի «ծանր լծի տակ» նրանք սմքած են։ Դարձյալ «հողի իշխանություն», մի տերմին, վոր ռուս գրականությունը ժառանգություն է ստացել Գլեբ Ուսպենսկուց։ Նույն թեքումը նկատվում է նաև ռուս քնարերգուների մոտ։ Նորագույն գյուղացի բանաստեղծների յերգերի մեջ դարձյալ նույն «հողի իշխանությունն» է յերևում, ավելի շուտ՝ տիրապետում։

Ստ. Զորյանի ամենավերջին գրվածքում մենք կարդում ենք յերկաթուղու կայարանից ուբ վերստ հեռու ընկած մի գյուղի մասին հետևյալը. «...ինչպես բոլոր գյուղերում, Կաղնուտում (գյուղի անունն է. Ա. Տ.) էլ ապրում էին մարդիկ այնպես, ինչպես հարյուր, հազար տարի առաջ ժամ էին գնում, մատաղ անում սրբերին, ցանում էին, հնձում. գարուն, ամառ, աշուն աշխատանք, աշխատանք, անձրև, կարկուտ ու յերաշտ. ձմեռը զրույց ոդաներում, հարսանիք ու բուք»... («Պատերազմը», յերես 8)։

Նույն իսկ այնպիսի մի մոլի նարոդնիկ, ինչպես եր Վ. Կորոլենկոն, մահվանից առաջ գրած մի պատմվածքում, հետևյալ կտրուկ հայտարարությունն է անում. «Ապագան վոչ մի ծեղ (бревышко) չի ստանա ժամանակակից գյուղից» (տես „Художник Алимов“. 1923.)։

Բայց այդ մտայնության հիմքը խախտած է, վորովհետև դրանից ուտոպիզմ է հոտում։ Ճիշտ է, այսորվա գյուղը, «ժամանակակից գյուղը», շատ թերություններ ունի, բայց դրա հետ միասին կան նաև հիմքեր, տրվյալներ, առողջ և պիտանի ատաղձ «ապագայի» շենքը կառուցանելու համար։ Եվ այն մարդիկ, վորոնք այսոր սիրտ շփում ունեն «ժամանակա-

կից» գյուղի հետ, միաբերան վկայում են, որ ապագա գյուղը շատ բան ունի առանձին այսորվա գյուղից, յեթե նա հետևողականորեն զարգացնելու և հրահրելու լինի այն սաղմերն ու կայծերը, որոնք կան այնքան առատությամբ «ժամանակակից» գյուղում։

Համայնական տնտեսությունը վոչ թե պիտի հերյուրել, այլ հորինել ժամանակակից գյուղական կյանքի առձեռն տվյալների հիման վրա։ Այդ յեզրակացության են յեկել այսորվա գյուղն ուսումնասիրողները։ Նրանք նկատել են, որ շատ տեղերում գյուղացիք սովոր եյին ինվենտարը միահամուռ ուժերով դնելու և այդ սովորությունը ներկայումս ել գործադրում են։ Վոչ միայն այդ՝ ուրիշ շատ համայնական սովորություններ ել կան, որոնց կողքով վոչ թե անտարբերությամբ պետք է անցնել, այլ նման փորձերի վրա հենվելով՝ «քայլել դեպի ապագան»։

Վոչ միայն ռուս, այլ և հայ գրականության մեջ բաղմաթիվ հիշատակություններ կան, որ գյուղացիական տնտեսությունն հղի յե ապագայի սաղմերով։ Թողնենք նոր հեղինակներին և դիմենք այնպիսի մի հեղինակի, որ իր դիտողությունները հիմնել և հայ գյուղագիրների տվյալների վրա։ Այդ հեղինակը շեշտում է հայ գյուղի շերտավորումը, բայց միևնույն ժամանակ հիշատակում է, որ հայ գյուղն ևս, ինչպես և ռուս գյուղը, պահել են մի շարք համայնական սովորություններ, որոնց նա ամփոփում և հետևյալ հինգ կետերում։ 1) Արաքսը հորդանալով, այդիներին ջուր տվող առուները փչանում են. ամբողջ գյուղը վերականգնում և նախկին գրությունը։ Նույնպես են վարվում, յերբ ջրաղացների հուներն են փչանում. ամբողջ գյուղը մաքրելու վրա աշխատում է։ 2) Անհատական ուժերից վեր աշխատանքը կատարվում է խմբակցորեն, հավաքականորեն. որինակ՝ ջրաղացաքար, ձիթաքար բերելը. 3) Հարսանիքներին «կանչի» սովորությունը. 4) Գյուղատնտեսական գործիքների «փոխ տալը» առանց վորևե վարձատրության. և, վերջապես, 5) Համայնական խոտհարքը, որից բաժին են առանում ըստ թափած աշխատանքի (տես Գ. Վանցյան, «Հայ համայնքի սովորություններ», «Մուրճ», 1896 թ. № 1)։

Այսպես, ուրեմն, տնտեսապես շերտավորված գյուղում գերկընդխառն առաջ են գնում գյուղացու հասարակական հոգեբանությունից բղխող այսպիսի միտումներ—անհատական և հավաքական։ Վորքան առաջին միտումը պայմանավորված և հին, կղզիացած, առանձնական տնտեսությամբ, այնքան յերկրորդը պայման և առհավատչյա յե նոր, ընկերակցական ու հավաքական տնտեսակարգի։ Այդ յերկու սկզբունքների շեշտակի կռիվը նորագույն գյուղի հասարակական բովանդակությունն և կազմում։ Այդ կռիվն իր սկզբով, ընթացքով և հետևանքներով ընդգրկել է մեր գյուղացիական գրականությունը։ Հետևապես, վերջնիս ուսումնասիրությունը կպարզի մեկ կամ մյուս սկզբունքի գրական հիմնավորումները, որ տալիս են մեր գյուղագիրները, յելնելով գյուղացիական տնտեսության և գյուղացու հասարակական հոգեբանության տվյալներից։

Ասացինք, որ այսորվա գյուղը հասկանալու համար պետք է գիտե-

նանք այդ գյուղի յերեկը,—այս մեկ։ Ասացինք, վոր գյուղի մեջ գոյություն ունեցող պահպանողական միտումները հին տնտեսակարգի արձագանքներն են,—այս յերկու։ Մնում է յերրորդ խնդիրը պարզել։ Դա գյուղի ապագան է, վորի համար մեր գյուղագիրները գծել են տարբեր ուղիներ։

Վորքան էլ տարբեր լինեն այդ ուղիները, սակայն մի բան պարզ է, վոր հայ գյուղի քայքայման պատճառը կապիտալիզմի մեջ տեսնելով, հայ գյուղագիրների մեծամասնությունը գրել է իր դրոշակի վրա—կոթիվ կապիտալիզմի դեմ,—նկատի չառնելով վերջնիս շինարար, ստեղծագործող դերն ապագայի նկատմամբ։ Նրանք կռիվ են հայտարարում կապիտալի նախնական կուտակման հերոսների դեմ, կուլակների դեմ, առանց հասկանալու, վոր վերջիններս վորոշ տնտեսական պայմանների արդյունք են և կ՚վերանան արտադրության ձևերի փոփոխմամբ և վոչ թե քարոզներով կամ լալկանությամբ։ Նրանք անտես են անում այն հանգամանքը, վոր արդյունաբերության զարգացմամբ, հետևապես և՝ կապիտալիզմի ոժանդակությամբ՝ պիտի ծյուրվեն և՝ հետզհետն վերանան վաշխառվական շահագործման ձևերը, վորոնց դեմ նրանք պայքարում են առանց յերևույթի տնտեսական պատճառները վերացնելու կամ այդ վերացումը նախապատրաստելու։ Նրանք հաղարավոր անգամ շեշտում են հայ գյուղի սակավահողությունը, մեր հողի անարգավանդ, ջրապակաս և ուժասպառ բնույթը, կըրկնում և յերեքկնում են, թե մեր հողը կարիք ունի արհեստական վոռոգման, վորովհետև այդ հողը կավակրային բաղադրություն ունի, ուստի և բընակչության տեղումները բավական չեն, տեղումներ, վորոնք մեր յերկրի մթնոլորդային պայմանների հետևանքով այնքան սակավ են, անբավարար։ Այդ բոլորից հետո յեզրակացությունը պիտի լիներ այն, թե մեր գյուղի փրկությունը տնտեսության ինտենսիֆիկացիայի մեջ է։ Բայց վոչ միայն մեր գյուղագիրների մեծամասնությունը, այլ և նրան խթան և գաղափար տվող հրապարակախոսությունը միաբերան ու միահամուռ կերպով կրկնում են թե՝ պետք է ամեն կերպ կռվել ինդուստրիալիզմի դեմ գյուղատնտեսության շրջանում (տես Հ. Մուսայելյան, «Անդրկովկասի հողային պայմանները», յերես 5)։

Հայ գյուղագիրների մեծամասնության իդեալն Արովյանի գյուղն է և նրա «շոկոլադից շինած» գյուղացին, այն գյուղը, ուր դառն ու գայլը միասին արածում են և ուր սարդերն ու ճանճերը հավասարապես յերջանիկ են։ Նրանք չեն հասկանում, վոր պատմության անիվը չի կարելի հետ տանել, վոր «ինքնուրույն», «անկախ», մանր սեպհականատիրական տնտեսությունն ապագա չունի։ Բայց հայ գյուղագիրների մեծամասնության դասակարգային պատկանելությունն և դրել այդպիսի կնիք այդ գյուղագիրների հասարակական իդեալի վրա։ Նրանք կապիտալիզմը չարիք հին համարում, վորովհետև նա քայքայում էր մանր արտադրությունը և սրա վրա հիմնված գրեթե միջնադարյան հասարակարգը։ Իսկ մանր արտադրությունն իդեալացնելով՝ հայ գյուղագիրներն իրենց կամքից անկախ վոչ մի փրկություն չեին բերում այն գյուղացուն, վորի շահերի պաշտպանության

համար եկին աշխատում և ստեղծագործում։ Վոչ մի փրկություն, վոչ տընտեսական, վոչ էլ քաղաքական խմաստով։

Մեր գյուղացիրների ավագ սերունդը սարսափով եր նայում կապիտալիզմի նախնական քայքայման վրա։ Այդ նույն սարսափն են տարել նաև ռուս նարոդնիկները, վորոնք կապիտալիստական տնտեսաձևին հակադրում եին գյուղի ինքնուրույն զարգացման մի ուղի, պնդում եին թե գյուղում դասակարգային կռիվ չկա, թե նա զարգանում և առանձնակի որենքներով։ Դեռ այն ժամանակ, երբ առաջին յերկաթուղին եր շինվում Ռուսաստանում—Մոսկվայից մինչև Պետերբուրգ դիծը, ժամանակի ամենասրատես և տաղանդավոր մարդը, քննադատ Բելինսկին՝ վողջունեց այդ յերևույթը,չնայած վոր ժամանակակից մտավորականներից շատերն ակնբախ հակառակություն եին հանդես բերում այդ նոր, հետևանքներով հղի յերևույթի դեմ։ Յերկաթուղին պիտի զարկ տար արդյունաբերության և առևտրին, իսկ «արդյունաբերության և առևտրի զարգացումը,—ասում է Բելինսկին,—բոլոր դասերի և դասակարգերի մարդկանց շահերը կցորդում է և հարկադրում է միմյանց հետ մտնել այնպիսի կենդանի և սերտ հարաբերությունների մեջ, վորոնք հարթում են բոլոր սուր և անհարկավոր տարբերությունները» („Полное собр. соч.", т. X. стр. 135)։

Մեր գյուղացիրների ժամանակակից սերունդը կանգնած է այդ տեսակետի վրա։ Գյուղի տնտեսական զարգացումը նրան վախ չի պատճառում։ Ընդհակառակը։ Մանր արտադրական գյուղը, «ինքնուրույն», «անկախ»և կղզիացած գյուղական տնտեսությունն է—բոլոր նախկին հայ գյուղացիրների իդեալը- վոր նրան վախ է տալիս։ Այդ մտայնության ամենատիպիկ ներկայացուցիչն է Ակսելը։ Հին գյուղին նա հակադրում է նոր գյուղը, նորի և հնի պայքարն է նա տալիս՝ այսորվա իրականությունից փատեր առնելով։ Սակավահողությունը, մեր յերկրամասի հողերի «շորաքյաթ» բնույթը, հող, վոր հեռվից այնպես է յերևում, ասես, «վրան յեղյամ է թվել»—այդ բոլորը նա նկատում է։ Բայց միաժամանակ նա տեսնում է և նոր յերևույթներ։ Յա. Յակովլևը նկատել եր, վոր գաղթական գյուղերում նոր տնտեսական ձևնարկներն ավելի յին հաջողում, քան հին գյուղերում, վորովհետև գաղթականը վորոշ չափով կարված է հին ավանդներից և նոր կարգեր ընդունելու և կիրառելու կողմակից է („Наша деревня", стр. 69)։

Ակսելն իր «Արմաշ» պատմվածքում, ասես, Յակովլևի այդ միտքն է իլլյուստրացիայի յենթարկում։ Արմաշը նորաշեն գյուղ է, նոր յեկած գաղթականներից կազմված։ Ջրի սայլի մոտ կանայք սովորական զրույց են անում, բայց մեկը մյուսին անսովոր առաջարկ է անում։

— Տղաս կարմրուկ է հանել, ասում է մեկը։

— Տաք պահե, փայտ չունես նե, յեկե տար, պատասխանում է մյուսը։

Հարևան թուրքերի հետ գաղթականներն հետզհետե նոր հարաբերություններ են ստեղծում։ Նեյդարը, վոր «խանի ձեռքին յեղան ջիլերից մի լախտ է յեղել» իր նման խեղճերի դեմ, այսոր իր վիճակակից հայի հետ

զրուցում է տնտեսական խնդիրների մասին, «պատմում է, կարծես թե մի եպոսից անգիր կտորներ է ասում, դարերի փորձով ստուգված կանոններ գարու, բամբակի մշակության մասին»։

Սկսելը նկատել է և՛ այն հանգամանքը, որ հայ գյուղը քայքայվել է վերջ հոգուտ հայ քաղաքի, ինչպես որ դա յեղել է Ռուսաստանում, ուր ռուս գյուղի գործոն տարրերն համախմբվել են ռուս քաղաքում և սրան տվել արդյունաբերական քաղաքի բոլոր առավելությունները։ Ընդհակառակ, հայ գյուղի գործոն տարրերի ուժերը գնացել են սատար հանդիսանալու Հայաստանից դուրս գտնված վայրերում, թողնելով գավառական քաղաքը քնեածության և թմրության գրկում։ Հայ գավառական քաղաքի այդ քնեածության և թմրության մի բնորոշ նկարագիրն է տալիս Ակսելն իր «Իվան Բեյ» պատմվածքում։ Ահա թե ինչ պատկերով է հանդես գալիս նրա գրչի տակ հայկական գավառական քաղաքը։ «Մի քաղաք,—ասում է նա,—ուր այսոր յերեկվա պես է, վաղն էլ դժվար թե մի բան լինի։ Մի քաղաք, ուր «իրար լավ գիտեն, հարևանի աքլորն էլ են ճանաչում ու գիտեն, թե դրկիցն այսոր ճաշին ինչ է յեփել կամ ինչպես յերեկ նրանց տանը մ բաժակ ընկավ, կոտրվեց»։

Նարոդնիկների, հետևապես և՛ հայ գյուղագիրների ավագ սերնդի, հասարակական խղճալի քննադատությունը, Բելինսկու հիշյալ մտքի արծարծումը, մեր գյուղագիրների նոր սերնդի հանրային միտումի հիմնավորումը տվել է Լև Դավիդովիչն իր հետևյալ եպիկական պարբերությամբ. «Կապիտալի արշավանքից առաջ աշխարհը գյուղ եր,—ասում է նա,—և ահա յեկավ կապիտալը և ավերեց գյուղերի պահեստարանները՝ ազգային բթամտության այդ տնկարանները, ու մարդկային մսով և մարդկային ուղեղով ճխաուն լցրեց քաղաքների քարյա սնդուկները։ Բոլոր խոշընդոտները հաղթահարելով՝ նա ֆիզիկապես մոտեցրեց յերկրի ժողովրդներին, և նրանց նյութական շփման հողի վրա առաջ տարավ նրանց հոգեկան ձուլման աշխատանքը։ Նա մինչև հիմքը տակն ու վրա արավ հին քաղաքակրթությունները և անխնայորեն լուծեց իր շուկայական միջազգայականության մեջ անշարժության ու ծուլության այն կապակցությունները, որոնք համարվում էին մի անգամ ընդ միշտ կաղապարված ազգային բնավորություններ» (Л. Д. Троцкий, „Література и революция", стр. 194)։

Այսպես, ուրեմն, հայ գյուղագիրների ուսումնասիրության գործը հասարակագիտական տեսակետից մեծ հետաքրքրականություն և այժմեականություն է ներկայացնում։ Ներկա գյուղը ճանաչելու համար մենք գյուղագիրների յերկերում այդ գյուղի անցյալը կ՛տեսնենք։ Միևնույն ժամանակ գյուղագիրները հնար կ՛տան հասողվելու, որ գյուղացու պահպանողական մտայնությունը պայմանավորված է նրա տնտեսական հնամյա գործիքներով, առ հասարակ նրա պրիմիտիվ արտադրությամբ։ Յեվ, վերջապես, այդ բոլորից հետո նոր գյուղը, դեպի այդ նոր գյուղը տանող ուղիները կ՛տեսնենք, իրար դեմ կանգնեցնելով յերկու իդեալ—ինդիվիդուալիզմ թե կոլեկտիվիզմ նշանաբաններով։

Բայց այդ հասարակագիտական նշանակությունից՝ հայ գյուղագիրների ուսումնասիրությունը ներկայացնում է նաև վորոշ գեղարվեստական արժեք։ Տրոցկին շատ ճիշտ է նկատել, վոր կապիտալիզմը գյուղը դատարկել է հոգուտ քաղաքի, նա «մարդկային մսով ու մարդկային ուղեղով (ընդգծումը մերն է. Ա. Տ.) ճխտուն լցրել է քաղաքների քարյա «անդուկները»։ Այդ ցայտուն պատկերավոր խոսքը վոչ մի իրականության այնքան բոլոր կողմերով սաղական չի, վորքան հայ իրականության համար։ Իսկապես, կապիտալիզմը հայ գյուղը քայքայել է վոչ միայն «մարդկային մսի», այլ և ավելի մեծ չափով «մարդկային ուղեղի» կողմից։ Հայ գյուղին բաժին են ընկել ավելի քիչ գրական տաղանդներ, ամեն ինչ, նաև գրական տաղանդավորությունը կլանել է «հայ քաղաքը», այսինքն Հայաստանից դուրս գտնվող անդրկովկասյան հայաշատ քաղաքները։ Մեր քսանհինգ հայ գյուղագիրների մեջ գրական տաղանդով աչքի ընկնող **գուցե գյուղագիրները** թվով քիչ են։ Մենք ունենք ավելի մեծ քանակով և ավելի խոշոր տաղանդով ոժտված քաղաքագիրներ, քան գյուղագիրներ։ Ճիշտ է, քսան և հինգ հայ գյուղագիր ունենք։ Բայց այդ քսանհինգ գրողների մի զգալի մասը պատահարար կամ հարևանցորեն և զբաղվել հայ գյուղով։ Մայրն ի ծայր գյուղագիր հեղինակների վոչ միայն թիվը և քիչ, այլ և նրանցից շատ քչերն են ոժտված իսկական և մեծայուն գրական տաղանդով։ Մի խոսքով՝ վորովհետև բոլոր ուժերն ուղղված են յեղել գեղի քաղաքը, մեր գուցե գյուղացիական յերկրին, մի յերկիր, ուր գրեթե 85% գյուղացիություն կա, բաժին է ընկել նաև շատ քիչ գրական տաղանդավորություն։

Թեև քիչ քանակությամբ տաղանդավոր գյուղագիրներ ունենք, բայց այնուամենայնիվ նրանք կան, ուստի և մեր նորագույն գրողները, վորոնցից վոմանք շատ ակնհայտ գյուղացիական թեքում ունեն, պետք է գրական նախորդների ուսումնասիրությամբ բեղմնավորեն և ավելի զարգացնեն իրենց այսորվա յերկասիրությունը։ Մեր գյուղագիրներից վոմանք այնպիսի տաղանդավոր գրողներ են, այնպիսի ինքնուրույն գեմքեր են, վորոնց մասին պետք է կրկնել հայանի խոսքը թե՝ «նրանք խմում են իրենց բաժակից»։ Նրանց աշխարհայացքը, այդ աշխարհայացքի մարմնացումը վորոշ տիպերի մեջ, ուստ նորագնիկներից նրանց կրած ազդեցությունը, վերջապես նրանց իդեալների գրական-հասարակական արժեքը,—ահա խնդիրներ, վորոնք պետք է մի մի թեմա հանդիսանան մեր գյուղագիրների գեղարվեստական դեմքը և նրանց տեղը մեր գրականության մեջ պարզելու համար։ Անդամ նրանց գրելակերպը, նրանց «ձեը», «պրյոմները» արդասիք են նրանց հասարակական աշխարհայացքի։ Բայց այդ աշխարհայացքն ևս անփոփոխ չի մնացել և զարգացել և տնտեսական կյանքին զուգընթաց, փոփոխելով միաժամանակ և գրական ձևը։ Որինակ. Պռոշյանի ծանրաշունչ և յերկարաբանությամբ վեպը և Արշ. Շահնազարյանի հակերճ նովելները մեր գյուղական կյանքի զարգացման կնիքն են կրում իրենց վրա։ Գրական ձևն այս կամ այն շրջանի հասարակական մտածողության արդյունք է։ Նկատել են, վոր բելգիացի բանաստեղծ Վերհարնի գյուղական յերգերի մեջ պատ-

կերավորությունը զերծ և կրոնական շեշտերից, վորովհետև ֆլամանդական գյուղը վաղուց հետև յենթարկված է ինդուստրիալիզացիայի և «հողի իշխանությունը» իր «Ցեղյա Մարգարեյի» հետ միասին քշել են նոր տեխնիկայով և կրուպպի թնդանոթներով։ Ընդհակառակը, ռուս ժամանակակից գյուղագիրները, լինեն վիպագիր թե քնարերգու, մեծ չափով իրենց պատկերավորության մեջ կրոնական շեշտեր ունեն։ Դա բացատրվում է նրանով, վոր Վերհարն ու, որինակ, Ցեսենինը տարբեր բնույթ ունեցող գյուղերի յերգիչներ են։

Այսպես, ուրեմն, հայ գյուղագիրների յերկերի ձևի ուսումնասիրությունն ևս ցույց կտա, վոր նրանք կապված են յեղել վորոշ գյուղական միջավայրի հետ և արտահայտիչ են հանդիսացել բնորոշ հասարակական մըտածողության։ Նրանց աշխարհայացքի և գրելակերպի կապն ակնհայտնի յե։ Նրանք, որինակ, վախով եյին նայում մանր արտադրողի ապագային և այդ հանգամանքը նրանց գրելակերպին ընծայել է հոռետես, լալկան շեշտեր, բարոյական-քարոզչական բնույթ։ Նրանք գերազանցորեն կենցաղագիր եյին։ Նրանք տեսնում եյին վորոշ իրեր, վորոշ հարաբերություններ և այդ ամենը պատկերացնում եյին այդ իրերի և այդ հարաբերությունների ստատիկայից յելնելով և յերբեք չընդգրկելով այդ նույն իրերի և հարաբերությունների դինամիկան։ Նրանց գեղարվեստական թերության գլխավոր հիմքը հեղինակների աշխարհայացքի հենց այդ նեղությունը և սխալն է, վորոնք պայմանավորված են նրանց մանր-բուրժուական դասակարգային պատկանելությամբ։

Չնայած այդ բոլորին՝ հայ գյուղագիրների գրական ուսումնասիրությունն անհրաժեշտ է ճիշտ այնպես, ինչպես և հայ գյուղի անցյալի ուսումնասիրությունը։ Նոր գյուղացիական գրականություն ստեղծելու համար պետք է իմանալ մեր գյուղացիական գրականության յերեկը, ինչպես վոր նոր գյուղ ստեղծելու համար պետք է իրազեկ լինել հին գյուղին։

Հետևապես, հայ գյուղագիրների ուսումնասիրության արժեքը և այժմեականությունը պայմանավորված են վորոշ հասարակագիտական և գեղագիտական տվյալներով։ Նախ տեսնենք այդ հասարակագիտական բովանդակությունը, այնուհետև տանք այդ բովանդակության գեղարվեստական արտահայտությունը, այսինքն նախ՝ աշխարհայացքը, հետո՝ տիպերը, նախ հասարակական, ապա գրական արժեքը։ Այժմ—վերն և հայ գյուղագիրների աշխարհայացքը։

II.

Առաջին հայացքից, թվում է թե՝ հայ գյուղագիրների ամբողջական և վորոշակի աշխարհայացքի մասին խոսք անգամ չի կարող լինել։ Մանավանդ, յեթե համեմատելու լինենք ռուս գյուղագիրների հետ, հայ հեղինակների մտքերի, ընդհանուր հայեցողության թափթփվածությունը շատ և աչքի զարնում։ Բայց չնայած այդ հանգամանքին՝ հայ գյուղագիրները մի հայտնի չափով հանդես են բերել հասարակական վորոշ մտայնություն։

վերջինս տարտամ բնույթ և ստացել՝ ընդհանրապես մեր կյանքի տնտեսական հետամնացության, տեղական պայմանների բարդության և մեր յուրքի գաղութային բնույթի պատճառով Ռուսաստանի վերաբերությամբ։ Յեթե ռուս գյուղացին վաթսնական թվականների սկզբում գեթ «իրավաբանորեն» «ազատագրված էր» կալվածատերերի լծից, յեթե նա իր յերկրում ազգամիջյան բաղխումների ասիթներ չուներ, և, վերջապես, յեթե նա մի պետականության թեև կրտսերական, բայց այնուամենայնիվ «փաստական» հիմք էր կազմում,—այդ բոլոր պայմաններից զուրկ էր հայ գյուղացին և բնականաբար նրա շահերի գաղափարախոսությունը չեր կարող այնպես հստակ լինել, ինչպես ռուս գյուղագիրների աշխարհայացքը։

Դեկաբրիստների ապստամբությունն «արյունով և յերկաթով» գոպող պետականությունը «հայկական շրջանն» և մտնում և հաստատում իր ծանր տիրապետությունը։ «Ժողովրդի» բերան հանդիսանալով՝ այդ յերևույթը վողջունում և ժամանակի գրողներից մեկը՝ Մեսրոպ Թաղիադյանը, հենց այդ նվաճման գրեթե մյուս որը։ Նա «աչքալուսանք» է տալիս Յերևանի հայ ազգաբնակությանն այդ անակնկալ շնորհի համար։ «Աչքներդ լույս,—գրում է Թաղիադյանը,—վոր մեր քաղցր աշխարհքը պարսից դառն չարչարանքից ազատվեց, քրիստոնի տերության ներքո ընկավ։ Փառք բարեբարին Աստուծո, վոր այսուհետև ավել նեղություն չեք ունենալու, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անվանիք, ձեր ազգասիրության, խաստության լուրն և արվեստից հառաջադիմությունը բոլոր աշխարհ պիտի տարածվեն» (Մ. Թ. «Նամակ յերևանցիներին», Կալկաթա, 1828 թ. նոյեմբերի 1-ին։ «Հայ հեղինակներ», յեր. 8)։

Մ. Թաղիադյանի այս նամակից տասն և հինգ տարի հետո Խ. Աբովյանը՝ վերհիշելով ռուս տիրապետության առթած ուրախությունն իր համայրենակցիներին՝ դարձյալ «ժողովրդի» բերան և հանդիսանում և ներբողներ կարդում այդ աշխարհակալության հասցեին։ Իր ռուսասիրությունը նա տեղ տեղ պաշտամունքի յե հասցնում, ռուս մարդուն և ռուս պետական գործչին աստվածացնելով մինչ այն աստիճան, վոր հրամանագրում և —«ռուսի առաջ պետք է յերեսներիս խաչ հանենք», իսկ Լեհաստանի ապստամբությունը ճնշող և Վարշավայում արյան բաղանիքներ սարքող զեներալ Պասկևիչին—Յերևանի և Նախջևանի խանությունները նվաճողին——ներբողելով՝ անվանում է «Պոլշիո Աստված» («Վերք Հայաստանի», յեր. 92 և 267)։

Անպայման թե Թաղիադյանի և թե Աբովյանի ուրախությունն անկեղծ էր, ինքնաբուղխ այն չափով, վորքան յերկուսն էլ ճաշակել էին պարսկական տիրապետության ծանրությունը և տեսել ու ապրել էին Ա-բարատյան դաշտի հայ բնակչության զրկանքները։ «Քրիստոնյա» պետությունը բերում էր նոր իրավակարգ։ Վերջինս զարգացած և «լուսավորված» լինելու մի քանի ցայտուն նշաններ ուներ։ Նա միատեսակ, միորինակ պայմաններ էր ստեղծում, վերացնում էր պարսկական տիրապետության «գավառականությունը», գրավոր և հանրապարտադիր որենքներ էր հանդես

բերում, մեջ տեղից հեռացնելով շրջանային վարիչների ամենակարողությունն ու քմահաճույքը։ Իրավահավասարության դրոշակ ուներ նոր տիրապետությունը, և հայն այլ ևս «դյավուր» չեր, այլ պետության հարկատու։ Նոր տիրապետությունը տնտեսական կյանքի մեջ ևս աշխույժ մըտցրեց։ Այդ բոլորը, քանի դեռ յերևույթը նոր եր, շատ հրապուրիչ կողմեր ուներ։ Ցեվ Թաղիադյան ու Արովյան արձագանք եյին տալիս ընդհանուր տրամադրության։

XIX դարասկզբին ռուս պետականությունը Կովկաս մտնելով՝ դառավ այդ յերկիրը գրեթե կուսական վիճակում իր հասարակական տնտեսական զարգացմամբ։ Թողնելով մեր աղբյուրները՝ բավական և հիշել Կովկասին նվիրված բանաստեղծությունները, վորոնք գրված են Պուշկինի և Լերմոնտովի ձեռքով։ Նրանք պատկերացնում են մի քնեած, մեղկացած, ճահճացած կյանք, բուսական ու կենդանական մի գոյություն, վոր հետևվանք եր տնտեսական կացության նախնականության և սատրապային քաղաքականության։

Նոր դարի բազկերակը՝ քաղաքը, վոր հրաշքներ եր գործում Արևմտյան Յեվրոպայում և արդեն հասարակական ուժ եր դառնում Ռուսաստանում, - մեզ մոտ, Անդրկովկասում, ավելի ևս Հայաստանում, մի մեծ գյուղ եր ինքնին, զուրկ զուտ քաղաքային տնտեսության գործոններից, նյութեր մշակելու և ապրանքներ բաշխելու ֆունկցիաներից։ Առևտուրը, մանավանդ արդյունաբերությունը դեռ սաղմային վիճակում եյին գտնվում։

Իսկ գյուղում գերիշխում եր բնական տնտեսությունը։ Վերջինս, վոր վոմանք անվանել են «սպառողական տնտեսություն» (որինակ՝ Լարինը) մի բնորոշ գիծ ունի։ Դա այն և, վոր ինքն իր համար և արտադրում և վոչ թե շուկայի համար։ Այնուհետև բացի այդ զլխավոր գծից, տնտեսագիտական գրականությունից հայտնի յեն այդ տնտեսության հետևյալ հատկանիշներն ևս։ Այսպես. ունենալով արտադրության գործիքներ և հումնյութեր այն քանակով, վորքան հարկավոր և իր պահքերը հոգալու համար, յուրաքանչյուր արտադրող արտադրում և այնքան, վորքան իրեն հարկավոր և։ Մի ուրիշ բնորոշ առանձնահատկությունն էլ այն և, վոր իր նման տնտեսություններից կղզիացած և, մեկուսացած և ինքնուրույն։ Յեթե նա շուկայի հետ էլ գործ ունի, այնուամենայնիվ նրա իշխանությանը յենթակա չեն։ Շուկա տանում և միայն և յեթե իր ունեցվածքի ավելցուկը։ Աշխատանքի բաժանումն ևս (որինակ՝ արհեստը) տեղական սահմանափակ կարիքների համար և ծառայում և վոչ թե դրսի հարկադրանքի արդյունք և։ Ցեվ այդպես եր վոչ միայն անհատական տնտեսությունը, այլ նաև ամբողջ համայնքներ նույն ինքնամփոփ վիճակն եյին ներկայացնում։

Հենց այդպիսի դրության մեջ եյին գտնվում Անդրկովկասյան քաղաքն ու գյուղը, յերբ ռուսական տիրապետությունը հաստատվեց մեզանում։

Ռուս կառավարությանը թնչ տնտեսական ուժ եր մղել դեպի հարավ և թնչ նպատակների յեր նա հետապնդում Անդրկովկասում։

Մի շարք ուսումնասիրողների աշխատությունները լույս են սփռում

այդ խնդրի վրա։ Ամենից շեշտակի կերպով հարցը դրել և լուծել է Լենինը։ Նրա կարծիքով ռուս կառավարությունը հարկադրված էր մատաղ կապիտալիզմի կմախքը կատարել և Կովկասում շուկա փնտրել, նրան դարձնելով սոսկ գաղութ։ Ի՞նչ է գաղութը, հարցնում է նա։ Ցերկու պայման կա, վոր ստեղծում են այդ յերևույթը. ազատ հողեր և հում նյութեր, վորոնք փոխանակվում են պատրաստի ապրանքների հետ։ Կովկասն ուներ թե մեկը, և թե մյուսը։ Նվաճումից հետո՝ կառավարությունը գաղթավայր դարձրեց Կովկասը և տեղական տնայնագործության զարգացումը խափանեց հոգուտ կենտրոնական կապիտալիզմի։ Կովկասը դարձավ շուկա վերջինիս համար։ Գյուղական աղքատությունը սկսեց նոսրանալ և կես դարի ընթացքում գրեթե հարյուր տոկոսով քաղաքների աղքատությունը բազմացավ (Т. III. „Развитие капитализма в России“):

Այդպիսով՝ ռուսական նվաճումից հետո Կովկասը դարձավ բաց շուկա։ Կենտրոնական կապիտալին կառավարությունը նպաստում էր՝ այդտեղից հում նյութեր դուրս տանելու և փոխարենը պատրաստի ապրանքներ ներմուծելու համար։ Այդ կերպ չզարգացավ տեղական մշակող արդյունաբերությունը և միայն յերկրի զեոլոգիական հատկությամբ պայմանավորված մի քանի ճյուղեր ծաղկեցին, ինչպես, որինակ, նավթը, պղինձը, և այլն։ Նոր կառավարությունը նախ իր թեվի տակ առավ կովկասյան կալվածատիրությունը, նրան դարձնելով մասնավոր սեպհականատեր և ճորտատեր, ինչպես Ռուսաստանում, ապա նա իր հովանավորության տակ առավ նորածագ բուրժուազիային, նրան հանձնելով պետական կապալներն ու հանքերի շահագործումը։ Բայց այդ հովանավորությունը մի ավելի մեծ և սկզբունքային հովանավորության սոսկ արձագանքն եր։ Դա այն է, վոր ռուս ազնվականությունն ու ինքնակալությունը ռուս առևտրա-արդյունաբերական բուրժուազիային իրենց կողմը թեքելու համար Անդրկովկասն հանձնել էին նրա ժենաշնորհյալ շահագործմանն իբրև սոսկ գաղութ, վոր միշտ կախված պիտի զգար կենտրոնից՝ առանց իրավունք ունենալու ինքնուրույնաբար զարգացնել տեղական արտադրական ուժերը։ Նույն սահմանափակումը կար նաև տեղական ազնվականության նկատմամբ։ Ցարական կառավարությունն, ի հարկե, պաշտպանում եր նրան իբրև մի հավատարիմ դաշնակցի, բայց ամբողջապես չվստահելով՝ ռուս գաղթականներ եր բերում, նրանց լավագույն հողերն եր տրամադրում, աշխատում եր բարեկեցիկ վիճակ ստեղծել այդ նորեկների համար, վորպեսզի ի դեպ հարկին նրանց վրա հենվել կարողանար։ Անդրկովկասի և մանավանդ Հայաստանի «կատաստրոֆիկ սակավահողությունը» (Մ. Շահինյան) արգելք չեր հանդիսանում այդ ներգաղթին։

Այդ բոլորից հետո բնական է, վոր Անդրկովկասի հին արտադրական միջոցները քայքայելով, փոխարենը նոր արտադրական միջոցների զարգացմանն արգելք եր հանդիսանում հենց նույն ցարիզմը։ Այդ դրության ծանրությունն ամենից առաջ իր կաշվի վրա զգաց գյուղացիությունը, վորի աղքատացումն ու պանդխտությունը դառնում են բնականոն յերե-

վույթներ։ Այդ «գաղութային քաղաքականությունն» է պատճառը, որ կապիտալի նախնական կուտակումն մեզանում ստացել է հրեշավոր բնույթ, այնքան հրեշավոր, ասես, գյուղագիրներն առասպել են պատմում և ոչ թե իրողություն։

Մ. Պակրովսկու կարծիքով՝ գաղութային այդ թալանը սերտորեն կապված եր նախնական կուտակման հետ, որի ամենամոտ հետևանքը գյուղացիության աղքատացումն եր։ Կովկասի նվաճումն ընթացք եր տալիս ներքին Ռուսաստանի կուտակված կապիտալին դեպի մի յերկիր, որ դեռ այն ժամանակ մատչելի չեր ավելի զարգացած արդյունաբերական Յեվրոպային։ Նույն հեղինակը մի շատ բնորոշ փաստ է բերում Արովյանի պաշտամունքի առարկա գեներալ Պասկեվիչի գործունեությունից։ Յեվ դուրս է գալիս, որ այդ զեն ու զրահի ներկայացուցիչը վոչ այլ ինչ է յեղել, բայց յեթե առևտրական կապիտալի սոսկ մի գործակալը։ Նվաճելով Յերևանի ու Նախիջևանի խանությունները և Թավրիզ հասնելով՝ Պասկեվիչը պարծենալով գրում է «Նիկոլայ Պալկինին», թե Պարսկաստանից ինքը վանդել և անգլիացի վաճառականներին դեպի Հնդկաստան, հետևապես ճանապարհը «հայրենի» կապիտալի առաջ արդեն բաց է (տես М. Покровский, „Дипломатия и войны царской России“, стр. 380 и „Русская история с древних времен“, т. IV, стр. 30)։

Այսպես, ուրեմն, նախ քան ռուսական տիրապետությունը՝ Կովկասը մի ինքնամփոփ տնտեսական միավոր եր։ Նոր կարգը քայքայեց այդ վիճակը և դրեց իրենից կախման մեջ։ Տեղական կապիտալիզմը դիմառավ խոչ ու խութերի իր զարգացման ընթացքի միջոցին։ Կապիտալիզմի այդ թերի զարգացումը հնար չի տալիս տեղական արտադրական ուժերի ներդաշնակ զարգացմանը—հայթայթող և մշակող արդյունաբերության միացմանը, որի հետևանքը լինում է այն, որ աղքատության մի սոսկալի մասը, մանավանդ հայկական շրջանում, ստիպված է լինում պանդխտելու կամ ծայր աղքատության մեջ տապակվելու։

Ի՞նչ ներքին տնտեսական պատճառների արդյունք եյին այդ ծայր աղքատությունն ու պանդխտությունը։—Գյուղացիության շերտավորման որի պրոցեսն այնքան ավելի արագ եր ընթանում, որքան գյուղացին հարկադրված եր իր աշխատանքի արդյունքները դրամ դարձնելու, որպեսզի հարկերը վճարի և քաղաքից կարողանա իր պետքերը հոգալու համար գնել արդյունաբերական ապրանքներ։ Այդ նույն փողի կարիքը վարելահողը մեծացնելու անհրաժեշտություն է առաջ նետում։ Հարկավոր եր շատ հացահատիկ ձեռք բերել վաճառելու համար։ Բայց վորովհետև հող, բավական քանակությամբ չկար, գյուղատնտեսության տեխնիկան հետամընաց եր,—յերկու յերևույթ, որ նկատելի յե մեզանում,—գյուղացին հող ձեռք բերելու համար չի խնայում վոչինչ, նույն իսկ անտառներ է կտրում, միայն թե բավարարի հողի կարիքը։ Մի յերևույթ, որ նկատել են նաև հայ ուսումնասիրողները։ Գյուղացին վոչ միայն անողոք է դառնում հողի բնական հարստությունների նկատմամբ, այլ և իր սեպհական ֆիզիքական

ուժերի և իր ընտանիքի վերաբերությամբ։ Նա ընդունակ է, անգամ, իր սեպհական յերեխաներին ծախել, միայն թե բավարարի իր սուբ տնտեսական կարիքը։ Հով. Թումանյանի Դիքորը այդ յերևույթի մի գրական ցայտուն պատկերացում է։

Այդպես, ուրեմն, գյուղի ինքնամփոփ վիճակը խախտվում է և գյուղ ու քաղաք տնտեսական սերտ հարաբերության մեջ են մտնում։ Քաղաքի և գյուղի այդ սերտ կապի համար անհրաժեշտություն է դառնում **միջնորդը**, որ կապում է գյուղը քաղաքի հետ, արտադրողին սպառողի հետ։ Դա մի անհրաժեշտություն եր, նկատի առնելով գյուղացու, կամ ավելի շուտ՝ մանր արտադրողի տնտեսական թուլությունը, ճանապարհների, առհասարակ հաղորդակցության միջոցների պակասությունն ու անզարգացած լինելը։ Ինչքան դժվարությամբ և գյուղացին ռեալիզացիայի յենթարկում իր արտադրածն, այնքան թանգ և դառնում փողը, այնքան սուբ և գյուղացու կարիքը։ Այս վերջինս դառնում է այն պատվանդանը, որի վրա հիմնում են իրենց գոյությունն ու բարեկացությունը **կուլակները**։

Ինչով է պայմանավորված կուլակի ուժը։ Ամենից առաջ նրանով, որ կուլակը հանդես է գալիս իրար հետ ներքին կապ չունեցող, մանրիկ, իրարից անջատ, ինդիվիդուալիստական տնտեսությունների կողքին, պարզապես պես կլչում է նրանց և մեկիկ-մեկիկ ծծում։ Զոհերը չեն կարողանում դիմադրել, որովհետև նրանց մեջ ներքին կապ չկա։ «Պարագիտ» անվանեցինք կուլակին, որովհետև նա արտադրության միջոցների զարգացման և փոփոխության չի ձգտում, մի բան, որ նրան ձեռնտու չէ, նա սոսկ դիշատիչ է և շահամոլ, իր եյությամբը տարբերվում է արդյունաբերական կապիտալիստի շինարար բնույթից։ Թեթև նա պարազիտ է տալիս գյուղացուն, դա վոչ թե «նորմալ» պարազիտ է, այլ «կարիքի պարազիտ» է. այսինքն՝ տոկոսն այնքան է բարձրանում, որքան աղքատ և գյուղացին և քիչ յերաշխիքներ կարող է տալ պարտքը վերադարձնելու համար։ Մի պարազիտ, որ գալիս է վոչ թե վոտքի կանգնեցնելու գյուղացու տնտեսությունը, այլ նրան միանգամայն քայքայելու։ Ահա թե ինչ իմաստով է դիշատիչ կուլակը։

Ուրեմն, ով է կուլակը։ «Կուլակը նա յե, ով ապրում է ուրիշի աշխատանքով, ով թալանում է ուրիշի աշխատանքը և ոգտագործում է կարիքն իր համար» (Լենին)։ Կուլակի տնտեսությունն ուռճանում է վարձու ուժի հաշվին, չքավորներին բարձր տոկոսով պարտք հանձնելու և ինվենտար փոխ տալու միջոցով։ Պարտք և փոխ, որոնց հանդեպ նա հնձի ժամանակ կամ իր տնտեսության մեջ և աշխատեցնում պարտապանին և շահագործում, կամ վերջինիս «սեպհական» աշխատանքն է թալանում։ Մի խոսքով՝ կուլակն այն հարուստ գյուղացին է, որ իր հողաբաժնից բացի՝ ունի գնած և վարձակալած բավականաչափ հող և ինվենտար. աշխատավորներ է բանեցնում, առուտուր է անում, միաժամանակ կապիտալի ավելցուկն աճեցնում է «առտվածային» տոկոսներով։ Այդպիսի գյուղացին ձգտում ունի զուտ գյուղատնտեսական պարազիտներ դարձնել ոժանդակ դրությունը։ Դա մի հետաղեմ

Գրադարան
Գ. ԱԼԻԽԱՆՅԱՆ
ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

ուժ է, վորովհետև նրա բարձրացումը լայն գյուղացիական մասսաների աղքատություն է նշանակում և նրանց անճարության շահագործում։ «Բարձր տնտեսության անցնելու ամեն փորձեր,—ասում է Սմիրնովը,—դիմադրության են հանդիպում կուլակի կողմից. շահագործումն այնքան ոգտավետ է, վորքան մասսաներն ավելի աղքատ և տնտեսությունն ավելի հետամնաց է» (տես „К вопросу о расслоении крестьянства“, стр. 29,45 и 46):

Կուլակը վոչ միայն տնտեսական, այլ և քաղաքական իմաստով մի հետադեմ ուժ է։ Դրան մի ցայտուն փաստ կարող է լինել այն, վոր 1905 թվի հեղափոխության ժամանակ կուլակությունն ակնհայտ կերպով ինքնակալության աջակցում էր։

Հայ գյուղացիների յերկերում կուլակությունը վոչ միայն լիովին պատկերացում է ստացել իր բոլոր հատկանիշներով, այլ և յենթարկվել է խիստ դատապարտության։ Վոմանք կարծել են, թե այդ խիստ դատապարտության պատճառն ռուս նարոդնիկների ազդեցությամբ պետք է բացատրել։ Չենք ժխտում ռուս նարոդնիկների ազդեցությունը, բայց այն էլ չպիտի մոռանալ, վոր կուլակությունը շատ ավելի ավերիչ բնույթ է ունեցել մեզանում, քան Ռուսաստանում, հատկապես, մեր առանձնահատուկ պայմանների հետևանքով։ Մենք արդեն խոսեցինք այն մասին, վոր մեր յերկիրը մի սոսկ գաղութ է յեղել, այնուհետև Հայաստանի սակավահողությունն ինքնին մի մեծ չարիք էր, վոր հղի յեր շատ ծանր հետևանքներով։ Լարինը նկատել է, վոր ռուս գյուղացին վոչ այնքան հողի սակավությունից էր նեղվում, վորքան «անդրջրհեղեղյան մշակումից»։ Մեզ մոտ, Հայաստանում, թե մեկը կար և թե մյուսը։ Հայաստանի գյուղատնտեսական առաջին համագումարը ներկայացրել է սակավահողության այնպիսի մի ապշեցուցիչ պատկեր, վոր յեզակի յե։ Բայց այդ հանգամանքն արդեք չի յեղել, վոր ռուս կառավարությունը մեր ամենաքիչ հող ունեցող գավառներում նոր գաղթականներ բնակեցնի և նրանց տրամադրի լավագույն հողերը։ Դրան ավելանում է և մեր հողային ֆոնդի մեծ մասի անջրդի բնույթը, վոռոգման գործի նախնականությունն ու անբավարարությունը։ Այդ բոլոր առանձնահատուկ պայմանների պատճառով հայ գյուղացին շատ ավելի մեծ տոկոս է տալիս պանդխտողների, քան, որինակ, վրացին և թուրքը։

Այդ բոլոր պայմանները հայ գյուղացու վիճակն անասելի ծանր են դարձնում։ Եկեք անդամ ընդունենք, վոր գյուղացիներն իբրև գեղագետներ չափազանցնում են, պետք է ասենք. այնուամենայնիվ նրանց նկարագիրները հեռու չեյին ճշմարտությունից։ Դրա համար մենք ունենք բազմաթիվ փաստեր մեր գյուղատնտեսական և հրապարակախոսական գրականության մեջ։ Բերենք գեթ յերկու նմուշ։

Գյուղատնտես Խոջա-Եյնաթյանն ու Գ. Մատաթյանն այսպես են ներկայացնում հայ գյուղի վիճակը XIX դարավերջին։ Ամփոփենք նրանց մտքերը։

1. Գյուղական ազգաբնակությունը աճել է, իսկ հողի քանակությունը մնացել է նախկինը. որինակ՝ Ալիզամարլուն 30 ընտանիք է ունեցել և 700

գեղյատին հող, իսկ այժմ 125 ընտանիք ունի և նույնքան հող։

2. Հողի պարարտացման վոչ մի ձևնարկ. ընդհակառակը՝ շարունակ ցանելով՝ ուժասպառ են դարձրել։

3. Հողերը վոռոգելու համար պետական միջամտություն և հարկավոր, վորովհետև վոռոգելի հողերը մեծ մասամբ արքունի կամ կալվածատիրական են. գյուղացին իր չնչին հողի համար պարարտացման ծախսեր չի անի, յեթե կարողանա յել։

4. Այդ բոլորի հետևանքը լինում է այն, վոր գյուղացին իր արտադրած մաքուր ցորենը չի ուտում, այլ հետը խառնում է այլ տեսակի հացահատիկներ՝ դառնացնելու և քիչ գործածելու համար։

5. Սակավահողության պատճառներից մեկն էլ հողի հետզհետև ճահճացումն և ջրարբշխական անկանոնությունների հետևանքով։

6. Սովը ընդհանուր յերևույթ և դարձել. դրա դեմ առնելու համար պետական միջամտություն և հարկավոր։ Յեթե պետությունը միջամտում էլ է, դա ոգտակար և լինում կուլակներին և վոչ թե աշխատավորներին։

7. Այդ բոլորի վրա ավելանում է վաշխառությունը, վորի դեմ պետությունը հրատարակում է որենքներ, վորոնք պալլիատիվներ են միայն։ Գյուղացին մուրհակի մեջ նշանակում է «որինական» տոկոսը, բայց պայմանավորվում է իր բերքը ծախել վաշխառվին. այդ կերպ տոկոսը հասնում է 60—150-ի։

8. Գյուղացին, վոր իր արդյունքը հնար չունի արտահանելու, չարչիների վարան է դառնում։ Վերջիններս բերքը կուտակում և շուկա յեն հանում, փոխարենը գյուղացուն տալով քաղաքային ապրանքներ։

9. Յերկրագործական տեխնիկան նախնական է։ Ծանր գութան բանեցնելու համար մի քանի լուծ յեզ է հարկավոր։ Վորովհետև գյուղացին այդքան յեղներ չունի, կապալով և վերցնում է ճորտանում կուլակին։ Իսկ մեծ մասամբ արորով է ցանում, իսկ այդպիսի ցանքսը մակերեսային լինելով, շատ շուտով յերաշտահար և դառնում («Մուրճ», 1897 թ. № 7—8)։

10. Գյուղացիք հողը պարարտացնելու մասին գաղափար չունեն։ Անասունների աղբը տների առաջ կուտակված է։

11. Կոթ գյուղում գյուղացիք կիրակուր յեփելու սովորություն չունեն։ Միս չեն ուտում։ Յեթե ուտեն էլ, դա – վոչխարը կոտրած կամ հիվանդ տավարի միսն է։

12. Նույն գյուղում ընակչության կեսը տեղաշոր համարյա թե չունի. փաթաթվում են կապերտի կամ թաղեքի մեջ ու այդպես քնում։

13. Գյուղական պաշտոնյաները ոռճիկ չեն ստանում. ընտրվում են պրիստավի նախագահությամբ։ Գլուխ են պահում զեղծումներով։

14. Կոթ գյուղը 200 տուն ունի և մոտ 8 հազար բուբլի տուրք և տալիս. անքում են պարարքերի տակ և գիմում են պանդխտության։

15. Հարկ տալու միջոցին հանդես են գալիս գյուղական կուլակները և սկսում են մուրհակներ առնել ապագա հնձի հաշվին։ Տոկոսը իր կարգին, բայց դրա հետ միասին պարտապանը կուլակի ճորտն է դառնում, աշխա-

տելով նրա տանը, մասնակցելով նրա դաշտային աշխատանքներին ձրիաբար։

16. կոթ գյուղում 200 տնից հաղիվ 20-ը զերծ և պարտքից (տես «Մուրճ», 1896 թ. № 7—9)

Խոջա-Եյնաթյանի և Մատաթյանի հոդվածների մեջ թված այդ բոլոր փաստերը մեր գյուղագիրների գրվածքներում ստացել են գեղարվեստական պատկերացում և, ասես, այդ 16 կետերը նրանց թեմաներն են կամ այդ թեմաների մեծ մասը։

Մեր հրապարակախոսներն ևս հաստատել են հայ գյուղագիրների տված նկարագիրների ճշտությունն ու ստուգությունը։ Այսպես որինակ. Միք. Նալբանդյանն իր «Ցերկրագործության» մեջ նկատել և գյուղացու հողային պայմանների դժվարությունը, կռվել և հողի մասնավոր սեպհականության դեմ և քարոզել, վոր պանդուխտները «յերկիր» վերադառնան։ Արծրունին՝ մի կողմ թողնելով հողի մասնավոր սեպհականության դեմ կռիվը՝ քարոզել և դարձյալ պանդխտության դեմ, վորի առաջն առնելու համար առաջարկել և կազմակերպել ինքնոգնության հիմնարկներ, մանր վարկի ընկերակցություններ։ Նրա այդ քարոզն արձագանք և գտել Մուրացանի յերկերում, ուր հայ գյուղի փրկության համար ամենահզոր միջոցներից մեկն համարվում և, գյուղացիների փոխադարձ ինքնոգնությունը։ Բայց դա, ի հարկե, կիսամիջոց եր, վորովհետև առանց հիմնական չարիքները վերացնելու, գյուղացին չպիտի փրկվեր։ Այդ հիմնական չարիքներն եյին. սակավահողությունը, միապետությունը, կապիտալիստական տնտեսությունը, գյուղացու հնամանդ տեխնիկան, և այլն։ Բանի դեռ այդ յերևույթները կան, վոչ մի ինքնոգնություն պանդխտության և գյուղացու աղքատության առաջը չի առնի։ Մեր հրապարակախոսները մեծ մասամբ կռվում եյին հետևանքների դեմ՝ առանց հիմնական պատճառները վերացնելու։ Կապիտալիզմի տերապետության որոք, նրանք ուզում եյին խափանել գյուղի շերտավորումը։ Մի ձգտում, վոր ըստ ինքյան ուտոպիական եր, այսինքն բացարձակապես անիրական։ Ուտոպիական եր նաև «ազգային կապիտալիզմի» այն թեորիան, վոր մեր հրապարակախոսները, ինչպես և վիպասաններից վոմանք, որինակ՝ Բաֆֆին, մեջ եյին բերում մի մանր-բուրժուական դրախտ ստեղծելու համար, ուր «սարդերն ու ճանճերը հավասարապես յերջանիկ պիտի լինեն» (Պլեխանով)։ Հայ բուրժուական և մանր-բուրժուական հրապարակախոսության իդեալները գյուղացիության խնդրում յերբեք կապիտալիստական հասարակարգը վերացնելու հակամետ չեն յեղել։ Դրան ապացույց հայ լիբերալ ինտելիգենցիայի այն պետիցիան, վոր 1905 թվին ներկայացվեց ռուս կառավարությանը։ Այդ յերկարաձիգ պետիցիայի մեջ միայն յերկու կետն եր գյուղացիության վերաբերվում։ Ի՞նչ եյին պահանջում հայ բուրժուազիայի գաղափարախոսները։

1. Հայ գյուղացիների հողարաժինների պարտադիր հետ-գնումն կառավարության աջակցությամբ այն ընդհանուր հիմունքներով, վոր դրծադրվել են ներքին նահանգներում։

2. Սակավահող և հողազուրկ գյուղացիներին արքունի ազատ հողերի վրա վերաբնակվելու իրավունք, արգելելով յեկվորների մուտքը (տես «Դարձ», ամսագիր, 1917 թ. № 2)։

Պետք է նկատել, որ հայ գյուղացիների մեծամասնության հասարակահայեցողությունն ևս վերջին հաշվում այդ պահանջներից դենը չի հասնում։ Իսկ յեթե մի քիչ հետու յեն գնում, մի մանր-բուրժուական ուտոպիա յեն տալիս, որ մեզ մի տնտեսական քննադատության չի դիմանում։ Նրանք շատ ավելի բարոյագետներ են, քան հասարակագետներ։ Այդպես և, որինակ, նրանց վերաբերմունքը դեպի կուլակությունը։ Նրանք մեզ այնքան այդ տնտեսական յերևույթն են ուսումնասիրում, որքան բարոյախոսում են այդ առիթով։ Այդ բարոյախոսությունն իր կնիքը դրել է նաև նրանց տերմինոլոգիայի վրա։ Ի՞նչ բարոյական անուններ ասես, որ նրանք չեն տալիս կուլակներին։ Բերենք մի քանի նմուշներ։

Ագաղյանը կրկնում է Ղազախի գավառում կուլակին տրված տերմինը—յեյիջի, որ նշանակում է լափող, կլլող*) («Նոր-Դար», 1900 թ.)

Ադելյանը զորձ է ածում **եամփա** կամ **գոչաղ** տերմինները. յերկուսն էլ միևնույն իմաստն ունեն («Մուրճ», 1896 թ.։)

Փափազյանը **գոռբա** բառն է տալիս, ասելով թե գյուղացիներն են այդպես անվանում հարուստ գյուղացուն («Գյուղից», յեր. 143)։

Ճուղուրյանն Արովյանի **Բեթխուդա** տերմինն է մեջ բերում («Մոռացված աշխարհ», հատոր I, յեր. 15)։

Լ. Մանվելյանը Գողթան գավառի գյուղացիների **խոխաճ** հորջորջումն է կրկնում («Զալարիների արշավանքը», յեր. 5)։

Յեվ այլն։ Եվ չենք հիշում **ցեցեր**, կեղեքիչներ, գյուղական **տզրուկներ** և ուրիշ «բարոյագիտական» բնորոշումները։

Անգամ մեր նորագույն հեղինակները, որոնք իրենց աշխարհայացքով կապ չունեն մեր գյուղացիների մեծամասնության հետ, տերմինոլոգիայի կողմից գտնվում են նրանց ազդեցության տակ։ Որինակ՝

Գնաց Սաքոն աչքը արուն
Ու ձեն տվեց ահսանց **ցեցիճ**...
(Յեր. Չարենց, «Մաճկալ Սաքոն»)։

III.

Այժմ զուգահեռաբար իրար կողքի դնենք մեր գյուղացիների մասայությունը և այդ մասայության գեղարվեստական պատկերացումը կամ տիպական մարմնացումը։

Նախակապիտալիստական հայ գյուղի պատկերացումը տվել է Խաչ. Արովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում։ Նման վիճակի արձագանքները մասամբ կարող ենք տեսնել Գ. Գոռչյանի «Սոս և Վարդիթերի», ինչպես

*) Նույն հեղինակը **կծաճ** և անվանում կուլակին «Գյուղի ճամփեն» գրվածքում (1896 թ.)

և «Կովածաղկի» մեջ։ Բաֆֆին ևս մի քանի շարքերներ և գծել նման գյուղի տնտեսակարգի վերաբերմամբ իր «Խենթի» մեջ։

Արովյանը տալիս և մեր գյուղի բնատնտեսության շրջանի ցայտուն նկարագիրը։ Եյական գծերը կարելի յե ամփոփել հետեյալ կետերում։ Տընտեսությունն ինքնամփոփ բնույթ ունի, այսինքն ամեն մի արտադրող ինքն և կատարում իր տնտեսության անհրաժեշտ հոգսերը, ինքը թե արտադրող և թե վայելող և միաժամանակ։ Այնուհետև արտադրողն իր հասարակական կացությամբ միանգամայն ինքնուրույն վիճակ ուներ, վորովհետև նա կախում չուներ վոչ վաճառականից, վոչ էլ ժողովային վարկավորումից։ Այս վերջին յերևույթի պատճառը շուկայի կամ խալաս չգոյությունն եր, կամ սաղմնային զարգացումը։ Այդ բոլորի հետևանքով՝ գյուղում հասարակական շերտավորում, շեշտուն սոցիալական դիֆերենցիացա չկար, սակավահողության մասին գաղափար չունեյին։ Դասակարգերի հարաբերությունը «նահատական» և. ճիշտ և, կան ազնվականություն, հոգևորականություն, «ռահաթ խալխ», բայց Արովյանը շեշտուն տարբերություններ և դասակարգային բևեռացումներ չի տվել։ Արովյանի գրվածքում տնտեսական խնդիր չկա, այլ քաղաքական։ Բոլորը գոհ են իրենց նյութական վիճակից և միայն յերազում են «քրիստոնյա» պետության գերիշխանության մասին։ Գոհ էին, վորովհետև հողի ժամանավոր տիրապետություն և ճորտություն գոյություն չունեյին. յեթե այդ յերկու յերևույթի սաղմերն էլ յեղել են, այնուամենայնիվ զարգացում չեն ստացել տիրող հասարակական—քաղաքական կարգերի հետամնացության պատճառով, ուստի և իշխող խավերը վոչ հողատեր են դարձել, վոչ էլ ճորտատեր։ Ազնվականներին հողատեր և ճորտատեր դարձրեց «քրիստոնյա» պետությունը։

Այդ պարզ և ամբողջական տնտեսակարգին համապատասխանում են Արովյանի պարզ և ամբողջական հերոսները։ Այդ նույն յերևույթը մենք տեսնում ենք նաև ռուս գրականության մեջ։ Այն չափով, վորքան բնական տնտեսության շրջանն արձագանք է գտել այդ գրականության մեջ, այդ նույն չափով էլ գյուղացության ներկայացուցիչներն (որ. Կարատաև) հանդես են գալիս իրենց պարզ և ամբողջական բնույթով։ Գլեբ Ուսպենսկին, վոր կապիտալի կուտակման և գյուղի քայքայման պատկերն է տալիս, յերևան է հանում ավելի բարդ և յերկպառակված հոգեբանության տեր տիպեր։

Մեր գրականության մեջ Արովյանի պարզ և ամբողջական հերոսները տեղի յեն տալիս Գ. Պռոշյանի գրական գործերում, կերպարանափոխվելով և դառնալով բարդ և հասարակական շերտավորումն ընդգրկող տիպեր։

Արովյանի նկարագրած գյուղը քայքայվում է։ Այդ գյուղի հեռավոր արձագանքները դեռ տեսնում ենք «Սոս և Վարդիթերի» մեջ. այդտեղ իշխում է նույն նահապետական կարգը իր հիմնական գծերով, ինչ վոր նկարագրել է քանաքեռցի վիպասանը։ Բայց յերևում են և նոր կարգի նշանները. ռուսական տերապետությունն արդեն բերել է գրամի կարիք և աղքատ գյուղացիք դանդաղորեն հարկերի ծանրությունից։ «Հացի խնդրի» և «Ցեցերի» մեջ արդեն կատարելապես իշխում է նոր կարգը-քայքայվող

գյուղը առևտրական կապիտալի նախնական կուտակման լծի տակ։ Ցերկրագործ գյուղացին, վոր առաջ բերք էր տալիս պետությանն ու արհեստավորին, այժմ ստիպված է հնչուն դրամով բավարարել նրանց։ Հնչուն դրամ ստանալու համար նա դառնում է շուկայից կախված մի գործոնդ, վորն իր ամբողջ անտեսությունը հարմարեցնում է այդ նույն շուկայի պահանջներին։ Բնության իշխանության հետ միասին նա սկսում է յենթարկվել մի ավելի ծանր իշխանության—շուկայի իշխանությանը։ Փողի կարիքը նրան առաջնորդում է դեպի կուլակի, վաշխառվի դուռը։ Շատ հող ցանելը դառնում է նպատակ։ Զգացվում է հողի կարիք և ծավալ և ստանում սակավահողության յերևույթ։ Գյուղի հասարակական դեկն անցնում է հողատեր և պարտատեր գյուղացուն, այսինքն կուլակին։ Գյուղացին մինչ այդ «դրսի դուշմանին» էր յերդվել, ասելով՝

«Ես մեր դուշման աղգերին
Թեղհացրու, հոգին առ»...

Այժմ տապակվում է «ներսի դուշմանի»—կուլակի ձեռքին։ Գյուղացիք դղում են, վոր այդ «ներսի դուշմանի» ուժը իրենց անկազմակերպ ու անպիտակից վիճակից է բղխում. «Ադվեսը մարագումը ձագ է հանել, մեր թաղու հեզուությունից է. ծառը զանգատ դնաց, ասին՝ կոթը քեզանից է» («Ցեցեր», յեր. 155)։ Հին սերնդի մարդիկ, վորոնք զարմանքով և ապշությամբ տեսնում էին թե ինչպես կուլակը դառնում է «իշխանավոր», բավականանում էին միայն անզոր անեծքով, ասելով. «Ով մեր դեղի հալալը հարամից, ով մեր դառն քրտինքով աշխատած թթխմորի մեջ արյուն խառնեց, ցեց դառավ մեր քիսեն մտավ, դեղն իրար գցեց, մեր դառան պես խնարհ ջահելներին ոձեր շինեց, մեր բղերը փաթաթեց, նրա տունը հրեղեն սուրը մանի» (նույն տեղ, յեր. 177)։

Բնական տնտեսության ստեղծած բոլոր բարոյական նորմաները յենթարկվում են վերադնահատման, նոր արժեքներ, հետևապես և նոր բարոյական նորմաներ են կերտվում։ Կուլակն իր հարստությունն ստեղծում է, կանգ չառնելով վոչ մի կեղծիքի առաջ։ «Դաղախին հոդախառն հաց ուտեցրեց՝ փորահարինք դցեց, նրանց ձիանոնցը ջուրն ընկած գարի ուտացրեցուցրեց, ապտնեց, իր ջերը տաղացրեց» (նույն տեղ, յեր. 30)։ Բայց կուլակը վոչ միայն բարոյական նորմաներն է խախտում, այլ և հայ գյուղի մեկուսացումը։ Այդ գյուղը նա դուրս է բերում իր ինքնափոփ վիճակից և կապում դրսի շուկաների հետ։ Արարատյան դաշտի գյուղը կապեր է հաստատում Թիֆլիզի շուկայի հետ կուլակի միջնորդությամբ։ Զքավոր գյուղացին փոխադրական միջոցներ չունի, շարունակ փողի կարիք ունի, հետևապես և միշտ միջնորդի պահանջ է դղում։ Նա գիտակցում է, վոր «իր ոգուտը ուրիշն է տանում» (յեր. 43), բայց այդ չարիքի դեմ չի կարողանում կռվել, վորովհետև նա հնչուն փողի անմիջական ու ստիպողական պետք ունի։ Իրենց բերքերը գյուղացիք «ջրի գնով» են ծախում։ Իսկ կուլակի «բամբակի հակերը Թիֆլիզ են հասնում, արաղի բեռները Ջալալոդլի յե անց կենում... մենք մեր եաթ-չելաթը մեր դառնը ծախում ենք» *) (յեր. 163)։

*) Ընդգծումը մերն է. Ա. Տ.

Շուկայի հետ կուլակի միջոցով կապվելով՝ «գեղցու արասին քաղքցու մանեթից թանգ է նստում», մանավանդ վոր վերցրած պարտքն էլ մի գլուխ «ճուտեր է հանում» (յեր. 155, 167)։

Կուլակների յերկու ցայտուն տիպ է տվել Պոռշյանը-Միկիտան Սաքոն և Բալասան աղան, մեկը—«Հայի խնդրի», մյուսը՝ «Ցեցերա»-ի հերոսն է։

Միկիտաց Սաքոն պահում է սև ջրի մոտ, գյուղից բավական հեռու, մոլորվի կառավարչատան դիմաց, մի գինետուն, վորը միևնույն ժամանակ նաև հյուրանոց կամ իջևան է։ Սաքոյի անցյալից այսքանն և միայն հայտնի, վոր նա իր պատանեկության որերին գողություններով և ապրել, թրև գալով ըրեյական հանցավորների շրջանում։ Մութ ճանապարհներով մի դուժար ձեռք բերելով՝ նա վեպի սկզբից հանդես և գալիս այդ դումարը շահեցնողի դերում, վորը նրան շատ և հաջողվում իր խորամանկության և ճարպիկության շնորհիվ։ Վերջին հատկություններով՝ նա վոչ միայն շրջակայքի բոլոր գյուղերը, այլ նաև թուլ և ինքնուրույնություններ զուրկ դավառապետին իր ցանցերի մեջ է առնում, նրա պաշտոնը շահագործելով հոգուտ իր գրպանի։ Կաշառքներ և «նվերներ» և վերցնում կառավարության ժանդակությանը դիմող գյուղացիներից և մոլորվի ու մյուս ծառայողների հետ միասին վայելում։ Բացի հարստությունից և փողից նա ուրիշ վոչ մի նպատակ, ուրիշ վոչ մի ձգտում չուներ, ուստի և այդ ձգտմանը դիմում էր միջոցների մեջ վոչ մի խտրություն չդնելով։ Ոգտվում էր վոչ միայն պետական, այլ և յեկեղեցական պաշտոնյաներից, ինչպես և ավազակներից՝ իր վաշխառուական և առևտրական գործերը հաջողացնելու, իր հարստությունն ուռճացնելու համար։ Մուրհակներ կեղծելը, տոկոսների ապորինի բարդումը մի սովորական գործ էր նրա համար, իսկ բաց առաստուրը—հարստահարություն և կոպիտ կեղեքում։ 1854—1856 թ. թ. ռուսական պատերազմն յեկավ ավելի ևս պարարելու նրա հարստությունը։ Գյուղերից զորքի համար ցորեն հավաքելու գործը նա այնպես տարավ, վոր առյուծի բաժինն իրեն մնաց։ Որենքով վորոշված քանակից միշտ ավելին էր վերցնում, ավելի շուտ՝ գլխում, և մոլորվի ու մյուս պաշտոնյաների հետ միասին ավելցուկը խժռում։ Ցորեն թաղցնողներին, ինչպես և ազքատ գյուղացիներին, վորոնք ցորեն չունեցին վաճառելու համար,—Սաքոն բռնությամբ, ծեծով, նրանց ինչքը աճրդի հանելու սպառնալիքով սարսափահար էր անում և այդ յեղանակով առաջադիր նպատակին հասնում։ Մի ամբողջ դավառամաս իր ճանկերի մեջ առած, այս գիշատիչը ծծում էր իր զոհերի արյունը։ Ի՞նչ էր վոչ գյուղացիությունը նրա հանդեպ։—Անմռունչ զոհերի մի շհան։ Մի մարդ կա միայն, վոր կուլակների արարքը մերկացնում է։ Դա «ճշմարտախոս Հաքուլն» է, վորի ինքնուրույն զոյության փաստը հեղինակը չի պատճառաբանել. ավելի շուտ դա հեղինակի զայրույթն է, քան տարկայական իրողություն. (տես «Հայի խնդիրը», յեր. 174)։

Ցերկրորդ և ավելի կատարյալ կուլակն է—

Բալասան աղան, վորը Սաքոյի հետ համեմատելով՝ մի իսկական

«ցեցավետ» է։ Հարստության հիմքը դրել է յեղբայրներին զրկելով։ Պատերազմից հետո նոր հոյակապ տուն և շինել, ավելի հարստացել. «մեղը ծախողը՝ մատը կ'լպստի»։ Վողջ գյուղն այժմ նրա ստրուկն է։ Բոլոր պաշտոնատար անձինք—տանուտեր, դատավորներ, գրագիր, քահանա—նրա համհարզներն են։ Իր դրամագլուխը հաշվում է 50 հազարից ավելի—հավաքելիք տոկոսներով՝ 70.000։ Ջնչին գումարներով հազարներ արժեցող այգիների տեր և դարձել։ Ապորինի գործեր է կատարում և կաշառք ստանում. պաշտպան է կանգնում քրեական հանցավորներին, ամուսնության գործերի մեջ է խառնվում, և այլն։ Պետական աստիճանավոր է, բայց թե հատկապես ինչ պաշտոն ունի—վնալից չի յերևում. մի բան պարզ է, վոր ուզածին կարող է բանտ ուղարկել, այնքան հեղինակավոր է։ Վողջ գյուղը սարսուռ է զգում նրա առաջ. միակ բանգետ, լեզու իմացող, կապերի տեր մարդն է։ «Այս ուլեզդումը մարդ չկա, վոր ինձ պարտ չլինի» ասում է նա պարծանքով։ Շահը գլխից է հաշվում (20—40%) և մուրհակ առնում։ Բաղաքում և ապրում և իր պարտապաններից շարունակ «նվերներ» է ստանում բերքերով։ Գյուղացիներին սովորեցնում է «ջահել—ջհուլների» բերանը փակելու համար, նրանց կառավարության ձեռքը մատնել իբրև խռովարարներ։ Նա անհավատ է. պնդում է, վոր քրիստոնեական բարոյականությունը տերտերներն են հնարել՝ հիմարներին իրենց ուռկանը ձգելու համար. «շատ լավ են արել, բան նրանք ապրելու չեն»։ Գյուղի բոլոր պաշտոնատար անձինք իր պարտապաններն են, վորոնց նա ընտրել է տալիս զեղծումներ գործելով։ Նրա համհարզներից մեկը՝ գրագիր Տաճատը «մի՝ տարում հինգ մանեթին հինգ մանեթ շահ է առնում»։ Այդ գրագրի միջոցով իր բոլոր մուրհակները կեղծում է՝ գումարները փոխելով և մեծկակ դարձնելով։ Ռուսացման քաղաքականության կողմակից է. ուզում է պետական դպրոց բաց անել տալ (հեղինակը գրաքննությունից վախենալով դպրոցի անունը չի տալիս—«միանգամայն ազատակար հաստատություն»)։ «Հոգևորականին յեթե ասի. փիլոնդ հանի մեջիդ մտի—անխոս կ'կատարի»։ Լրտեսում է գյուղի անց ու դարձը, հակառակորդների ինչքը այրել է տալիս, և այլն։

Ինչպես տեսնում եք, Սաքոն այս վագրի մոտ մի սոսկ կատու յե. յերկուսը միատեսակ ծագում ունենալով, մեկը մյուսի զարգացումն է։ Վերջ ի վերջո Սաքոն մի խանութպան է և մի քանի գյուղի հետ գործ ունի, մինչդեռ Բալասան աղան ավելի մեծ մասշտաբով է կեղեքում։ Դա կապիտալի սկզբնական կուտակման շրջանն է, վորի մի հանգրվանը Սաքոն է, բարձրակետը՝ Բալասան աղան։ Պռոշյանը չի նկատել հետագա զարգացումը։ Հին սերնդի բերանով գրվատելով նահապետական գյուղը, տնտեսական քայքայումը մարդկանց փչացածության արդյունք է համարում։ Արդարասեր ցարիզմի և կաբեկցող յեկեղեցու կողմակից է. տնտեսական զարգացման ընթացքը, վոր ժխտում է թե մեկը և թե մյուսը—աչքովը չի ընկել։ Թեև-փոր բնել է կուլակության տնտեսագիտական քննությունը տալ, բայց ավելի շուտ նրան հաջողել է յերևույթի բարոյալիտությունը, քան քաղաքա-

կան-հասարակական բնույթագիրը։ Նրա հերոսներին սաղական է տնտեսագետ Խրյաշչեվի կարծիքը կուլակության մասին. «կուլակ մականունը,— ասում է նա,—դասակարգի վոչ թե ընդհանուր, այլ մասնակի հասկացողություն է. նա բնորոշում է անձի բարոյական հատկանիշը, ինչպես վոր կան համապատասխան վորակումներ—սրիկա, խաբեբա, և այլն»։ Այդ բարոյական բնորոշումն ընդլայնել է Լենինը, պնդելով թե՝ կուլակ և հարուստ գյուղացի հակադիր յերևույթներ չեն, այլ մի և նույն տնտեսական փաստի տարբեր ձևերն են։ Գյուղացին բանվոր է վարձում, թե արտադրությունն ընդլայնում, հողի թե մանրուքի վաճառականությամբ է զբաղվում կամ փող է աճեցնում, վաշխառությամբ պարապում—նա ներկայացնում է մի ամբողջական տնտեսական տիպ (տես յերկու հեղինակի հիշածս գրվածքները)։

Ղ. Աղայանը փորձել է այդ տնտեսական տիպը տալ—հարուստ գյուղացու, հարուստ հողագործի տիպը։

«Գյուղացիք սովորություն ունին վարելահողը բաժանելու իրենց մեջ ամեն տասը կամ տասնհինգ տարին մի անգամ։ Բայց ամեն անգամ հեշտությամբ չեն բաժանում. աղքատ հողատերերը սկսում են կռվել շատ բաժին ունեցողների հետ։ Ցավ յեթե մի կերպ բաժանում են, ավելի ուժեղները թույլ չեն տալիս իրենց հողին ուրիշը մոտենա։ Նվազած ոջախների հողերը վարում են զորեղները...» (տես «Յերկու քույր», յեր. 35)։

Բացի այդ «ներքին ցեցերից», գյուղացիք ունեն նաև «արտաքին ցեցեր»։ Դրանք կալվածատեր թավադներն են՝ Վրաստանի հայ գյուղացիների համար։ Հողային բոլոր վեճերը, վոր գյուղացիք ունեն նրանց հետ, կառավարությունը վճռում է թավադների սգտին, վորովհետև «խաղնեն ել եր թավադների ձեռքին, դիվանխանեքն ել»։ Թավադները տասը չեն, քսան չեն, «քանդ շուն շատ են», ասում է գյուղացիներից մեկը։ «Ահա եսպես մեր բոլոր տեղերը մնաց դրանց. մենք ել վոչինչ չունենք. վոչ հող, վոչ ջուր, վոչ ծառ, վոչ խոտ. ամենի համար ել փող ենք տալիս, են ել մեկն յերկուսով ամեն տարի թանգացնում են» (նույն տեղը, յեր. 114)։ Իսկ յերբ գյուղացիք թավադների դեմ դանգատի յեն գնում, «շլինքներիս խփելով՝ դուրս են անում»։ Ինչու։—Վորովհետև հաճախ թավադն ու դատավորը, թավադն ու վարչական պաշտոնյան մի և նույն անձն են լինում։ Գյուղացիներին «իշի պես բանեցնում են, վոչխարի պես խուզում»։ Թավադների դեմ ըմբոստացողները փթում են Մետեխի բանտի նկուղներում։

Ղ. Աղայանն իր այդ դիտողությունները խտացնելով՝ տվել է մի կուլակի տիպ—

Ճաղարանց Թաքոսին, վորի ընտանիքը մի ամբողջ գյուղի համար կատարյալ պատուհաս է։ Տանուտեր, մոլրով, դատավոր—նրա ընտրած կամ նշանակած մարդիկն են, նր սնից կաշառված հլու կամակատարներ։ «Ես Ճաղարանց քոփակիցը մարդու խեր չի հասնիլ»—ասում է աղքատ գյուղացիներից մեկը։ Նա «սաղ գյուղը քանդում, տակն ու վրա յե անում», շարունակ գյուղացիներին սպառնալով «մոլրովի» անունով թե, սպասեք

նա գա, ձեր «կաշին մաշկել եմ տալու»։ Նա վոչ միայն տնտեսապես ուժեղ, այլ և ֆիզիքապես. նա իր խոսքն և առաջ տանում բազմաթիվ վորդիների և թոռների միջոցով։ Փողի ուժի հետ միասին, նրանք բանեցնում են և բազկի ուժը, թե ջրաբաժանության, թե հողաբաժանության և թե հարկաբաժանության ժամանակ։ Մի աղքատ գյուղացի միայն համաձակվում է ըմբոստանալ նրա դեմ, բայց նա յել ստիպված եր գյուղը թողնել, փախչել լեռները (այսպիսի փաստ հիշատակում են հայ գյուղագիրներից շատերը)։ Գյուղն այնուհետև մնում է Ճաղարանց Թաթոսի և յուրայիններիի իշխանության տակ։ Նրանք կատարյալ վամպիրներ են, վորոնք իրենց շահերով միացած են թավադների հետ և վերջիններիս հավատարիմ գործակալներն են գյուղում։ Ցեթե գյուղացիք հրաժարվում են ծանր բահրան տալ, Թաթոսը սովորեցնում է թավադ Թուլաձեյին գյուղական վողջ տավարը գավթել և հարկադրել գյուղացիներին վճարելու հողահարկը։ Ցեվ այլն։ Գյուղացիք «ճաղար շուն» են անվանում այդ կուլակին։

Մուրացանի կուլակն ու աղքատ գյուղացին տարբերվում են Աղայանի վրաստանարնակ հերոսներից։ Աղքատն անչափ աղքատ է, դիմադրականությունը նվազադույն աստիճանի հասցրած։ Կուլակը զուրկ է «թավադների» պաշտպանությունից և առաջ է գնում սողալով, յերբեմն լաց է լինում—խղճահարություն զարթեցնելու համար։ Տարբերության պատճառը Մուրացանը համարում է մեր հողի անարդյունավետությունը. հայ գյուղացու սակավահողությունը, մեր գյուղի լուսավոր կենտրոններից հեռու գտնվելը և հայ գյուղացու կուլտուրական հետամնացությունը, մի բան, վոր բացատրվում է հայ բուրժուազիայի յերկրից դուրս զարգանալու հետևանքով։ Բալասան աղայի հաջորդներն այլ ևս վագրեր չեյին, այլ «տզրուկներ», այլ ևս մեծ ճանապարհի ավազակներ չեյին, այլ մանր գողեր, վորոնք իրենց «գործը» թաքցնում են և վոչ թե «արդար իրավունք» համարում։

Մուրացանի գյուղը տնքում է փողի ծանր կարիքի տակ։ Գյուղացին կպել է իր «արյունքամ հողին», լծել է աշխատանքի դեռահաս մանուկներին անգամ՝ իր «ինքնուրույնությունը» պահպանելու համար։ Բայց այնուամենայնիվ ծայրը ծայրին չի կարողանում հասցնել, փողը շատ դժվարությամբ և ձեռք ձգում, վորովհետև կարիքները շատ շատ են, իսկ միջոցները—չնչին։ Այդ հանգամանքից ոգտվում է վաշխառուն։ Գյուղացին պարտք է վերցնում թե փողով և թե բերքով, սերմանցուով։ Թեև վերջինս գյուղացուն ավելի թեթև յե թվում, բայց փաստապես ավելի ծանր է, վորովհետև ստիպված է «ջրի գնով» իր արդյունքը ծախել կամ հանձնել պարտատերին և նորից պարտքի կարիք զգալ։

Մուրացանը «Նոր Դար» լրագրի հրապարակախոսությունը հայ գյուղացիության հասարակական արժեքի մասին ընդունում է և գեղարվեստորեն պատկերացնում այն։ Կապիտալիզմը քայքայում է գյուղը, իսկ վերջինս հայ ազգայնության հիմքն է. գյուղացիությունն է ստեղծում հայ հայրենիք, բուրժուազիան ոտարանում է և հայրենազուրկ դառնում։ Նրա իդեալը վոչ թե գյուղը թողնող և քաղաք գնացող գյուղացին է, լինի հա-

բուստ թե աղքատ, այլ գյուղում պինդ նստող, իսկ յեթե քաղաք և գնացել՝ այդ տեղից գյուղ վերադարձող և հողի վրա հաստատուն արմատներ ձգող գյուղացին։ Իր «Առաքյալ» վեպում նա իդեալացնում է ուստա Պետուն, վոր մի հյուսն է, յեղել է Բագու, Թիֆլիզ, յերկար աշխատել և ոտարության մեջ, բայց այժմ վերադարձել է գյուղը, տուն շինել և ուզում է ապրել «հալալ և պարզ մարդկանց շրջանում դինջ կերպով»։ Մուրացանն ատում էր «ազգային կապիտալիզմ» դրվատող «Մշակ» լրագրի հրապարակախոսությունը, շեշտելով վոր «լուսավորությունը» բարքերն այլանդակում է և հին, պարզ հարաբերությունները վատթարացնում։ «Աշխարհի շառը շատացել է» միաբերան պնդում են Մուրացանի գյուղացիները։

Մուրացանի հասարակական իդեալն է՝ գյուղի քայքայումը խափանել, գյուղացիության ամբողջությունը հողի հետ կապել և նրա տնտեսությունը բարվոքել։ Այդ բոլորի համար վոչ մի քաղաքական, վոչ մի տնտեսական հեղաշրջման խնդիր չի դնում, դասակարգային կռիվ չի քարոզում, այլ յեթե քարոզել կարդում է՝ դա խաղաղ շինարարության գործն է, վորն իր ուսերի վրա պիտի վերցնի ինտելիգենցիան։ Կան Պետրոս Կամսարյաններ, բայց կան և Աննաներ։ Մուրացանն իր հույսը դրել է վերջիններիս վրա։ Ի հարկե, գյուղ փրկելու այդ ծրագիրն ուտոպիական է այն տեսակետից, վոր վոչ մի հերոս չեր կարող խափանել տնտեսական կյանքի զարգացումը և նրա անիվը հետ տանել. կապիտալիզմը կարելի յե հաղթահարել այն ընդունելով և վոչ թե անտես անելով, ինչպես վարվում է Մուրացանը։ Դասակարգային կռիվն անտեսելով՝ նա դարձել է բարոյական քարոզիչ, այսինքն մի մարդ, վոր «միշտ նկատի ունի առանձին անհատների կատարելագործությունը, ուստի և բնականորեն կանգնում է ինդիվիդուալիզմի տեսակետի վրա» » (Плеханов, т. XIV, стр. 223):

Այդ պատճառով էլ Մուրացանի մոտ վոչ թե մասսան է ձգտում ինքն իրեն փրկել, այլ կարեկցող հերոսներն են նրան առաջ տանում, անձնազոհություն գործելով։ Իսկ այդ անձնազոհ հերոսների գյուղական գործունեությունն անհասողիչ է հենց այն տեսակետից, վոր Մուրացանը վոչ պետություն է տեսնում, վոչ քաղաքականությամբ զբաղվում։ Նրա հերոսներն ազատ համարձակ գործում են գյուղում—ուսում են տարածում, փոխադարձ վարկի ընկերություններ բաց անում աղքատ գյուղացուն իրավաբանական ոգնություն ցուցնում, և այլն։ Մինչդեռ մյուս հայ հեղինակները, ինչպես Բաբկենցն ու Փափազյանը, ցույց են տվել այն անհնարին պայմանները, վորոնք ստեղծում են ցարիզմն ու կուլակությունը՝ խափանելով «սրտացավ» ինտելիգենտի գործը հայ գյուղում։ Այդպես էլ Մուրացանը իրար կողքի յե դնում մալականների Սեմյոնովկա և հայերի Զիրուխլու գյուղերը վոչ այնքան քաղաքական, վորքան մանկավարժական տեսակետից։ Ցեմ պարզ է, վոր քաղաքականությունը մեջ տեղից վերացնելով, չի պարզում, վոր Սեմյոնովկայի «պայծառությանն» պատճառը հենց այն եր, վոր ռուս կառավարությունը ռուս գյուղացիների արտաքաղթը խրախուսել է՝ նրանց պահանջը ռուս կալվածատիրության նկատմամբ կասեցնելու համար։ Նա

խրախուսել և արտադրությունը տնտեսական ու ռազմական տեսակետից։ Նոր-բեկներին դրել և բացառիկ պայմանների մեջ իր պետականության դաշնակից դարձնելու համար։

Այդ բոլոր պայմանները Մուրացանի կուլակին ինքնահատուկ բնույթ են տալիս։ Նա հարուստ է, ճիշտ է, բայց նրա հարստության և ռուս գյուղացու հարստության մեջ կա այն խոշոր տարբերությունը, որ հայ հարստի հարստության հոդվածները թվելիս՝ Մուրացանը հողի մասին վոչինչ չի ասում։ Ի՞նչ ունի հարուստ հայ գյուղացին.—1 կամ 2 հազար ռուբլի, 20—30 գլուխ տավար, մի «պուճուր» ջոկ ձի, մի քանի գրաստ։ Հողի մասին վոչ մի խոսք։ Այդպիսի հարուստն ապրում է մի գյուղում, ուր տները գետնափոր են, լույս ստանում են յերթիկից, փողոցները կեղտոտ են, ծուռ ու նեղ, դռնակները—ցածուն։ Ռուս պաշտոնյան և կուլակն են այդ գյուղի հոգեհանները։ Կուլակներից մեկն ի՝—

Խոջա Միրզան—մանր ու շարժուն աչքերով, խորամանկ ու լպիրշ հայացքով, ջարդած քթով, որ «անշուշտ իր պատմությունն ուներ», լերկ յերեսով մի ոգեղ մարդ եր։ Մանուկներին նա թվում եր հեքիաթի դեվերից մեկը, որի մասին լսել եյին պապից կամ տատից։ 20 ռուբլի տալով աղքատ Սայուն, 4 տարի հետո այդ պարտքը հասցնելով 131 ռուբլու, այժմ յեկել և աճրդի հանելու նրա ստացվածքը՝ մի կոմը ու ձին և «ինչ կլի կընկա շորերն ել»՝ դատարանի կատարողական թերթը ձեռքին։ Խոսում է աղջատված ռուսերենով։ Հաշիվները տեսնում է իր ձեռքի համբիչով։ Իր բարեմասնությունների համար վկա յե կանչում «սաղ մհալի ժողովրդին»։ Կողոպուտական տոկոսն իր «հալալ աշխատած» փողն է հավարում։ Վախկոտ է։ Ցերը Կամսարյանն սպառնում է, քիչ է մնում, որ լաց լինի։ Խոջա Միրզան «ավառառությունն տենչ ունի»։ Խորամանկ է. կառապանին կաշառք է տալիս, որ ինտելիգենտին գյուղից շուտ հեռացնի։ Կառապանը միամտորեն կարծում է, թե Խոջան ինտելիգենտի լավ բարեկամն է։ Նման միամտություն ունի և աղքատ Սային, որ իր հոգեհանին բարերար է համարում և «քե դուրբան» շոյիչ բառերով հետը խոսում։ Ցերը կոմը ու ձին պարտատերը չի տանում, Սային ուրախությունից քիչ է մնում գժվի։ Նույն ուրախությունն են արտահայտում նաև նրա թոռները, որոնցից մեկը մի փողաքշիչ զրույց է սկսում կովի հետ, մի զրույց, որ շատ նման է Ագայանի գրվածքներից մեկի մի տեսարանին («Մուսինի գանգատը»)։

Վոչ միայն գրելակերպի, այլ և տշխարհայացքի սահմաններում շատ նման գծեր կան Մուրացանի և Ագայանի միջև։ Նրանք, ինչպես Դյուշանը կասեր՝ «աղգագից» գրողներ են, պատկանում են միևնույն հրապարակախոսական և մասամբ գրական դպրոցին։ Մասամբ ենք ասում, որովհետև Մուրացանը շատ ավելի ընդարձակ մի տաղանդ է, քան Ագայանը։

Ի՞նչ նման գծեր կան Մուրացանի և Ագայանի աշխարհայացքի միջև։ Ագայանն ևս դասակարգային կռիվ չի ընդունում։ Գյուղացին շատ յերջանիկ կլինի, յեթե ինտելիգենտը նրան ոգնի մտավոր խավարը հեռացնելու և հողը լավ մշակելու համար։ Գյուղում ավելի շուտ բարոյական կա-

տարելագործման խնդիր է դրված, քան տեսական-տիրական հարաբերությունների հեղաշրջման հրամայական պահանջ։ Ազգայնության խարիսխը գյուղն է, հայ հայրենիքը հաստատուն է գյուղացու միջոցով։ Ճիշտ է, խախտվում է հայ գյուղի ամբողջությունը, հայ նահապետական կարգ ու ու սարքը, բայց դա «նորամուտ» յերևույթ է, պետք է բարոյական կռիվ հայտարարել նման «լուսավորության» դեմ։ Գյուղացիությունն իր բոլոր տարրերով անխտիր մի ֆրոնտ պիտի ստեղծե «քաղաքի» ավերիչ «վոգու» դեմ, պանդխտության դեմ, վոր վոչ մի անհրաժեշտություն չի ներկայացնում, վորպես այդպիսին, այլ «ժամանակավոր մի չարիք է»։

Այդ ժամանակավոր չարիքի դեմը պետք է առնի գյուղական ինտելիգենցիան—ուսուցիչը, դատավորը, տանուտերը, վորոնք իրենց կրթությունը պիտի գործադրեն հոգու «ընդհանրության շահի»։ Գյուղացիները վախենում են «նոյի ագռավներից», այսինքն այն կրթված գյուղացիներից, վորոնք քաղաք գնալով և լուսավորվելով՝ գյուղ չեն վերադառնում։ Եթե վերադառնան, յեղած հողն էլ բավ կլինի՝ բնագիտության տվյալների հիմամբ մշակելու և անկարոտ ապրելու։ Մինչդեռ գյուղացին իր տգիտության պատճառով բնության պատուհասների դեմ անճար է, վորովհետև կարեկցող և ղեկավար ձեռք չունի, վոր նեցուկ հանդիսանա իրեն։ Այդ նեցուկի չգոյության պատճառով կուլակությունը կամ «գյուղակերությունը» դառնում է մի չարիք, վոր քայքայում է համայնականության բարերար վոգին, գյուղը մուծելով քաղաքի «անբարոյական» վարքն ու բարքը։ Բոլոր չարիքների պատճառը հողից կտրվելն ու «անտուն» տվյալելն է։ «Հողի իշխանությունը» խափանելով՝ գյուղացին դառնում է անղեկ և անառագաստ մի նավ, վոր յերերում է անկվան։ Համայնքի իրավաբանական կացությունն ոգուտ է բերում կուլակության։ Պետք է պայմաններն այնպես փոխել, վոր բոլորի համար նա բարիք դառնա։ «Բոլորի» դաղափարախոսը կարող է և պետք է դառնա գյուղասեր ինտելիգենցիան։

Մուրացանի և Ագայանի հասարակական աշխարհայացքն ընդունելով, Ճուղուրյանն ու Մալխասյանը գծել են այն պայմանները, վորոնք ստիպում են գյուղացուն թողնել գյուղը և անցնել քաղաք կամ, յեթե գյուղում էլ մնում է, դիմել կողմնակի աշխատանքի։ Մեկը «Մոռացված աշխարհի», իսկ մյուսը «Հորոտ մորոտի» հատորներով շեշտել են կամ կուլակության, կամ կալվածատիրության ստեղծած պայմանները։ Ճուղուրյան հարցնում է. ինչո՞ւ է գյուղացին թողնում գյուղը։—Վորովհետև «նրա ջանը կերել են քոխվա, գզիր, քեթխուդա, հարուստ, ձիավոր յասավուլ, գեղի և դրսի դատավորներ»։ Բոռ Զիպոյի տղա «Կնդղտորը» (տես հատոր I) այն «ղուշերից» մեկն է, վոր գյուղացու «միսն ուտում է։ Նրա շահագործման մասին գիտեն գյուղացիք, բայց չեն դանգատվում, վորովհետև «քյասիբությունի մեջքը կոտրվի, վախում են»։ Ի՞նչն է կազմում «Կնդղտորի» ուժը։ Այն, վոր գյուղացիք աշխատանքի՞ն գալիս գրեթե տկլոր, քաղցած, և կապալառուն, ինչպես ուզում է, պայմանավորվում է նրանց հետ։ Գյուղի կուլակի ձեռքից փախչում են՝ կապալառվի ձեռքն ընկնում։ Իսկ քոխվեն աղ-

քան գյուղացու գանգատներին միշտ և միալար պատասխանում է «գիժը կդառի, խելոքը կուտի» (յեր. 74)։ Աղքատ Պետին միայն յերկու որավար աշնանացան ուներ։ Նա հնձում է, բայց յեզ չունի, վոր կրի, կալսի։ Յեզները կուլակներն են տարել պարտքի դիմաց։ Սրանից-նրանից յեզ ուզելով՝ կալսում է, բայց մյուս տարվա համար ցանքս չպիտի կարողանա անել—նրա առաջ արդեն քաղաքի ճանապարհը բաց է։ «Անձրև ա վայ ա, արև ա վայ ա, վատը հու վատ ա, լավն էլ անիծված ա». Ճուղուրյանը մեջ է բերում այս ժողովրդական առածը ցույց տալու համար, թե ինչպես գյուղի կուլակները միշտ միարանվում են, յերբ իրենց շահերին դիպչող մի պաշտոնյա յե ընտրվում և նրան անմիջապես հարկադրում են հեռանալու (տես հատ. II., յեր. 78)։ Կուլակները վոչ միայն «պարտքակոխ» են արել աղքատ գյուղացիներին, այլ և պատերազմի ժամանակ վողջ «կոոը» ձգել են նրանց շլնքին։ Իսկ հասարակական վճիռների ժամանակ թուլերը միշտ անցնում են «զորբաններին» կողմը, վորովհետև վախենում են. «մեզ կխորովեն, կուտեն», յեթե այդպես չվարվենք, ասում են աղքատները։ «Ասեղ մաշկող, քիսա լցստող, հոգի ծախող» այդ կուլակներից գյուղացիք փախչում են քաղաք կամ ընկնում են կապալառուների ճանկ։ Միայն «մարդու ձեռից» չե գանգատվում գյուղացին, այլ և «անտեր ճանապարհներից», վորոնք «կարում են նրան աշխարհից» (տես հատոր III, յեր. 71)։

Գյուղացուն նեղելու համար կուլակի հետ դաշնակից է կալվածատերը։ Հնձի ժամանակ է. գյուղացին վերջացրել է հացի պաշարը, այլ ևս ընտանիքը ուտելու բան չունի։ Արաը հնձել է, բայց գարին ծեծել չի կարող, մինչև վոր կալվածատերը հրաման չտա, մինչև վոր իր «որինավոր բաժինը» չհաշվի։ Այնքան է բանը ձգձգվում, վոր գյուղացին ինքնակամ կալսում է։ Հետևանքն այն է լինում, վոր կալվածատերն ու տանուտերը ծեծում են գյուղացուն։ Վերջինս ծեծով է պատասխանում։ Այնուհետև՝ բանտում մեռնում է (տես «Հորոտ Մորոտ», հատոր I, յեր. 82).

Մուրացանից հետո յերկրորդ հեղինակը, վոր «Նոր դար» լրագրի հրապարակախոսական դպրոցի գյուղական դիտողությունները գեղարվեստական տիպերի յե վերածել, դա—Ա. Ագապյանն է։ Նա տվել է կուլակների յերեք ցայտուն տիպ. Ցեփրեմին, Սարգսին և Ղուկասին. առաջինը «Մուսինի դանդատը» պատմվածքի հերոսն է, յերկրորդը—«Գյուղի ճամփեն» («Նոր դար», 1896 թ. № № 183—185), իսկ յերրորդը—«Մարդասպանը» («Նոր դար», 1896 թ. № № 197—225)։

Ցեփրեմ. այս կուլակի տիպը գծում է Ա. Ագապյանը «գյուղական դատարանի բարոյական աշխարհին» զուգընթաց։ «Աչքս բացած որից,—ասում է նա,—յերբեք տեսած չեյի յես, վոր գյուղում արդար դատաստան կարվեր հարստի և քասիբի, ուժեղի և թույլի մեջ»։ Ցեփրեմին և այդ դատարանին գոհ է դառնում աղքատ Մուսինը։ Ո՞վ եր Ցեփրեմը։ Դա մի գյուղական «գազան» եր, այսինքն կուլակ։ Նա հարուստ և «շատվոր» (տղամարդիկ շատ ունեցող) ընտանիքի անդամ եր։ «Շատվորությունը,—ասում է Ագապյանը,—գյուղում այն նշանակությունն ունի, ինչ նշանակություն—կա-

պիտալն առևտրական աշխարհում։ Ցեփրեմի հարստության սկիզբն իր պապն էր դրել, վոր վերադարձել էր Դաղստանի պատերազմից, բերելով հետը փող, վորն այնուհետև շահեցրել էր. «փողերն սկսում են ճուտեր հանել»։ Ցեփրեմի հետ վեճի յե մտնում աղքատ Մուսինը, մի մարդ, վորին կուլակները «տկլոր Մուսին» էին անվանում, վորովհետև նա չկարողանալով իր գլուխը պահել՝ հարուստների մոտ «մշակություն» էր անում։ Գյուղական պաշտոնեությունը կուլակի կողմն է պահում, չնայած նա անարդարացի յեր։ Ինչու։—Վորովհետև նա մի մարդ իր, վոր կարող էր «մանեթով գլուխ ցցել»։ Ամենքին կաշառում է և գործն իր ոգտին վճռում։ Մեծում են Մուսինին, աչառը ձեռից խլում, բանտարկում և դռնեդուռ գցում։ Ցեղը խլելով Մուսինի ձեռից, նրա «վիղը կտրում են», վորովհետև «այդպիսի աղքատն իր մի հատ յեղն ընկերացնում է ուրիշ իր նման մի գյուղացու նույնպես մի հատ յեզան հետ, և այդպիսով ստացվում է մի լուծ յեզը, վոր հերթով բան է անում՝ յերկու ընկերացած գյուղացիների համար»։ Մուսինը ստիպված պանդխտում է, թողնում է գյուղը և տեղափոխվում քաղաք։ Ի՞նչպես են վերաբերվում մյուս աղքատ գյուղացիները Մուսինի դժբախտությանը։—Անտարբերությամբ։ Նրանց մեջ «պակաս է գիտակցությունը», բացատրում է հեղինակը։

Սարգիսը—«կծան» վանեսենց տանիցն է. «հում քոմակ է, համ հարուստ»։ Այն ժամանակ է գյուղական նոր ճանապարհ շինելու մասին մտածում, յերբ իր սայլը կոտրվում է, մինչ այդ անտարբեր էր։ «Մեղք» էր համարում ճանապարհ բաց անելու համար «կտրել» Աթոյի և մյուսների այգիները, վորովհետև նրանք էլ իր պես «կծաններից» էին։ Բայց վորովհետև «խալխի փիս վախտն էր, բոլորն էլ ատաճները սրել էին», Սարգիսը զիջում է վոչ միայն Աթոյի, այլ և մյուս «կծանների բաղը կտրել»։ Յերկու «կծան» յեղբայր հակառակում են, բայց գյուղացիք նրանցից մեկին ծեծում են, իսկ մյուսը՝ մաղապուրծ փախչում է։ Ծեծողը «կատաղած ամբոխն էր»։ Տեսնելով վոր բազկի ուժով վոչինչ չի կարելի անել, մի այլ «կծան»—Դավիթը—ուզում է կաշառքով փրկել իր այգին։ Նա յերկու առած է շարունակ կրկնում. «Սարին ասել են՝ ինչից ես վախենում։—Փողից»։ «Կաշառքը մութ տեղը լույս է տալիս»։

«Գազան» Ղուկասը. մինչդեռ Ցեփրեմի տիպը գծելիս Ագապյանը գյուղական դատարանն է մերկացրել, «գազան» Ղուկասի տիպի միջոցով «պետական դատարանի բարոյական աշխարհի» քողն է պատռում։ Ցերը Ղուկասը կատարում է վոճիրը (սպանում է Գեվոյին), գյուղացիք յերկար ժամանակ չեն ուզում նրան «արդարադատության» ձեռքը տալ, վորովհետև մտածում են թե՝ էլ «ռուսի ձեռքից» չենք պրծնի։ Գյուղացիք այն կարծիքն ունին դատարանի մասին, ժանավանդ յերբ հարուստ մարդ է դատվում, թե «անողը պրծավ, ասողը—վոչ»։ Այսինքն միշտ աղքատներն են տուժում. գործդ դատարան ընկավ, նշանակում է՝ «վրադ գել բերիր»։ Պատժից փրկվելու համար Ղուկասն իր հարստությունն է մեջ բերում. ծախում է այգի, մի լուծ յեզ, բայց չի ազատվում։ Դատաստանի «բարոյա-

կան աշխարհին» զուգահեռաբար Ագապյանը գծել է գյուղացիների «բարոյական աշխարհի» նկարագիրը։ Հեղինակը դժգոհությամբ նկատում է, որ գյուղացիների մեջ այլ ևս միաբանություն չկա. «ռահաթը իրար տալիս, դայ է անում»։ Վոչ միայն անմիաբանությունը, այլ և «վարք ու բարքի» այլասերումը ծայր է տվել. «լուսավորությունը» գյուղը դժոխք է դարձրել։ Որինակ՝ Վարդիթերը, որ իր շատ գծերով նման է Ա. Աղելյանի «նոր կանանց»։

Ագապյանի և Աղելյանի մեջ այնքան նմանություն կա, որքան թե մեկը և թե մյուսը կրել է Գլեբ Ուսպենսկու ազդեցությունը և պնդել թե «հողի իշխանության» ուժի թուլացումը գյուղացու բոլոր թերությունների սկզբնապատճառն է։ Բացի դրանից՝ նրանք իրենց ընդհանուր աշխարհայացքով շատ նման գծեր ունեն։ Այսպես, որինակ, յերկուսն էլ կուլակությունն են համարում հայ գյուղի ամբողջության խախտման պատճառը, պանդխտության ծավալման շարժառիթը, որի հետևանքով գյուղ են մտնում նոր, բայց «վատ սովորություններ»։ Գյուղը փրկելու ճանապարհի նկատմամբ ևս նրանք միևնույն կարծիքն են ջատագովում։ Ինտելիգենտը պիտի փրկե հայ գյուղը կործանումից, իր խորհուրդներով և «բարի որինակով» գյուղացիներին «միաբանության» հրավիրելով։ Յերկուսն էլ դասակարգային կռվի, հեղափոխական ընդվզումների կողմնակից չեն։ Խաղաղ զարգացում, կուլտուրական ձեռնարկներ—ահա միջոցներ, որոնք վոտքի կ՚կանգնեցնեն մեր գյուղը։ Ինտելիգենտը պիտի գյուղ գնա «բարոյական պարտքի» դրդումով. հակառակ դեպքում՝ նա կ՚լինի «նեղ յեսասեր», «անպարտաճանաչ» և «անխիղճ»։

Ագապյանի և Աղելյանի միջև այդ բոլոր նմանությունները շեշտելով, չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ մեղրեցի հեղինակը մեր գյուղագիրների մեջ առաջինն եր, որին մեծ չափով գրավել և վոգևորել է կոոպերացիայի գաղափարը։ Անտայման այդ բաժնում նրա վրա խոշոր ազդեցություն է արել ռուսական հասարակագիտական դպրոցը, առանձնապես Նարոդնիկությունը և Չերնիշևսկու հրապարակախոսությունը։ Թողնելով հայ հրապարակախոսությունը մի կողմ, պետք է ասենք, որ մեր գեղարվեստական գրականության մեջ, հատկապես վիպական բաժնում, կոոպերացիայի գաղափարն առաջ է մղել Բաֆֆին իր «Խենթի» յերազում ուտոպիկ ձևով։ Բայց Աղելյանը «ուտոպիան» իրականություն է դարձնում և կոոպերացիայի գաղափարը վոչ միայն դրվատում է, տեսականորեն ընդունում և պաշտպանում, այլ և գործնականապես նա առաջինն եր, որ մեր գյուղական իրականության մեջ կոոպերացիան մարմնացնում է, իր հայրենի Մեղրիում, 1900 թ., բաց անելով սպառողական կոոպերատիվ։

Աղելյանի ինտելիգենտները գյուղում գործում են յերկու միջոցով. քարոզում են և լրագրում «մերկացումներ» անում։ Բայց ընդհանրապես նրանք կռվում են կուլակության առաջ բերած հետևանքների դեմ, առանց պատճառները վերացնելուն ձեռք տալու։ Գյուղացու բոլոր թշվառությունների պատճառը նրանք տգիտությունն են համարում, իսկ քաղաքից գյուղ վերա-

դարձող «պանդուխտները» կարծում են թե կուլակներին «վախեցնելով», կարող են չարիքը վերացնել. մի կուլակի ծեծելով՝ նրանք միամտություն ունեն կարծելու, թե գյուղը պիտի ազատվի նրա ձեռքից։

Բացի Գլեբ Ուսպենսկուց՝ Ադելյանն իր աշխարհայացքով բավական ազդված եր նաև Գ. Արծրունուց։ Իր «Տգիտության զոհերը» վեպի ճակատին մոտտո յե դրել մի հայկական առած՝ «քամու բերածը քամին կտանի» այն իմաստով, ինչպես դա գործադրել եր «Մշակի» խմբագիրը՝ վաշխառվական կապիտալի անկայունությունը շեշտելով։ Ռուս գյուղագիրներն ել նման ոպտիմիստ հայացք ունեյին, չհավատալով կապիտալի նախնական կուտակման հերոսների ապագային։ Սակայն այդ տեսակետը չարդարացավ, վորովհետև կուլակների կուտակումը վոչ թե «քամին տարավ», այլ ընդհակառակն ավելի ուռճացավ. սնանկությունը մեկին չքացնելով՝ մյուսին հզորացնելու միջոց դարձավ։

Կապիտալիզմը գյուղում բարք ու վարքի մեջ ևս հեղաշրջում է առաջ բերել։ Գուլակ Գրիգորը ժխտում է բոլոր բարոյական հասկացողություններն՝ ասելով, «դրանք ավելորդ բաներ են.—խաբեր, սուտ ասա, գողացիր, կեղծավորություն արա և տունդ լցրու։ Հարևանս ինչ բան և, հյուրասիրելը կամ հյուր գնալս ինչ բան և» («Տգիտության զոհեր», «Մուրճ», 1896)։

Հարուստ վորբևայրի Սիմին չի ուզում ամուսնանալ, «եսպես ազատ ավելի լավ է,—ասում է նա,—ինչ վոր քեֆս ուզի, կանեմ. հա շատ ամուրի տղամարդիկ» (նույն տեղ, № 10—11, յերես 1301)

Նույն իսկ հոր և վորդու հարաբերությունների մեջ մտել է «շահի ցեցը»։ Սինոդ Ղուկասը հիվանդ վորդուն չի ուզում քաղաք ուղարկել բժշկվելու, վորովհետև դա «փող է նստում»։ Համաձայնում է միայն այն պայմանով, վոր բժշկվելուց հետո հիվանդը մաքսանենդ ապրանքով գյուղ դառնա։

Այդ բոլորը տեսնելուց և նկարագրելուց հետո՝ Ադելյանը, ինչպես և իր իդեալիստ հերոսները, մի յերազ միայն ունեն.—ազատ հայ գյուղը, ուր «համերաշխության վոգին կամաց մուտք է գործում... բոլորն սկսում են սիրով և փոխադարձ ոգնությամբ ապրել» («Ներհակ Առաքել», «Մուրճ», 1894, № 7—8, յեր. 1007)։

Գյուղացիական խնդրում նման հասարակահայեցողություն ունենալով ինչ վոր Ադելյանն ուներ, Նամալյանն ու Շահրիարը տալիս են գյուղից քաղաք, հատկապես Բաքու յեկող հայ գյուղացիների վիճակի նկարագիրը, և այդ կերպ մի տեսակ լրացնում են Ադելյանի յերկասիրությունը։ Այսպես՝ Նամալյանը պատմում է, թե ինչ վիճակում եյին գտնվում Բաքու յեկող գյուղացիները, վորոնց «անշքությունն ու աղքատությունը ծանր տպավորություն են թողել նրա վրա»։ Նա գնացել է իր ծանոթ հաղրության Ովանեսին տեսնելու, մտել է բանվորների կացարանը (քարվանսարան), տեսել է ցնցոտիների մեջ պատսպարված մարդկանց, նկատել է նրանց վողորմելի կացությունը, այն՝ վոր շատերն անկողին չունեյին։ Բայց չնայած այդ բոլորին՝ ներկա դրությունից, ասես, դժգոհ չեյին։ Ի՞նչ պիտի լիներ

այս մարդկանց անցյալը, յեթե նրանք դեռ են հիշյալ դժոխային վիճակից (տես «Կյանքի գծերը», յեր. 128)։

Նամալյանը նկատել է, թե յերբ են գյուղացիք ցավ ի սիրտ զրկվում իրենց կենդանի ինվենտարից. «յերբ յերաշտության պատճառով հացը կարճ է բուսնում, նրանից քիչ դարման և ստացվում և խոտ էլ շատ քիչ են ժողովում»։ Այդ ժամանակ հանդես և գալիս տավարավաճառ Գեվորգը և գյուղացիք սկսում են քիչ առ քիչ ծախել իրենց լծկաններն անդամ։ Յերաշտից տուժելու պատճառն էլ ակնհայտ է. գյուղացիք փոխանակ կարգին գութանավար անելու, արորով մակերեսային կերպով փորփրում են հողը։ Տնտեսական նեղությունը սոխիպում է գյուղացուն զրկվել իր «յեզն աղբորից» վորի մասին նա յերգում է.

Ցես մատաղ եմ յեզանը,
Վոր կպահի խիզանը.
Աստված ելի դվաթ տա՝
Մեր տնարար յեզանը...

Բագու աշխատանքի յեկած ապարանցի Ցեղոյի մասին խոսելով Շահրիարը նկատում է. «առաջին ակնարկից կարելի եր հասկանալ, վոր ձեր առաջ կանգնած է մի միամիտ գեղջուկ, վորի նահապետական պարզությունն ու անմեղությունը դեռ չեյին խախտվել ապականված քաղաքի նեխված բարոյական մթնոլորտում»։ Գալուց առաջ նա հորից լսել եր այս խոսքերը. «քո պապերի բույնը, քո արան ու արոտը մի թող. մի կտոր հաց Աստված միշտ կտա. ծառերին, անասուններին կերակրողը մեզ էլ կ՝կերակրի»։ Բայց Ցեղոնը հորը չի լսել։ Ճանապարհվել է «Ավետյաց յերկիրը» և յերկու շաբաթ մեալուց հետո իրրև ինվալիդ վերադարձել է գյուղ՝ ձեռքերից մեկը խեղանդամ դարձնելով։ Պարզ է Շահրիարի միտումը. «պանդխտության» դեմ է պրոպագանդ անում (տես «Տատն և յերկու պատմվածք», յեր. 26)։ Նույն ձևով «կռվել են պանդխտության դեմ» Փափազյան և Անհարոնյան. մեկը «Մշուշ», իսկ մյուսը՝ «Ատծու կրակը» պատմվածքներով։ Ջավախեցին այդ ռոմանտիկ հեղինակների դեմ է ուղղել իր «Պատկերներին» ժողովածուն, վորին կցել է մի առաջաբան «Վարագույրի հետև» վերնագրով։

Դա մի շատ սուր յերգիծանք է, վորում ծաղրում է ռոմանտիկ գյուղագիրների մտայնությունը։ Վերջիններիս ընդհանուր յեզրակացությունն այն է, վոր գյուղը դրախտ է վոչ միայն իր բնությամբ, այլ և հասարակական ու տնտեսական կյանքով։ Հիմա բաց անենք վարագույրը և տեսնենք իսկական գյուղը։ Նախ բնությունը։ Այո, հիանալի յե բնությունը գյուղում, քան քաղաքում։ Բայց գյուղացին իր տունը փակում է արևի ճառագայթների դեմ. նրա տունը պատուհաններ չունի։ Այո, գյուղացին ավելի «բարոյական է», քան քաղաքացին։ Բայց դա արտաքուստ է միայն այդպես, ներքին գյուղական կյանքում կինն արդեն «ապրանք» է դարձել. նրա տնտեսական վիճակից ոգտվում են կուլակները և պոռնկացնում։ Այո, գյուղում համայնական կյանք կա, մի քանի տարին մի անգամ հողահավասարություն է լինում։ Բայց հողի «յուղոտ պատառները» զորքաններին են

հանում, զրկվում են աղքատները, յեթիմները, այրիները։ Այն, գյուղական պաշտոնյաներն ընտրովի յեն։ Բայց ընտրվում են նրանք, վորոնց առաջ գյուղը սարսափահար ե յեղած իր «պարլամենտով—համայնական ժողովով»։

Այդ բոլոր հակադրություններն իր «պատկերների» մեջ Ջավախեցին իլլյուստրացիայի յե յենթարկել։ Նրա գյուղը զորբաների կամ «փաշաների» տիրապետության տակ ե գտնվում։ Պարտքերի ցանցի մեջ խեղդվում ե գյուղը։ Պարտապան գյուղացին դառնում ե պարտատիրոջ ճորտը։ Պարտքի փոխարեն տալիս ե շարժական ու անշարժ գույքը, իսկ ինքը դառնում ե բատրակ։ Գյուղի վրա իշխում ե «յեր ի ներքո ստորագրյալս» հրամայականը։ Գյուղը բևեռացել ե «փաշաների» և «մարաբոների» (սեպհականատերերի գյուղացիներ) միջև։ Գյուղի «խոծաններից» (համեմատիր Ագապյանի «կծաններ» հետ) ազատում չկա։

Ի՞նչ միջոցներ են առաջադրում գյուղացիք այդ բոլորի դեմ։ Ընդհանրապես—վոչինչ. «ճակատիս գիրն այս ե»։ Նրանք շատ ել չեն հավատում «շուն ու կատու» դասավանդող ուսուցիչներին։ Գյուղատնտես Խոջա-եյնաթյանն ևս պնդում ե, վոր գյուղացիք բեալիստ և գործնական լինելով, կասկածանքով են վերաբերվում ինտելիգենտ մարդկանց քարոզներին (տես «Մուրճ,» 1897, № 7—8, յեր. 102)։

Իր բոլոր պատկերների մեջ Ջահախեցին կուլակների դեմ յերկու «պատիժ» ե հիշատակում. մեկը—այրի կնոջ աճեծքը, մյուսը—աղքատ գյուղացու ձեռքով երգեհ («Պատկերներ», յեր. 38, 56)։

Այդ բոլոր դիտողությունները գեղարվեստական պատկերացում են ստացել Ադելյանի գրչի տակ։ Նա տվել ե «ղոչաղների» յերկու բնորոշ տիպ—Առաքելին և Համբարձումին, մեկը՝ «Ներհակ Առաքել» («Մուրճ», 1894 թ. № № 7,8,9), մյուսը՝ «Տգիտության զոհեր» (Մուրճ» 1896 թ. № 5-ից—1897 թ.) պատմվածքներում։

Առաքել. Նրան Հ. գյուղացիք անվանում եյին «ներհակ», ուրիշ գյուղացիք—«հացով քոռ», կանայք—«քարասիրտ», իսկ բատրակները—«հախք—քայսան» (վարձ կտրող)։ Առաքելն այն միջակ գյուղացին ե, վոր փող ե հետ գցում, բացի հողագործությունից առևտրով ե պարապում, մսագործություն ե անում, դրամ ե պարտք տալիս, ամեն կերպ աշխատում ե հարուստ քեռու կարողությունը ժառանգել և ի վերջո իսկական կուլակ դառնալ։ «Առաքելն իր շահերի համար գործ եր դնում ուժ, բռնություն և կամակորություն», հրաժարվում ե համայնական պարտականություններ կատարելուց, որինակ՝ դպրոցական հարկից։ Գյուղացիներից մեկը նրան այսպես ե բնորոշում. «դու հենց միշտ եղպես ես ելի. յեզ, ջորի կառնես փոխանե, հետո կուրանաս, կուլ կտաս. փահլա կբանեցնես՝ վարձերը կ՚կտրես, իրենց ել վզակոթերին տալով՝ դուրս կանես։ Վոր մեկն ասեմ»։ Առաքելն իրեն «ղոչաղ» ե անվանում և այդ բոլորն անելու իրավազոր համարում։ Վերին աստիճանի կովարար ե և բռունցք բանեցնելու մեջ բավական վարժ։ Փողի համար հոգին տալիս ե։ Չնայած այն բանին, վոր միջակ կարողություն ունի, բայց ելի «աչքը ծակ ե»։ Կնոջ «անհաջող» ծնունդը (աղջիկ ե բերում)

նրա արյունը գլխովն է տալիս և նա դանդատվում է բախտից։ Ամեն որ աղոթք է անում, վոր քեռին մեռնի և ինքը ժառանգե նրա հարստությունը։ Եթե որինական ճանապարհով չկատարվի դա, նա բռնությամբ գլուխ կբերի, վորովհետև ինքը «պռոշը կախ» մարդկանցից չէ։ Իդեալիստ ուսուցչին և նրա նմաններին «խռովարարներ» է անվանում, վորովհետև նրանք ուզում են ուսումնարան շինել տալ, ուսումնահարկ առնել և Առաքելի հարուստ քեռու դրամն ուսումնարանին կտակել տալ։ Նա մի մարդ էր, վոր կարող էր իր շահերի համար ամբողջ գյուղը «կրակ դցել»։ Նա սպանում է գյուղական ուսուցիչ Սմբատին, վորպեսզի սա չհամոզե իր քեռուն փողը դպրոցին կտակելու, և Սիրիր է քշվում։

Համբարձումը. ամուսնանալով և խոշոր ոժիտը հնչուն դրամ դարձնելով՝ խանութ է բաց անում, վաշխառությամբ և մաքսանենգությամբ պարապում։ Կարճ միջոցում դառնում է վողջ «մնալի հոգեհանը»։ Ի՞նչով է Համբարձումն արդարացնում իր «ղոչաղությունը»։—«Մենակ մեր հողերի յեկամուտը ի՞նչ է վոր. տեսնում ես այդ հակերը, դրանց տված յեկամտին, յես յեկամուտ կասեմ»։ Քաղաքի ազդեցությամբ գյուղերում առաջ յեկած կուլտուրական հակումներն ոգտագործում է, փող պարտք տալով, ի դիմաց վերցնելով ամեն ինչ—ցորեն, յուղ, պանիր, դրամ, և այլն։ Մուրհակներն էլ իր ձեռքով է գրում։ Ամեն տեղ քարոզում է նորաձևություն, վորից ինքը շահվում էր։ «Տնաշեն, ամեն ժամանակ կտավ կհագնե՞ն. Զատիկ կա, Զրոր՞ենք կա, բա յերախաներդ մի՞ չզարդարվե՞ն»։ Այդ բոլորից հետո Համբարձումն սկսում է իրեն բեկի պես պահել. «բեկություն է անում»։ Տունը պռնգե պռունգ լցնում է գրաֆներով, ծախում, ծախծխում է և շատ ոգտվում։ Յերբ մաքսանենգությունը բացվում է և խոշոր տուգանքի յե յենթարկվում, նա վոտքի յե կանգնում իր 30 տարեկան յեղբորը 8 տարեկան հարուստ աղջկա հետ ամուսնացնելով։ Այդ ամուսնությունը յեղեռնական վախճան է ունենում. բայց դա Համբարձումի նվոչ մի ճնաս չի տալիս, վորովհետև նա արդեն իր նպատակին հասել էր։

Կուլակության և պետական պաշտոնեության ներքին կապն ու փոխադարձ ոգնությունը մերկացրել են Վ. Փափազյանն ու Ս. Տեր—Ավետիքյանը, մեկը՝ «Գյուղից», իսկ մյուսը՝ «Պատմվածքներ» յերկերում։

Հարուստ գյուղացին—կուլակը պետական պաշտոնյաներից չի վախենում. նա հպարտությամբ նրանց մասին ասում է. «իմ նոքարներն են, կաշառքով ամեն բան կանեմ»։ Այսպես.—վորովհետև գյուղը մեծանում էր, հողը մնում նույնը, սկսում են պետական հողերը «զավթել» և կաշառքով յուրացնել։ Վաթսուն դեսյատին արդեն գողացել են («Գյուղից», յեր. 162)։

Գյուղական կուլակների ամբողջ խումբը «գյուղական ավազակի» յե անվանել Ստ. Տեր-Ավետիքյանը։ Ո՞վքեր են այդ խմբի անդամները.—գյուղի պաշտոնյաներն ու նրանց հովանու տակ գտնվող կուլակները։ «Գյուղական ավազակին» ամեն ինչ է գյուղի համար, իշխանության բոլոր տարրերի—որենսդիր, գործադիր, դատական մարմնացումը։ Նրա ձեռքին է գյուղի տնտեսությունն ու քաղաքականությունը, մեկին խորտակելն ու մյուսին

վոտքի կանգնեցնելը։ Նա գյուղի համար «թե անձրև չե, թե՝ արև»։ Այդ «ավագանու» առաջավարտիկը տանուտերն է, մանավանդ այն ժամանակ, երբ նա գյուղամիջում «ճիտն է գցում տանուտերական շղթան»։ Այդ միջոցին «ռահաթ մարդը» ծունգ է չոքում նրա առաջ։ Վորպեսզի ավելի ահ ազդի, գյուղական ավագանին միշտ գործի չե անցնում հարբած վիճակում. հարբելը համարում են հասարակական գործ և վոչ թե անձնական զվարճություն, վորովհետև աղքատ գյուղացիք հարբած կուլակներից ավելի չեն վախենում, քան զգաստներից («Պատմվածքներ», էջ. 176)։

Սանդալն ևս նկատել է այդ «գյուղական ավագանին», վորին ինքը «գյուղական արիստոկրատիա» անունն է տալիս կամ, ավելի վորոշ՝ «հարուստների կուսակցություն» է անվանում. (տես «Փոքրիկ աստղ», էջ. 55)։ «Հարուստների կուսակցությանն» հակադրում է «աղքատ և միջակ» գյուղացիներին և նկատում է, վոր անգամ տոն որերին գյուղական այդ «խավերն» իրար չեն խառնվում, մեկուսանում են միմյանցից։ Իսկ սովորական որերին միշտ մի խուլ պայքար կա դրանց մեջ, վոր հաճախ «արյունհեղության և հասնում» (նույն տեղ, էջ. 43)։ Գյուղական դատարանում իշխում է «արիստոկրատիան», իսկ «քոնձռոտ աղքատները» պարտվում են (էջ. 63)։ Իգիթության դարն արդեն անցել է, հիմա ուժը «չափի, կշռի և արշինի մեջ է» (էջ. 137)։ Իր բոլոր ասածներին իբրև իլլյուստրացիա, Սանդալը մեջ է բերում միջակ գյուղացի Հանեսին, վորն աղքատանում է։ Ի՞նչ է պատճառը։ Նրա ջրաղացն այլ ևս չի կարողանում մրցել կուլակ Ղազարի «հինգակնյա» ջրաղացի հետ։ Դրանից հետո Հանեսի հասարակական նժարը հետզհետե իջնում է այնքան, վոր նա անցնում է միջին վիճակից «ստորին վիճակին», մտնում է «ռանչպարների» դասի մեջ (էջ. 166)։

Ռանչպարի գավակների չարքաշ կյանքը, վոր նկարագրում է Սանդալը, շատ ավելի գեղարվեստական պատկերացում է ստացել Հովհաննես Թումանյանի գրչի տակ։ 12 տարեկան Գիքորին ծնողներն ստիպված են քաղաք ուղարկել «աշխատանքի»։ Մայրը քաղաքն անվանում է «անիրավ աշխարհ»։ Գիքորը 5 տարի պիտի անվարձ ծառայեր բաղաղ Արտեմի տունը, ուր նա իրոք կրում է անասելի տանջանքներ։ Բայց ի՞նչ արած. ծնողներն ուղում էին նրան «մարդ դարձնել», վոր հոր պես «գուրկ ու խեղճ չմնա», «հազար ու մի պակասության տեր» չլինի, ինչպես շատ անգամ կրկնում է Հաժրոն։ Գիքորին մարդ են շինում «գավազանավ յերկաթյավ», վերջը մրսեցնում են ու մեռցնում։ Իսկ հայրը սպասում է նրանից իր աղքատության դեմ ոգնություն, գրելով իր հռչակավոր նամակը, վորում խնդրում է գոնե 5 ռուբլի ուղարկել՝ հարկեր տալու համար։ Ցեվ այդ նամակն ուղարկվում է մի «քորփայի», վոր կուշտ փորով հաց անգամ չեր ուտում։

Նման մի նամակ է ուղարկում հայրը Սաքոյին, վոր գնացել եր «գերմանու դեմ» պատերազմի։ Նա ծնողների միակ աշխատավորն եր։ Նրանից զրկվելով, ծնողները ընկնում են անճար վիճակի մեջ, բայց նրանք հույս ունեն, վոր իրենց վորդին ոգնության կհասնի, պատերազմի դաշտից փող կուղարկի՝ անթիվ պետքերը հոգալու համար։ Պատերազմի դաշտում Սաքոն

վիրավորվում է, բերում են Մոսկով, ձեռքը կտրում. լազարեթում նա հորից ստանում է մի բնորոշ նամակ, հետևյալ բովանդակությամբ։

Մեն եր զրում պառավ ապին,
Թե վոնց ռեսը հունձքը կերավ
Ու յետո էլ, նոր գարունքին
Նստավ իրանց հողի վրա։
Ու թե պառավ նանին մեռավ,
Ինքն էլ անտեր ու հալիվոր—
Մուրացկան է գյուղում իրանց,
Թող փող ղրկի ունի թե վոր...

(Զարենց, «Մանկալ Սաքո»)

Ինչպես Համբոն իր Գիքորին ստիպված աշխատանքի յե ուղարկում Թիֆլիզ, այնպես էլ Ս. Մելիք-Շահնազարյանի և Ն. Մամիկոնյանի տարիքոտ գյուղացիք են իրենց ջահել վորդիներին Բագվի և Գետաբեկի գործարաններն ուղարկում, փող աշխատելու և վերադառնալու համար։

«Հայ գյուղացու սև որը» վեպում գյուղացիք գանգատվում են թե՝ այլ ես ապրել չի լինում։ «Պանդուխտներից» մեկը տուն է դարձել և պատմել թե՝ քաղաքում «փողը—հող ա»։ Եվ ինչու՞ ենք տանջվում այս «խարաբայում», գնանք Բագու և աղքատության «քարը գլորենք»։ Տերտերն էլ և սկսում քարոզել յեկեղեցում «ավետյաց յերկիր» գնալու մասին. կ'գընան, ջիրները լիքը կվերադառնան, ինքն էլ կոդտվի։ Բագու գնացած յերիտասարդներից մեկը՝ Ստեփանը չի վերադառնում, կինը դառնում է մուրացկան։ Առաջին քաղաքատնտեսական դասը, վոր քաղաքում ստանում են պանդուխտները, դա այն է, վոր համոզվում են թե՝ «փողի շատը շատի մոտ է գնում, սա զարմանալի չե, բայց քիչն էլ շատի մոտ է գնում, այ, սա յե զարմանալին (յեր. 63)։ Բայց չնայած այդ գիտակցության՝ «Բագու տանող ճանապարհին սևին են տալիս պանդուխտ գնացողների խումբը կռունկների նման, վորոնք ուրախ չվում են տաք յերկրներ» (յեր. 80)։

Ն. Մամիկոնյանն իր «Հաղարից մեկը» վեպում պատմում է Գանձակի նահանգի մի հետ ընկած գյուղի մասին, վոր «իր հեռավորության և դժվարանց ճանապարհների պատճառով մնացել եր ուրույն և հավատարիմ պապենական սովորություններին»։ Հեղինակը, ասես, իր այդ կարծիքը ժըխտելու համար և գրել հիշած վեպը։ Ցավ իսկապես գյուղը ցայտուն կերպով շեշտավորված է։ «Պապենական սովորություններից» վոչ մի հիշողություն չի մնացել. աղքատ ու հարուստ գյուղացիությունը ծառացած են միմյանց դեմ, հաճախակի կռիվները յերբեմն արյունհեղությամբ և մարդասպանությամբ են վերջանում։ Կուլակության ձեռքով քայքայված ընտանիքներն իրենց աշխատավորներին ուղարկում են Գետաբեկի պղնձահանքերը։ «Բռնի թյունիներն» են իշխում «հեռավոր» գյուղում, այսինքն տեռորականները, վաշխառուները, վորոնց բանը շատ «աջ» եր, մանավանդ տեռորականինը, «վորի գազի կարճությունը, ճոթի ձգելը, կշռի ծռությունը շատ շահավետ եր» (յեր. 51)։ «Ժողովուրդը» հրաժարում եր իր լուծը, «ժողովուրդը», վո-

ը «յերեխայի պես միամիտ և... հեզեղի պես հղոր եր, բայց սովորած եր լիզելու այն ձեռքը, վորը կտրել չեր կարողանում» (յեր. 61)։

Գյուղացու այդ հնազանդության բնորոշ պատկերացումը տվել է Ակսելն իր «Հանավանք» պատմվածքում. «Գյուղը տգի պես փակչել եր հայրենի հանդին։ Կուչ եր դալիս, յերբ հարվածում եյին, մտնում եր պատյանի մեջ վորպես խխունջ, յերբ լորձունքոտ շոշափուկները դիպչում եյին տհաճ իրի՝ խանի սարվազին, սինոդի տուրքին, պրիստավի կնուտին։ Կուչ յեկած ապրում եր գյուղը Հանավանքի պարիսպների տակ. անջուր հողերում հաճար ցանում, հաճարի բլիթներ ուտում, լղար յեղան աղրից հարթախառն աթար շինում, աթարը ծեփում ուրարտական պարիսպների քարերին և հեթանոս պաղերի դագաղ-կարասներում պահում աղած վարունգ»։

Այդ հնազանդության վոգին ստեղծում են բռնությունն ու աղքատությունը և կուլակության այն գերիշխանությունը, վորի հաջող պատկերացումը տվել է Արշ. Շահնազարյանը մի ցայտուն տիպով.—

Կոստանդ աղան գյուղի ամենաճարպիկ վաշխառուն և մի և նույն ժամանակ առաջին հարուստն է։ Վոչ մի պետական պաշտոնյա այն վախն ու ակնածությունը չի հարուցանում գյուղացիների մեջ, ինչ վոր Կոստանդ աղան։ Հենց վոր գյուղամիջում յերևում է նա, բոլոր գյուղացիք պապանձվում են և «վոտքի կանգնելով արձանանում» («Խավար աշխարհում», յեր. 122)։

Կոստանդն իր շահագործությունը կատարում է բարոյախոսական քարոզներով։ «Նամուսը ամեն բանից թանգ է,—քարոզում է նա իր աղքատ պարտապաններին,—մարդ ավելի լավ է գետինը մտնի, քան թե թույլ տա, վոր պարտատերն իր կնկա շապիկն ու վարտիկը դուրս քաշել տա և հրապարակով ծախի» (յեր. 125)։

Աղքատ Գալոն մի դեղեցիկ նժույգ ունի. Կոստանդ աղայի աչքն այդ ձիու վրա յե։ Նա պարտքակոխ է անում Գալոյին. հետևանքն այն է լինում, վոր Ջոմարդը (ձիու անունն է) դուրս է գալիս Գալոյի ձեռքից։ Բոլոր նրա աղաչանքները, Կոստանդի առաջ չոքելն ու նրա փեշը համբուրելը—վոչինչ չի ոգնում։ Աղքատ մարդուն չի սազիլ «քահլան» ձի ունենալ-պընդում է Կոստանդ աղան (յեր. 132), խոսքի տակին և գլխին կեղծավորաբար «վորդի» անվանելով Գալոյին։ Ձին կորցնելով՝ Գալոն վոչ մի ուրիշ միջոց չի գործադրում բացի անպտուղ անեծք կարդալուց Կոստանդ աղայի հասցեին (յեր. 155)։

Կուլակը, վոր գյուղացիներին բարոյականություն է քարոզում, ինքն ամենևին վոչ մի «բարոյական նկարագիր» չունի։ Պարտատիրոջ կինը «խեղճի վաստակի հետ» միասին նրան է պատկանում։ Արշ. Շահնազարյանը մի ցնցող պատկեր ունի, վորում ցույց է տալիս, թե ինչպես աղքատ գյուղացու պատիվը կուլակի վավաշոտության առարկան է դառնում մի չվալ ալյուրի համար («Մացակի լոշը»)

Այդ բոլոր տառապանքներին յենթակա գյուղացիք վոչինչ անել չեն կարողանում իրենց վիճակը թեթևացնելու համար։ Նրանցից ավելի աշխա-

տասերներն ու բանիմացները իրենց զայրույթն են արտահայտում կամ յերգի մեջ, կամ թե գինեվաճառ Վարոսի հաճախորդներն են դառնում, գինետանը թողնելով ոչ միայն իրենց վերջին կոպեկը, այլ և չուխեն (յեր. 213)։ Վ. Փափազյանի նկարագրած գյուղում ևս գյուղացիք շարունակ խըմում են մի տեսակ ողի, որ նրանք «գիժ հացի» ողի յեն կոչում. դա ավելի խիստ և հարբեցնում, քան այլ տեսակի վոդելից ըմպելիները։ «Գնտական վարժապետը» հարբեցողության համար «թեորիա» յե ստեղծել. «թող խմենք, խմենք, որ մոռանանք, մարդու պես չի ապրվում» («Գյուղից», յեր. 70)։

Արշ. Շահնազարյանի ազքատ գյուղացիներից վոմանք իրենց ներկա թշվառությունների դեմ մի սպեղանի ունեն. յերազել ապագա բարեբարության մասին։ Յերազներից նրանց զարթեցնում է տանուտերի «կարմիր ճիպոտը», որ միշտ պաշտպանում է կուլակի շահերը, և նրանք յերազներից զարթնում են գյուղական բանտում, յերբ փորձ են անում գեթ ֆիզիքապես դիմադրելու վորևե վաշխառվի վոտնձգություններին («յեր. 286)։

Դեվորգ Զուբարի ազքատ գյուղացին ևս խիստ պատժվում է, յերբ իր զայրույթն արտահայտում է կուլակի տունը հրդեհելու փորձով (տես «Մահտեսի Սարգիս», յեր. 118)։

Այս բոլորից հետո շատ հետաքրքրական եր տեսնել կուլակի ծագումը, կուլակության գենեզիսը։ Արդեն Բաֆֆին մի քանի պատմվածքների մեջ, ինչպես «Մի որավար հոդ», «Գեղեցիկ Վարթիկը», «Անբախտ Հռիփսիմեն», գծել եր գյուղական ազայի և ազքատ գյուղացիների փոխհարաբերության սկզբնական շրջանի պատկերը, պարսկահայ միջավայրը նկատի առնելով։ Այդ պատմվածքների մեջ տնտեսական վիճակի ուսումնասիրությունը հետին պլանի վրա յե դրված, կարևորը հեղինակի համար մահմեդական ազայի և Քրիստոնյա ազքատի հակամարտության ազգային և կրոնական յերանգավորումն եր, իսկ ներքին կյանքում—պանդխտության առաջ գալու պատճառը, և բարք ու վարքի մեջ, ժանավանդ սիրո բնագավառում—փողի ուժի շեշտումն եր մի քանի թռուցիկ գծերով։ Նույն արժեքն ունեն Վ. Փափազյանի «Բարի մարդ», «Հաջի Աղա» և «Կտակ» պատմվածքները թյուրքահայերի կյանքից։

Կուլակության գենեզիսն Ակսելը տվել և իր մի տիպով.—

Թատուշ տղաշ. վոչխարատեր Թատուն տղայի ամբողջ հոգսը իր վոչխարների թիվը շատացնելն եր։ Ամենևին նրա աչքին չեր գալիս իր տան փլուզը և այն՝ որ մայրը գլխին շալ չունի գցելու և «դարդահալ» և լինում ճախարակ մանելով։ Նրա յերազը՝ որից ընդոստ վեր է թռչում,—բոլոր վոչխարները վոսկի յեն դարձել։ Նրա վոչխարի չափ խոնարհ, անլեզու կինը, յերազից հետո, յերբ նա զարթնում և բոթում է կնոջը՝ կատաղում է անմեղունչ իր տիրոջ ցանկությունը, չնայած ծծկերի մայր եր։ Թատուն տղայի ամբողջ մտածողությունը հովվական եր. թագավորին հասկանում եր հովվի պես. նա յել հովիվ և, որ խուզում է իր հոտը Մոսկովից մինչև իրենց գյուղը։ Համբանքը պրիմիտիվ է. ասում է՝ վոչխարների

թիվն և «յերեք հարյուրից չորս պակաս»։ Վոչխարներին տանում և քաղաք, բոլորը ծախում և այնտեղից բերում տասը բեռ ապրանք — ճոթ, մեխ, նալ, շաքար։ Խանութ և բաց անում։ Սկզբում դժվարությամբ, բայց հետո վարժվում և գործին։ Հետզհետե ամբողջ գյուղը նրա պարտապանն և դառնում։ Խառը տարիներում աշխարհից կտրված գյուղում նա թագավորում էր։ Շաքարը դեղապետի պես էր ծախում։ Այդպիսով՝ ուռեց, դարձավ անվանի, ազդեցիկ։ Հեղկոմը դրավում և խանութի մնացորդը։ Նա պիտի ցանքսի դուրս գար։ Գյուղացիք ծաղրում են՝ «քո բանը արշին բռնելն է»։ Անվարժ գործը թողնելով, նա քիչ քիչ իր նախկին արհեստն և ձեռք առնում։ «Գյուղը աշխարհից հեռու, ճամփեն՝ կածան, ուժը՝ պակաս»։ Կոոպերատիվ են բաց անում. համայնական ժողովում կոոպերատիվին ձայն տվողները նրա պարտապան հաճախորդներն էին։ Այնուհետև նրա «լոշ ականջներն» ավելի էին կախ ընկնում։ «Բանս բուրդ է», մտածում էր Ծատուն տղան։

Հայ գյուղագիրները գծել են նաև կուլակների գործունեությունը գյուղաստեղծ ինտելիգենցիայի դեմ։ Մենք կբերենք միայն յերկու ինտելիգենտի բնորոշ տիպը, վոր տվել են Սանդալն ու Բարկենցը, մեկն իր «Փոքրիկ աստղ», իսկ մյուսը՝ «Նորեկ» վեպերում։

Սանդալի հերոսը վարժապետ Սաղաթելն է, վոր միջնակարգ ուսումն ավարտելով՝ յեկել է գյուղ ծխական դպրոցի ուսուցչի պաշտոնով։ Նոր սերընդի ուսուցիչ է կամ, ինչպես նրա թշնամիներն են ասում, «շուն ու կատվի ուսուցիչ» է, այսինքն բնագիտական ու գյուղատնտեսական թեքում ունի և առարկաներն ավանդում է նոր մեթոդով։ Աղքատ ծնողների զավակ լինելով՝ գյուղական իր գործունեությամբ Սաղաթելը պաշտպան է կանգնում աղքատ գյուղացիությանն ընդդեմ «զորավորների»։ Չորս տարի գյուղում գործելով՝ անագին հեղինակություն է ձեռք բերել։ Նրա սկզբունքն այն է, ինչ վոր Ստալինն է իրրև նշանաբան հանձնարարել գյուղ գնացող գործիչներին. «գյուղացուց սովորել և սովորածը մշակել, հարստացնել» («Փոքրիկ աստղ», յեր. 94.)։ Ինչով է արտահայտվել Սաղաթելի գործունեությունը։ Ուսումնարանի պայծառացում, առողջապահություն (դեղորայք, բաղանիք), հող պարարտացնելու դասեր, իրավաբանական ոգնություն։ Մանավանդ այս վերջինը դուր չի գալիս գյուղի զորավորներին և նրան դրպարտում են իրրև «խառնակիչ», մեղադրում են «Ատելություն և պետության դեմ անվայել խոսակցության մեջ» (յեր. 168)։ Վերջը նրան արտաքսում են գյուղից։ Վոչ մի պաշտպանություն գյուղացիների կողմից, թեև «գյուղն անմխիթար դրության մեջ էր ընկել» (յեր. 169)։

Բարկենցի «Նորեկ» վեպի հերոսը Վ. Փափազյանի «Ժայռ» դասական վեպի գլխավոր հերոսի նախատիպն է։ Յերկու հեղինակի հերոսները ծագումով գյուղացի ինտելիգենտներ են։ Յերկուսի գործունեությունը գյուղում՝ դրեթե նույն հետևանքն և ունենում — անհաջողության և հանդիպում։ Յերկու հեղինակն էլ պատճառը տեսել են կառավարության կազմի մեջ, վոր

խրախուսում և կուլակներին։ Յերկու համանուն հերոսները (Աղեքսանդր) կուլակների զոհ են դառնում։ Բարկենցը տվել է ազգայնական յերանգավորում իր հերոսի գործի ոնհաջողությանը. թուրք կուլակի զոհ է դառնում նաև Բայց, իհարկե, խնդրի եությունը դրանով չի փոխվում։ Բացի այդ որյեկտիվ պատճառից՝ յերկու հերոսի գործը վիժում է նրանց անփորձության և աշխարհայացքի հետևանքով։ Նրանք հում-յեփ յերիտասարդներ են. գյուղացի լինելով՝ ամառները գյուղում ապրելով՝ նրանք շատ քիչ տեղյակ են յերևում գյուղական կյանքին, այդ կյանքի առաջմղիչ պայմաններին։ Նրանք գյուղ են մտնում համալսարանն ավարտելուց հետո՝ վերին ատիճանի ռոմանտիկ տրամադրություններով։ Թողնենք Փափազյանի հերոսին, վոր կրկնակ է միայն, և խոսենք Բարկենցի Ալեքսանդրի մասին։

Յերբ Աղատ սարը բացվում է նրա առաջը, նախ քան գյուղ մտնելը՝ «կարծես, նա ցնցվում է», ընկնում է հողի վրա լաց լինում» և «մաղերը բռնած դես ու դեն և մեն գալիս»։ Գյուղ մտնելով՝ նա գյուղացիներից ուծարվում է «աղա» տիպոսով։ Իր առաջին ծրագրային ճառի մեջ ասում է. «յես աղքատ-հարստի մեջ զանազանություն չեմ դնում, մինչև անգամ աղքատներին ավելի յեմ սիրում»։ Գյուղացիք խորհուրդ են տալիս, վոր նա վարչական պաշտոն ստանձնի, պրիստավ դառնա, վորպեսզի պետական դատաստանատնից ազատվեն։ Պաշտոնը տալիս են։ Թե վորքան միամիտ է Ալեքսանդրը, դա յերևում է նրանից, վոր ամբողջ գավառի համար պատուհաս դարձած կուլակ Սուլթանի առաջ մի բարենորոգչական ճառ է ասում և խնդրում, վոր նպատակի հասնելու համար մի «ձև» ցույց տա իրեն(յեր. 53)։Պարզ է, վոր կուլակը նրա նպատակն իմանալով՝ վոտքի յեկանգնեցնում իր համհարզներին, խոչնդոտներ է հարուցանում նրա դեմ, ազգամիջյան հարաբերությունները լարում։ Տնտեսական կռիվը ստանում է ազգային գունավորում, թեպետև այս վերջինս չի խանգարում հայ տանուտերին դաշնակցել թուրք «միրավի» հետ. յերկուսով «ջուր են կապում նրա տակը» (յեր. 107)։ Նա միամտորեն չի հասկանում կուլակի ուժը. կարծում է, թե բարձր պաշտոնեությունն այնքան անկախ է, վոր չի ընկնի կուլակների ազդեցության տակ (յեր. 130)։

Ի վերջո, ինքը ամբողջ գործունեությունից հետո՝ Ալեքսանդրը ըստիպված եր թողնել պաշտոնը, յերբ հայերի և թուրքերի մեջ մի շարք սպանություններ են տեղի ունենում։ Այդ բոլորը նրան նյարդային ցնցման մեջ են նետում, նա սկսում է դատափետել ինքն իրեն, իր գաղափարները։ Նա յերազել եր մի գործունեություն առանց զոհերի, իսկ այժմ տեսնելով արյունոտ հետևանքը, «չարագործություն» է համարում իր միսիան (յեր. 175)։ Վեպը վերջանում է նրանով, վոր Ալեքսանդրը՝ Բաֆֆիի «Վոսկի աքաղաղի» Սանչոյի պես՝ իր ինչքը տալիս է ծառաներին, և գընում Թյուրքահայաստան՝ «փոխանակ ինքնասպանություն գործելու» (յեր. 211)։

IV

Այժմ հետաքրքրական է իմանալ, թե ռուս գյուղագիրներն ինչ ազդեցություն են գործել հայ գյուղագիրների վրա կամ, ավելի հիմնականորեն՝ կապիտալիզմի զարգացումը մեզ մոտ և Ռուսաստանում ինչպիսի ուղիներով է ընթացել։

Առաջին հայացքից ռուս գյուղագիրների ազդեցությունը հայ հեղինակների վրա, թե աշխարհայացքով և թե գրելակերպի կողմից,—անուրանալի չե և ակնբախ։ Դրա գլխավոր պատճառներից մեկն այն է, որ բնական տնտեսության տեղի տալը կապիտալի նախնական կուտակման շրջանին—մոտավորապես նման յերևույթներ է ծնել թե մեզ մոտ և թե Ռուսաստանում։ Ի հարկե, տարբերություններ, այն էլ խոշոր տարբերություններ յեղել են այն չափով, որքան մեր յերկիրը Ռուսաստանի համար սոսկ մի գաղութ է հանդիսացել։ Ուստի և կուլակության սկզբնական ծավալումը մեզանում շատ ավելի ավերիչ և կործանարար է յեղել, քան Ռուսաստանում, մանավանդ, որ հայ կապիտալիզմի շինարար կողմերն ոտարյերկրյա գործադրություն են ստացել և վոչ թե մեր միջավայրումն են բեղմնավորվել։ Այդ հանգամանքը նկատի առնելով՝ չի կարելի համաձայնել մեր սոցիալիստական գրականության մեջ արտահայտված այն կարծիքին թե՝ «բուրժուազիայի հետ, որպես դասակարգի, անքակտելիորեն շաղկապվեց հասարակական հացագործության գաղափարը. կապիտալիստների հետ, որպես տնտեսական շահագործող կատեգորիայի, անբաժանելիորեն ողակվեց սոցիալական աննրելի մեղսագործության և անարդարության գաղափարը... Դա մի անշնորհակալ ժառանգություն եր, ռուսական նարոդնիկությունից մնացած, որի մանր-բուրժուական սենտիմենտալ գրողները որգանական ատելություն եյին տածում դեպի կապիտալը և կապիտալի հասարակական ներկայացուցիչները» (Բ. Ի. «Հասարակական գաղափարները...», յեր. 45—46)։

Մենք ընդունում ենք, որ ռուս նարոդնիկները շատ. կողմերով են ազդել հայ գյուղագիրների վրա, բայց այդ հիմնական խնդրում մի առանձին ազդեցություն կրելու կարիք չկար, որովհետև մեզանում ևս հեղինակների դասակարգային պատկանելիությունը նախորոշում եր նրանց վերաբերմունքը դեպի նորածագ կապիտալիզմը, ինչպես որ Ռուսաստանում։ Թեթե «մանր բուրժուական սենտիմենտալ գրողներ» են յեղել ռուս նարոդնիկները, ավելի ևս այդպիսի յեն հայ գյուղագիրները։ Հետևապես փոխառության կարիք չկար, քանի որ օբյեկտիվ տվյալները հրամանագրում եյին՝ ատելություն կապիտալիզմի սկզբնական քայլերի նկատմամբ։ Բացի այս հանգամանքից՝ կա և մի խոշոր տարբերություն։ Ռուս գյուղագիրների մեջ քիչ չեն այն հեղինակները, որոնք գրական կուլակների տիպեր են տվել։ Իսկ հայ հեղինակը գրեթե գրական կուլակ չունի։ Այդ յերևույթի պատճառն էլ մենք վերև տեսանք։ Կա ևս մի ուրիշ տարբերություն. ռուս գյուղագիրները տվել են ռուս գյուղացիների խմբական ընդվզման փաստեր։ Հայ

գյուղացիների մոտ նման փաստեր չկան, կամ յեթե կան՝ կրում են անհատական բնավորություն։ Այդ բոլոր հանգամանքների մեջ պետք է տեսնել ռուս կապիտալիզմի իր յերկրում առաջ բերած շինարար հատկությունները. մեզանում կապիտալիզմը միայն՝ ընդհանուր առումով՝ քանդել է, ոչնչելով ռուսական հորիզոններում։

Այս վերջին դիտողությունները կարելի յե փաստերով ապացուցել։ Դեռ Թոդենք մի կողմ Տուրգենևին, վոր սիրահարված եր կուլակ գյուղացիների վրա, յերկինք եր բարձրացնում կուլակության ուղիով նվաճումներ անող Խորին, նույնիսկ այդպիսի թեքումներ են ունեցել «մանր բուրժուական սենտիմենտալ» ռուս գրողները։ Այսպես, Գլեբ Ուսպենսկին և Զլատովրատսկին տեսել են վոչ միայն վաշխառվական կապիտալի մռայլ կողմերը, այլ և այն, վոր այդ կապիտալը զարգացնում է կուլակի նախաձեռնական վոգին, պաշտպանում և նրա անհատականությունը քաղաքական պայմանների հանդեպ, առաջ և բերում գրագիտություն, վորն իր հերթին զարկ և տալիս տնտեսությանը, և վերջապես մարդկանց դարձնում է կուշտ, հետևապես «ժուժկալ» իրենց հասարակական գործունեության ժամանակ։ Այս վերջին յերկու կետը պաշտպանում է ռուս գյուղագիր Երտելը, վորի համար նա արժանացել է քննադատ Կրանիխֆելդի կողմից «ռուս բուրժուական կուլտուրայի ավետարեր» տիտղոսին (տես „В мире идей и образов", т. III, стр. 129)։

Դանք ռուս գյուղացիների խմբակցական դիմադրությանը, մի բան, վորը՝ ինչպես և կուլակի դրական գծերը՝ հայ գյուղագիրների մոտ բացակայում է։ Ռուս գյուղագիրներն ապացուցել են, վոր ռուս գյուղացին քաղաք ընկնելով՝ իր համար բարեկեցիկ վիճակ է ստեղծում. այդ պարագան մասամբ աղդում է գյուղի դիմադրականությունը բարձրացնելու համար։ Բայց մեզ համար այդ դերը չի կատարել։ Այդ հանգամանքը պնդում է նաև Մախարաձեն վրացական գյուղի մասին։—Վորովհետև Վրաստանում հողը պատկանում եր ճորտատերերին և 1860-ական թվերից (ճորտերի ազատագրությունից) հետո գյուղացիք մեծ մասամբ զրկվեցին հողից և շուկա նետվեցին, այդ պատճառով էլ առաջարկն ավելի շատացավ, քան պահանջը, ուստի և վատթարացավ թե բանվորի և թե գյուղացու վիճակը։ Հայաստանի համար նման յերևույթի շարժառիթը Մախարաձեն սակավահողությունն է համարում։ Մինչդեռ ռուս գյուղացին «վորքան էլ թալանված եր ազատագրության ժամանակ, այնուամենայնիվ բեգտուի բարձումը նրա աշխատանքի արտադրողականության վրա շատ ազդեց. սև-հողյան նահանգներում ցորենի արտադրությունը շնչի հաշվով բարձրացավ մեկ և կես անգամ... ուրիշ նահանգներում ևս յերկրագործության արտադրողականությունը շարունակում եր բարձրանալ ..» (II բ. проф. Тарасова, „Обществоведение", т. IV, стр. 218)։

Այդ համեմատական բարեկեցությունը դիմադրության վոգի եր զարթեցնում կալվածատիրության դեմ, վորովհետև վերջինս ճորտերի ազատագրությունից շատ ավելի ոգտվեց ի հաշիվ գյուղացիության։ Նա առացավ

կանխիկ փող, ազատ ձեռքեր, սկսեց հողը ծախել կամ վարձակալությամբ տալ գյուղացիներին շատ բարձր դներով։ Բացի այդ բոլորից՝ գյուղացիությունն անուղղակի հարկերով վճարում եր իր համար պետական ապրանքների համար ծանր փրկանք. մեխը, չիթը, մախորկան, արաղը աննկատելի կերպով ավելի եյին կեղեքում, քան բացահայտ տուրքերը։ Այս պայմաններում գյուղացին իր հողը կամ վարձակալածը կանոնավոր մշակել չեր կարող, ուստի և նա չորս անգամ ավելի քիչ հունձ եր ստանում, քան Դանիայի, Բելգիայի և Հոլանդիայի գյուղացին։ Նման պայմաններում ռուս գյուղացին շնչին ութ դեսյատին հող պիտի ունենար գլուխ պահելու համար, բայց այդքան չուներ և իր ստացած 50 բուբլի յեկամտից 35-ը գնում եր հարկերին և տուրքերին։ Այդ բոլորի հետևանքով առաջ են գալիս գյուղացիական մասսայական շարժումներ, որոնք ռուսական բոլոր հեղափոխություններին զարկ են տվել» (տես՝ С. Мазуренко, „Крестьяне в 1905 году", стр. 19)։

Այսպես, ուրեմն, տեսնում ենք, որ չի կարելի հայ գյուղագիրներին ռուս հեղինակների սոսկ պատճենը համարել. հասարակական-տնտեսական պայմանների տարբերությունը վորոշ զատիչ գծեր և դրել յերկու կարգի գրողների միջև։

Բայց նմանության փաստեր շատ կան։ Նախ վերցնենք սկզբունքային նմանությունները, այնուհետև կտանք անհատական փոխառությունները։

Պրոֆ. Ս. Վենգերովը համեմատության դնելով յեվրոպական և ռուս գյուղագիրներին, նկատում է, որ ռուսների վերաբերմունքը դեպի գյուղացին «շատ լուրջ է»։ Դրա պատճառը նա համարում է այն, որ ռուս հեղինակներն ապրում եյին մի գյուղացիական յերկրում, ուր գյուղացիությունը պետականորեն վոչնչություն եր (տես „Собр. соч. т. I, стр. 155)։

Դա յեթե ճիշտ է ռուս գյուղացիների համար, ավելի ևս ճիշտ է հայ հեղինակների նկատմամբ, որոնք մի գաղութային յերկրի շահագործման պատկերացնողներն են հանդիսանում։ Յեթե ռուս գյուղագիրը մտնում է համեմատաբար հողաշատ ռուս գյուղը և այնտեղ տեսնում միայն և յեթ «հիվանդանոցային դեմքեր», հայ գյուղագիրը սակավահող հայ գյուղը մտնելով՝ սովամահության փաստեր է արձանագրել. որինակ Ն. Մամիկոնյանը։ Յեթե կապիտալի նախնական կուտակումը Շչեդրինը «կեղտոտ, աղտոտ» է անվանում, իսկ Մամին-Սիբիրյակը պատկերացնում է այն իբրև մի ընդարձակ անտառի հրդեհ և հույս հայտնում, որ դրա տեղն ապագայում մի կանաչ անտառ պիտի բուսնի, հայ գյուղագիրները միայն աղտեղությունն ու հրդեհն եյին տեսնում և «կանաչ անտառի» հույսեր չունեյին, որովհետև կապիտալի օբյեկտիվ զարգացումը բացասական հատկությունները մեծ մասամբ թողնում եր մեզ մոտ, դրականը— արտահանում։ Յեթե վերջի վերջո կապիտալիզմի մուտքը վողջունվեց ռուս գյուղագիրներից վոմանց կողմից և նրան վերագրվեց տնտեսական և քաղաքական շինարարությունը, հայ գյուղագիրները (նախ քան հեղափոխությունը) գրեթե առանց բացառության մեացին կապիտալիզմի թշնամիներ, որոնի մի պատճառը նրանց

ման-բուրժուական մտայնությունն էր, մյուսը—այն իրական փաստը, որ կապիտալիզմը մեղանում սոսկ քանդիչ և ոչ թե շինիչ ուժ էր։

Ռուս գյուղացիության «պետական վոչնչության» փաստը մարմնացում և սատկել կառավարության քաղաքականությամբ, որ հովանավորել և մշտապես գյուղի և գյուղացու թշնամիներին իր դասակարգային պատկանելության հետևանքով։ Կառավարական այդ կողմնակալությունը ստեղծել և հավասարապես անտանելի պայմաններ թե կենտրոնում և թե ծայրագավառներում։ Դրա էությունն այն էր, որ գյուղացին ստրկական կապով ողակվեր հողին և կալվածատիրության հլու հպատակը դառնար։ Ինչպես նկատում է Ա. Շեստակովը, Ռուսաստանում մշակվող ամբողջ հողի միայն 30% էր կապիտալիստական տնտեսություն ներկայացնում. այնպես որ շուկա հանվող ամբողջ հացի լոկ 21.6% խոշոր կապիտալիստական տիպն էր տալիս, մնացած 78.4% ընձեռում էր գյուղացիական մանր տիպի տնտեսությունը։ Հետևապես շահագործվող մեծամասնություն հանդիսանում էր մանր գյուղացին, որի աշխատանքի ընդհանուր վաստակը շատ ավելի ցածր էր, քան անգամ գյուղական վարձու բանվորինը (տես „Капитализация сельского хозяйства России“, стр. 41)։

Շահագործվող մեծամասնությունը ստիպված էր կալվածատերերին տալ «քաղցի վարձկալություն», որովհետև հողը գտնվում էր նրա ձեռքին, լավագույնը և մշակելին նա վարձով տալիս էր՝ ճորատատիրական պայմաններ ստեղծելով մանր գյուղացու համար։ Ինչպես հայտնի է, համաշխարհային շուկա էր հանվում ռուսական հացը, մինչդեռ ռուս գյուղացին սոված էր։ Համաշխարհային շուկայի հետ կապված լինելը թանդացնում էր հողի արժեքը։ Իսկ ինքը կալվածատերը հողը թանգ վարձկալությամբ տալով՝ շահագրգռված չէր տնտեսությունը զարգացնելու, ինտենսիֆիկացիայի յենթարկելու համար։ Կառավարությունն իր բոլոր ուժերով ոժանդակ էր հանդիսանում կալվածատերերին՝ քամելու գյուղացուն, տալով առաջնին ամեն տեսակ դյուրություններ, որինակ՝ բանկերից վարկ, և այլն։

Այս պայմաններում առաջ է գալիս այն յերևույթը, որ կոչվում է «հողի վաշխառություն»։ Դա ստեղծում է հողի կարիք ունեցող գյուղացու և կալվածատերի միջև ճորատային հարաբերություն։ Այդ հարաբերությունն ավելի ևս ծանր բնույթ է ստանում, յերբ գյուղացին դրամ չունենալով, ընտարկով է փակում իր հաշիվը։ Այդ յերևույթը, որ կարիշը նկատել և ռուս գյուղերում (տես „Итоги земской статистики“, стр. 265), նկարագրել են հայ գյուղագիրներն իրենց յերկերի եջերում։ Ինքնակալության և նման շահագործման կապը, որ ցուցահանում է Լենինը «Ցերկերի» III հատորում (տես стр. 636), նմանապես դիտել են հայ գյուղագիրներն այն բոլոր դեպքերում, յերբ կալվածատերն ու ադմինիստրացիան նման գծով են ընթանում։ Բայց մի բան, որ չեն նկատում թե հայ և թե ռուս գյուղագիրներն, այդ այն է, որ կուլակի տնտեսական անհրաժեշտությունը նրանք հարևանցիորեն են շեշտում և ավելի շատ նկա-

էագրում են նրա խաբերայությունները։ Թե ռուս և թե հայ գյուղագիրները գյուղացու թշվառությունների արմատը փնտրում էին կուլակների չար կամքի մեջ, առանց հասկանալու, որ խնդրի ծանրության կենտրոնն այնտեղ չէ։ Ինչպես ճիշտ կերպով նկատել է Գիլոդենը՝ «ոչ թե կուլակն է հանդիսանում գյուղացիական շատ տնտեսությունների խորտակման պատճառը, այլ ընդհակառակը՝ դրանց խորտակումը ծնել է կուլակին։ Գյուղագիրները չհասկանալով այդ անհրաժեշտությունը — կուլակի ծագման տրամաբանական անխուսափելիությունը, նրա գոյությունը «ժեղավոր և դավաճանական» են համարում։ Մինչդեռ պարզ է, որ կուլակի ծագումը «տարերային հանգամանքների արդյունք է և ոչ թե չար կամ բարի կամքի արդասիք» (տես „Кулачество-ростовщичество, его общественно-экономическое значение“, стр. 134, 153)։

Մի այլ կետում ևս՝ (հայ և ռուս գյուղագիրների սկզբունքային մոտեցումը կապիտալիզմին) շփման կետեր կան կենտրոնի և ծայրագավառի մտայնության մեջ։ Ռուս գյուղագիրներն սկզբնապես չէին նկատում կապիտալիզմի «աղատարար», «պրոգրեսիվ միսսիան», այն՝ որ նա հորիզոնը ընդարձակում է, ազգաբնակության շարժումը սաստկացնում է, բարձրացնում է արտադրության միջոցները և աշխատանքի համայնացման առարկայական հիմքերը դարբնում։ Ն. Լ. Ռուբինշտայնը դեկաբրիստների մասին գրած իր հոդվածում ապացուցում է, որ կալվածատերերին ձեռնտու չեր ճորտերի ազատագրությունը, այլ արդյունաբերական քաղաքի ճնշումով է տեղի ունեցել այն։ Ազատագրության առաջին խոսք բարձրացնողներն Ադամ Սմիթին իրենց դրաղարանում պահող դեկաբրիստներն էին, որոնց շարժումը ոչ այլ ինչ եր, բայց յեթե մատաղ կապիտալիզմի յելույթը բնատնտեսական հիմքի վրա հորինված պետական կարգերի դեմ (տես „Каторга и ссылка“, книга 8, 1925 г.)։

Վերջ ի վերջո բնատնտեսական հիմքի վրա կառուցված պետությունը դառնում է «կապիտալիստական կազմակերպություն» և թե գյուղում և թե քաղաքում հավասարապես պաշտպանում է III դասակարգի շահերը։ Մերթ նա առևտրական կապիտալի ընթացքն է ջատագովում գյուղացուն հարկադրելով հողին կապված մնալ և դժվարացնում է նրա մուտքը դեպի քաղաք, մերթ արդյունաբերական կապիտալն է իր հովանու տակ առնում, յերկաթուղիների ցանցը զարգացնելով՝ ներքին շուկա ստեղծելու համար։ Ցեվ ընդհանրապես կապիտալիզմն է պաշտպանում բանվորության դեմ որենսդրության միջոցով, որոնի համար ցայտուն փաստեր կան (տես Христоматия по истории классовой борьбы“, стр. 103)։ Հողագործության հետ ռուս բանվորի կապը մշտապես ծառայել է իրրև ցածր աշխատավարձի հենարան և միևնույն ժամանակ իրրև ռուս արդյունաբերության արագ զարգացման պատճառ։ Առաջին անգամ այս յերևույթը նկատել է Մենդելեեվը և ապա գիտական հիմնավորում է ստացել Գ. Պլեխանովի գրչի տակ (տես т. IX, стр. 200)։

Ռուս կառավարության դասակարգային այդ քաղաքականությունը

նման տնտեսական բովանդակություն և ունեցել նաև Անդրկովկասում։ Այստեղ, մանավանդ հայկական շրջանում, դրությունն ավելի յի ծանրացել գյուղացիության նկատմամբ, աչքի առաջ ունենալով մեր յերկրի լեռնային բնույթը, «կատաստրոֆիկ» հողատակավությունը, կառավարության անտարբերությունը դեպի յերկրի վոռոգման գործը և նրա սեվեռյալ նպատակը՝ դարձնելու մեր լեռնաշխարհը գաղթավայր—մեր աղքատիկ հողի բռնադրավումը հոգուտ յեկվորների։ Բնական է, վոր այդ պայմանների հետևանքով մեր յերկրում ծայրատենչին մի չտեսնված վաշխառություն և պանդխտություն, վորոնք հայ գյուղագիրների գրական մշտական թեման են հանդիսանում։ Այդ յերևույթի վրա լուրջ ուշադրություն և դարձրել Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումն Ռուսաստանում» ուսումնասիրական աշխատության մեջ, վեր հանելով ընդհանրապես Կովկասի գաղթավայր լինելու հանգամանքներն Ռուսաստանի համար։ Նրա կարծիքով՝ կապիտալիզմը չի կարող շուկա չփնտրել անդամ այն դեպքում, յերբ իր ներքին շուկան չի հագեցրել. և վորովհետև Ռուսաստանը միշտ հեշտորեն և շուկաներ գտել, թե հարավում և թե արևելքում, ուստի և այդ պարագան ստեղծել և կենտրոնի և ծայրերի մեջ աղաղակող տարբերություններ տընտեսական զարգացման տեսակետից։

Կապիտալիզմի զարգացումն Ռուսաստանում առաջ և բերել հասարակական, քաղաքական և գրական շարժումներ, վորոնք իրենց հերթին արձագանք են գտել այս կամ այն չափով նաև Անդրկովկասում, մասնավորապես հայերիս շրջանում։ Պլեխանովը, Պակրովսկին, Լունաչարսկին, Բերլինն ու Դոբրաչեը տվել են այդ հասարակական ու քաղաքական, գրական ու գեղարվեստական շարժումների բնույթագիրը, վորից յերևում է հետևյալը։

Բուրժուազիայի և «ժողովրդի» կապիտալիզմի և սոցիալիզմի խնդիրն ռուս գրականության մեջ առաջին անդամ դրել է Հերցենը։ Ռուս ժողովուրդը չպիտի անցնի կապիտալիզմի քավարանով, նա պետք է թռիչք կատարի դեպի սոցիալիզմը։ Դեպի սոցիալիզմ տանող կարճ ճանապարհը համայնքն է։ Այս տեսակետը սկսեցին պաշտպանել Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը. Միխայլովսկին իրրև հրապարակախոսներ, իսկ տնտեսագետներից Վ. Վ. (Վորոնցով) և Նիկոլայ-ոն։ Վերջինս պնդել է, վոր ռուս մանր արտադրությունը՝ գործիքներից չզրկվելով՝ պետք է կապիտալիզմի բարիքները փոխ տոնի առանց սեփականազրկվելու. քաղաքը և գյուղը մի սերտ կապ պիտի ներկայացնի։ Հետաքրքրական է նկատել, վոր ռուս տնտեսագետների այս կարծիքը գտել է արձագանք նաև մեր հրապարակախոսության մեջ, հատկապես Գր. Արծրունուց պաշտպանություն գտնելով ամենից առաջ, իսկ հետագայում Ավ. Արախանյանից (տես «Մուրճ» 1897, № 9, յեր. 1673։

40—70-ական թվականների շարժումներն այն մանր բուրժուազիան եր առաջ բերել, վորը տուժել եր ռեֆորմներից և նորածագ կապիտալիզմից. այդ մանր բուրժուազիայի համար միակ թշնամին, վորի տապալմանն եր նա ձգտում, կալվածատիրական ինքնակալությունն եր։ Ինչպես հայտ-

նի յի, մանր բուրժուան կապիտալիզմի վոսոխն և, ինչպես և բանվորը։ Բայց մինչդեռ բանվորը կապիտալի ստեղծած հասարակական արտադրության համայնացմանն և ձգտում, մանր բուրժուան — «ինքնուրույն» տնտեսության սիստեմի, մանր արտադրության կողմակից և։ Այն պնդումը, թե կապիտալիզմ չի լինի Ռուսաստանում — սխալ եր, վորովհետև արդեն վաղուց ի վեր Ռուսաստանը մտել եր կապիտալիզմի շրջանն ի դեմս առևտրական կապիտալի և արդեն սկսել եր թևակոխել արդյունաբերական կապիտալիզմի սահմանները, և հետո՝ համայնքը չեր կարող սոցիալիզմի հիմք լինել, վորովհետև նրա հիմքն անհատական աշխատանքն եր և վոչ թե համայնական արտադրությունը։

70-ական թվականներից սկսվում է ռեակցիա այդ հայացքների և շարժման դեմ. իսկ 80-ական թվականներին Պլեխանովը ցույց է տալիս այն հանգամանքը, վոր կապիտալիզմը սոցիալիզմի համար նախապայմաններ և ստեղծում. կապիտալիզմը մի բարիք է միջնադարի համեմատությամբ, վոր քանդում է հինը և շինում ապագայի հիմքերը։ Այդ տեսակետը պաշտպանելով՝ նա գնահատում է և նարոդնիկների առաջ բերած գրական շարժումը, վորի գրական կողմը համարում է հետևյալը։ — Կռվելով կառավարության և կապիտալիզմի դեմ, նրանք առարկայականորեն աջակցում էին դեմոկրատիկ կարգերի մուծմանը և կապիտալիզմի զարգացմանը, թեպետև յենթակայականորեն հակառակ էին թե մեկին և թե մյուսին. նրանք պարզ նահապետական կարգերին դառնալու կողմնակից չէին։ Գորբաչեվն այդ բանի պատճառը համարում է նրանց «սոցիալիստ» լինելը։ Իր «Կապիտալիզմ ու ռուս գրականությունը» տաղանդավոր գրվածքի մեջ, նա շեշտում է նարոդնիկների «ռադիկալիզմը», վորի պատճառը գտնում է հետևյալում։ —

60-ական թվականներից Ռուսաստանը մտնում է յեվրոպական խմաստով կապիտալիստական զարգացման շրջանը։ Նրան ի սպաս է դուրս գալիս ինտելիգենցիան այնպիսի խոշոր թվով, վոր տվյալ զարգացման ասպարեզը սպառել և ոգտագործել չեր կարող։ Թե այդ պատճառով և թե այն հանգամանքը նկատի առնելով, վոր տնտեսության աճումը շահավետ եր նրա համար, այդ ինտելիգենցիան դառնում է ռադիկալ վոչ միայն կյանքի, այլ և գեղարվեստական գրականության մեջ։ Նա հանդես բերեց «կոպիտ նատուրալիզմ» ազնվական արվեստին հարված հասցնելու համար. կարևորություն են տալիս արվեստի հետևանքներին ու նպատակներին և մեկդի յեն վանում այդ նպատակներին հասցնող գեղարվեստական միջոցները։ Գրական շուկան նվաճում է ֆելիետոնն ու ազգագրական պոպուլեր վեպը։ Վորովհետև արվեստը թերակատար և նման վեպի ու ֆելիետոնի մեջ, ուստի և՝ Գորբաչեվի կարծիքով՝ այսոր նրանք մեծ մասամբ անընթեռնելի յեն („Капитализм и русская литература", стр. 41)։

Այդ գրականության հետ թե իդեոլոգիապես ու թե գեղարվեստական տեսակետից սերտ կապ են պահել հայ գյուղագիրները։ Սկզբունքային նմանություններն ու տարբերությունները, վոր մենք տեսանք ռուս և հայ

կյանքի զարգացման պայմանների մեջ, դրել են իրենց կնիքը հայ հեղինակների կրած ազդեցության վրա։ Մի յերկու նուազ բերենք իբրև մեր ասածների լուսաբանություն։

Ի՞նչ արձագանք է գտել Հերցենի կամ, ավելի վորոշ, Չերնիշևսկու հրապարակախոսությունը մեր գյուղագիրների յերկերում։ Այդ հրապարակախոսությունն ամենից ցայտուն արձագանք է գտել Ադելյանի գրվածքներում։ Գրականության պատմությունից հայտնի յե, վոր Չերնիշևսկու „Что делать?“ վեպը (գրված է Պետրոպավլովսկու բանտում) խոշոր ազդեցություն է գործել ռուս և հայ ինտելիգենցիայի վրա։ Այդ մասին պարզ ցուցմունքներ են տալիս Պիսարևը, Կրապոտկինը և Գեվորգ Ղարաջյանը իրենց գրվածքներում։ Նրանք պնդում են, վոր այդ վեպը յեղել է ժամանակի յերիտասարդության համար «կռվի դրոշ»։

Ադելյանի յերկերից յերևում է, վոր Չերնիշևսկու հիշյալ վեպը, մանավանդ Վերա Պավլովնայի համայնասիրական յերազը, վորոշ ազդեցություն է թողել նրա աշխարհայացքի վրա։ Մեր հեղինակը «Ներհակ Առաքել» վեպում մի իդեալիստ վարժապետ ունի (Սմբատ), վոր ամբողջապես վոգևորված է այդ վեպով։ Ճիշտ է, Ադելյանը ռուս հեղինակի անունը չի տալիս, բայց նամակների մեջ գործ է ածում «ի՞նչ անելու», «ի՞նչ պիտի անել» հարցերը, վորոնք կանգնած են հայ ինտելիգենտի առաջ. հեղինակը խորհրդավոր կերպով չակերտների մեջ է առնում հիշյալ հարցերը, յերևի, աղբյուրը մատնանշելու նկատառումով։ Նույն Չերնիշևսկու կամ, ավելի վորոշ, նարոդնիկական մտքի արտահայտություն յերևում է, յերբ Ադելյանը խոսում է «ժողովրդի» հանդեպ ունեցած հայ մտավորականների «պարտականություններ», «լուրջ և ոգտակար» աշխատանքի մասին (տես «Մուրճ», 1894 թ. №№ 7—8, յեր. 1005)։

Բացի իդեոլոգիայից, կամ գուցե այդ պատճառով, Ադելյանը կրել է նաև գեղարվեստական ազդեցություններ նարոդնիկական գրականությունից, հատկապես Գլեբ Ուսպենսկուց։ Գյուղական տիպարների դասակարգային բաժանումները, ինտելիգենտների և գյուղացիների փոխհարաբերության պատկերացումը, կուլակի և մանր գյուղացու տարբեր վերաբերմունքը դեպի հողը, «հողի և կապիտալի» տարբեր իշխանությունների ըմբռնումը և, վերջապես, գրության ֆելիետոնային ձևը—այդ բոլորի սահմաններում կան շփումներ յերկու հեղինակի միջև։ Յերկուսն էլ գտնում են, վոր կապիտալիզմը («լուսավորությունը») գյուղ մուտք է գործում վաշխառուների, կուլակների միջոցով. յերկուսն էլ գտնում են, վոր վոչ միայն տնտեսական, այլ և բարոյական հեղաշրջում տեղի ունի գյուղում հիշյալ հերոսների պատճառով։ Մանավանդ կնոջ վիճակի պատկերացման խնդրում Ուսպենսկու հետ շփման կետեր ունեն վոչ միայն Ադելյանը, այլ և մեր մյուս գյուղագիրները, որինակ՝ Ագապյան, Արշակ Շահնազարյան, և այլք։ Թե Ուսպենսկու և թե Շահնազարյանի հերոսները ծախում են իրենց կանանց՝ հացի խնդրի պատճառով, թե Ուսպենսկու և թե Ագապյանի հերոսները քաղաք գնալով, այնտեղ մնալով՝ գյուղ են բերում «լուսավորության պտուղները» (Ծոլատոյ), և այլն։

Մի ուրիշ հեղինակ ևս — Զլատովրատսկին — իր հոռետես վերաբերմունքով դեպի կուլակների ապագան՝ ազդել է հայ գյուղագիրներից վոմանց վրա։ Զլատովրատսկին իրեն մխիթարում եր նրանով, վոր կուլակներն ավագի վրա յեն տուն շինում։ (Հետաքրքրական է նկատել, վոր Ադելյանը նույն միտքն արտահայտում է հայկական առածով՝ — քամու բերածը, քամին կը տանի)։ Ինչու՞։ — Վորովհետև նրանք կշտանալ չգիտեն. ինչքան խժռում են, այնքան ցանկություն է առաջանում ավելին խժռելու։ «Ահա, սիրելիք, ինչումն է նրանց կործանումը», ասում է Զլատովրատսկու հերոս Մինը (տես „Устои")։ Ռուս գրականության մեջ կարծիք կա, վոր նույն իսկ իր իդեալական հերոսները Զլատովրատսկին առել է կյանքից։ Զլատովրատսկու ստեղծագործության հիմքը վոչ թե յերևակայությունն է, այլ բնական տնտեսության շրջանի գյուղացիության հակամարտությունը նորամուտ կապիտալիզմի դեմ (տես Краснихфельд, „В мире идей и образов", т. III. стр. 120)։ Հայ գյուղագիրների իդեալիստներն ևս ժխտում են «լուսավորությունը», դրա տակ հասկանալով այն ամենը, ինչ վոր խախտում է «պապենական կարգերի» հիմքը։ Այսպես որինակ՝ Մուրացանի իդեալիստները պնդում են, վոր «լուսավորությունը», այսինքն կապիտալիզմը բարքերն այլանդակում է, հին, պարզ հարաբերությունները վատթարացնում։ Մուկուչի բերանով հեղինակն ասում է. «վորդին ուզում է հորը խեղդել»։ Մի ուրիշը պնդում է. «աշխարհի շառը շատացել է»։

Չնայած այն հանգամանքին, վոր ռուս նարոդնիկներն ոպպոզիցիա յեն կազմում կապիտալիզմի դեմ, բայց այնուամենայնիվ նրանք չեն ժխտում քաղաքի բարերար դերը։ Մի հանգամանք, վոր հայ գյուղագիրները կամ չեն նկատում, կամ հազիվ հազ են նշմարում։ Այսպես. ռուս գյուղագիր Կարոնինը շատ անգամ իր գյուղացի հերոսներին քաղաք է ուղարկում և նրանց «մարդ շինում»։ Հայ գյուղագիրը նման դեպքում չի զլանում քաղաքի կործանիչ դերը մատնանշել։ Որինակ. գյուղացի Միխայլոն („Снизу вверх" վեպում) տնտեսական հարկադրանքով քաղաք է նետվում։ Նույն պայմաններում քաղաք է վտարվում Ադապյանի Մուսին։ Բայց մինչդեռ վերջինս քաղաքում կորչում է, Միխայլոն բանվորական շրջան մտնելով՝ դառնում է մի վորակյալ, գիտակից աշխատավոր։ Ցերկու հեղինակի տարբեր վերաբերմունքի պատճառն այն իրական հանգամանքներն են, վորոնց մեջ վորոշ զանազանությամբ ուռճացել է կապիտալիզմը մեզ մոտ և Ռուսաստանում։

Բայց ադմինիստրացիան, վոր յերկու տեղումն էլ նույնն եր իր եությամբ՝ գյուղական ներքին կյանքում հանդես է գալիս նման գործելակերպով։ Պռոշյանի «Ցեցեր» վեպում գյուղական համայնքի վարչության ձևը, ընտրություններն ու կուլակների միտումնավոր գործելակերպը գրեթե նույնն են, ինչ վոր ռուս գյուղագիր Նաումովի «Գյուղացիական ընտրություններ» վեպի մեջ է նկարագրված։ Վերջին վեպում կուլակները կառավարության միջոցով կռվում են ազքատ գյուղացիության դեմ, նրանց ընտրյալին բանտարկել տալով՝ հասնում են իրենց հետին նպատակին։ Ռուս

ինտելիգենտները «գնում էին գյուղը» նման ընտրյալներին պաշտպանելու համար, զորավիգ հանդիսանալու այն փոքրաթիվ նախաձեռնող գյուղացիներին, վորոնք փշրվում էին ադմինիստրացիայի և կուլակության յերկայնաքարի արանքում։ Գյուղ գնացողներն Ռուսաստանում շատ էին, մեզ մոտ քիչ են այն պատճառով, վորովհետև ռուսական կյանքի զարգացման թափը և դրա հետևանքով՝ «ինտելիգենցիայի գերարտադրությունն» ավելի շատ եր, քան Անդրկովկասի պայմաններում։ Գիտարեն ասել և, վոր գործ փնտրող ինտելիգենտը «պատրաստ և իր մտքի վերջին 10 կոպեկանոցով բանկ խաղալ»։ Ռուս գրողներից վոմանք, որինակ՝ Մաքսիմ Գորկին, փորձում են ռուս ինտելիգենցիայի հայտնի „хождение в народ“ յերևույթը բացատրել նման պատրաստակամությամբ (տես նրա „Разрушение личности“ հոդվածը)։

Նույնպես և Պուշկինի հայտնի միկիտան Սաքոն գրեթե նման բնությամբով և գործելակերպով հանդես և բերված ռուս գյուղացիների յերկերում, մանավանդ Կարոնինի „Фантастическия замыслы Минаи“ վեպում, ուր դուրս և բերված մի կուլակ, վոր գյուղացիներին ալկոհոլ ծախելով և կեղեքելով հարստանում և։ Այդ կուլակը կոչվում և Ցեպիֆան Իվանով։ Նա ևս մի ամբողջ գյուղաշրջան իր ցանցերի մեջն և առնում, չթողնելով գյուղացիների ձեռքին վոչ հացի, վոչ ել այլ պաշարների ապահովություն։ Նույն Կարոնինը «Ցեղրայրներ» վերնագրով մի պատմվածքում դուրս և բերում բարի գյուղացու և խորամանկ, խարդախ, խարեբա կուլակի տիպեր, իրար հակադրելով նրանց, ինչպես «Հացի խնդրի» թեչանն և հակադրված «աշխարհավեր» վաշխառուին։

Այս նմանությունները մեջ բերելով՝ չենք ուզում ասել, թե հայ գյուղագիրներն յեղել են ռուս հեղինակների սոսկ արձագանքը։ Վոչ։ Մեր և ռուսական կյանքը շատ նման դծեր և զարգացման նման ուղիներ են ունեցել, վորոնք թելադրել են և՛ նման գրական ստեղծագործություն։ Պոլենցի, Բալզաքի, Զոլայի, Աուերբախի, Ժորժ Զանդի և այլոց նկարագրած գյուղն ու գյուղացին մեզ համար շատ կողմերով խորթ են, իսկ ռուսական գյուղն ու գյուղացին հարազատ, վորովհետև շատ բան մեզ մոտ և Ռուսաստանում նույն հունով և ընթացել գրեթե հարյուրամյա մի շրջանում։ Հետևապես հայ և ռուս գրողների նմանություններից շատ շատերն որյեկտիվ արժեքների զուգատիպություններ են, քան թե սուբյեկտիվ փոխառություններ։

Գ

Այժմ մնում և մի հարց պարզել։ Գրական-հասարակական ի՞նչ արժեք ունի հայ գյուղագրությունն այսորվա կամ, ավելի շուտ, մեր ժամանակի համար։ Վերն և նրա գեղարվեստական և հասարակականորեն մանկավարժական-դաստիարակչական արժեքը։ Ի՞նչ չարիքների դեմ են կռվել հայ գյուղագիրները, ընդվզման ի՞նչ փաստեր են հայտնաբերել և ի՞նչ հասարակական նպատակներ են իրենց առաջադրել։

Սկսենք այս վերջին կետից։

Սակավահողություն, ազնվականություն, հնավանդ տնտեսություն և վաչկատուն հարևանություն—ահա այն չարիքները, որոնց դեմ ծառայել են հայ գյուղագիրները բոլորը մեկեն կամ մեծամասնությամբ։ Այդ չարիքները գյուղագիրները չեն ստեղծել, այլ առել են կյանքից՝ յերևույթների ուսումնասիրությունից յելնելով. այդ չարիքների շատախոս հետազոտությունները լեցուն և մեր հրապարակախոսության պատմությունը։

Ամենամեծ չարիքն անպայման սակավահողությունն է։ Կարելի յեր մեջ բերել Հայաստանի I Գյուղատնտեսական Համագումարի որոշանագրությունները քաղվածքներ՝ համոզիչ դարձնելու համար այդ չարիքի ամբողջ ծավալը։ Այդ համագումարում առաջ բերված վիճակագրությունը ընդգրկում է 1922 թվականը. ճիշտ է, նախորդ տարիները վորոշ փոփոխություններ են մտցրել հին կարգի մեջ, բայց թվերը շատ մոտ են հին ռեժիմի տվյալներին սակավահողության բաժնում (հոդվածս շատ չերկարացնելու համար մատնանշենք և անցնենք մի աղբյուր. М. Шагинян. „С. Армения. Армения сельскохозяйственная, 1923)։

Գլեխանովը «սարսափելի յերևույթ» է համարում սակավահողությունը գյուղացու համար։ Սակավահողությունը, ասում է նա, գյուղացու համար միշտ էլ սարսափելի յերևույթ է. դա դառնում է ավելի ևս սարսափելի, յերբ հողագործությունը ոգտաբեր յեկամտի աղբյուր է հանդիսանում (т. IX. стр. 195)։ Իր «Գաղդրագիտություն» ձեռնարկում Ցարոսլավսկին ռուս գյուղացիության սակավահողության պերճախոս վիճակագրությունն է տալիս։ Ժողովրդի աճման հետևանքով, հնավանդ տնտեսությունը նկատի առնելով, հողի մասնավոր սեփականության ստեղծած պայմաններում՝ առաջ է յեկել սակավահողություն։ Մեզանում նույն ընդհանուր պայմաններին միանում են մեր յերկրի առանձնահատուկ հանգամանքները, որոնք ավելի յեն ծանրացնում յերևույթը։ Այդ հանգամանքների մեջ վերջին տեղը չեն բռնում մեր յերկրաբանական վիճակը, հողի կազմը, կայլն։ Հետևյալ կերպով է բնորոշել Զարենցը հայ գյուղացու սակավահողությունը իր «Մաճկալ Սաքո» գրվածքում։

Մաճկալ Սաքոն իրանց գյուղում
Իրա որում ապրում եր խեղճ.
Գեղի ծերին ուներ մի տուն,
Ցերկու թիզ հող վարելատեղ*)
Եդ վարելու տեղն էլ վոր կար—
Գեղից հեռու, քար ու քոլոտ.
Արտը հեռու, վարը դժար,
Աշխատում եր տարին բոլոր...

Մի ուրիշ, նույնպես մեծ չարիքը, հողի մասնավոր սեպականությունն եր։ Դա ընդհանուր չարիք եր թե համայն Ռուսաստանի և թե

*) Ընդգծումը մերն է (Ա. Տ.)։

Անդրկովկասի համար։ Դեզիչկորիի տված վիճակագրությունն ապշեցուցիչ է։ Նրա ասելով՝ գյուղացիության ձեռքին գտնվում էր հողի 6.2%, իսկ մնացյալ 93.8% պատկանում էր պետական գանձարանին (57.8%). աղնվականությանը (31.3%), հոգևորականության և վաճառական դասին (2.4%), արքունական վարչության (1.9%) և յեկեղեցիներին ու վանքերին (0.4%)։ Թվերը բերված են „Заря Востока", 1926, № 1112-ում։

Հնավանդ տնտեսության մասին մտերմաբար խոսել և գյուղատնտես Խոջա-Մնյանթյանը, իսկ վաչկատուն հարևանների մասին Գ. Մնացականյանը...

Այդ բոլոր չարիքների դեմ յերկու միջոց և ցուցել հայ գյուղագրությունը. բարոյական քարոզչություն և գործով ընդվզում։ Թե մեկ և թե մյուս բաժնում հայ գյուղագիրները հանդես են բերել ինդիվիդուալիստական աշխարհայացք։ Ինչպես տեսանք, ճիշտ կերպով նկատել էր Պլեխանովը թե՝ բարոյական քարոզիչը միշտ նկատի ունի առանձին անհատների կատարելագործությունը, այդ պատճառով էլ նա բնականորեն կանգնում է ինդիվիդուալիզմի տեսակետի վրա (տես т. XIV, стр. 223)։ Հայ գյուղագիրների մեծամասնությունը տվյալում էր մանր-սեպհականատիրական իդեալների վոլորտում, ուստի և վորևե լուսավոր փարոս նա չէր կարողանում ցուցնել՝ ստեղծված պայմաններից դուրս գալու համար։ Հայ գյուղագիրների մեծամասնության գաղափարախոսական հիմնաշենքը կղզիացած հայ գյուղացին էր, մի գյուղացի, վոր իր տնտեսության հենց այդ կղզիացման պատճառով անճարակ է թե բնության պատահարների և թե իր գլխին պայթող հասարակական թշվառությունների հանդեպ։ Տնտեսագետ Խրյաշչևի ասելով՝ նույն իսկ զավակների այս կամ այն սեռին պատկանելու հանգամանքը նման գյուղացու տնտեսության համար ունի ճակատագրական նշանակություն։ Այդպես էլ՝ ձին յեթե գողանում են կամ սատկում է, հրդեհը, վոր վոչնչացնում է ստացվածքը, անժամանակ յեկած կարկուտը կամ անձրևը, բոլորն էլ սպառնում են մանր, կղզիացած, ինքնուրույն արտադրողի տընտեսության բնականոն զարգացմանը։ Ընտանիքի կազմի տարբերությունները, անասունների, ինվենտարի տարբեր քանակությունը այդ ամենն առաջ են բերում շահերի զանազանություն, կղզիացում, հակասություններ։ Նման գյուղացու ընդհանուր հատկանիշը՝ արտադրության շրջանում մեկուսացումն է (տես Группы и классы в „крестьянстве", стр. 14—14)։

Այդ բոլորով պայմանավորված և հայ գյուղագիրների լալկանությունը, այսինքն սուբյեկտիվ զեղումներով օբյեկտիվ չարիքները վերացնելու յեղանակը։ Շատ բնորոշ և այդ տեսակետից հայկական այն առածները, վոր իրենց գրվածքներում մեջ են բերում հայ գյուղագիրները։ Ճիշտ և, հայ գյուղացին և ստեղծել «գեղ կանգնի՝ գերան կ'կոտրի» առածը, բայց ավելի շատ և առավել հաճախ կրկնվում են կրավորականություն արտահայտող առածներ, ինչպես՝ «Զևոքը, վոր չես կարող կարել՝ պաչիր, դիր, ճակատիդ»։ Մի շարք առածների մեջ հայ գյուղացին շեշտում է իր կղզիացած տնտեսության վոլորտությունը։ «Անասուած տեղը ինա, անարխա (անոդնական) տեղը մի ինա» (տես Պ. Պառչյան, «Հացի խնդիր»)։

Կղզիացած գյուղացին իր ընդվզումներին ավել և անհատական բնավորություն։ Մեր բոլոր գյուղագիրների յերկերում շատ հաղվագյուտ են մասսայական ըմբոստացումների փաստերը, յեթե այդպիսիներն էլ կան՝ շատ դիպվածական բնույթ ունեն և հեղինակների կողմից մի առանձին ուշադրության ու մանրապատում նկարագրի չեն արժանանում։ Շատ են և ավելի պերճախոս անհատական ընդվզման դեպքերն ու նկարագիրները։

Հանրային ընդվզման նմուշներից մեկը տվել է Գ. Բարկենցն իր «Գեղ կանգնի՝ գերան կ'կոտրի» պատմվածքում (տես «Մուրճ», 1894, № 5), նման մի բան պատմում է Ղ. Աղայանը իր «Ցերկու քույր» վեպում։ Ցերկու դեպքումն էլ գյուղացիների յելույթը կրում է անկազմակերպ բնավորություն. յերկու դեպքումն էլ գյուղացիները պարտվում են դասակարգային վարչության և դատարանի հարկադրանքով։ Ցերկու դեպքում էլ հեղինակները, մանավանդ Գ. Բարկենցը, հույս չունեն գյուղացիների ինքնուրույն շարժման վրա, այլ բոլորանվեր փարում են ինտելիգենցիայի գյուղական գործունեության և ղեկավարության գաղափարին։ Այդ կողմից շատ բնորոշ են Ղ. Աղայանի «Ժամանակակից ատենախոսություն» հոդվածը և Ա. Արասխանյանի առաջարկը գյուղը բարեգործության միջոցով փրկելու մասին, ժխտելով հողի մասնավոր սեպականության դեմ կռիվը (տես «Մուրճի» 1897 № 9 և «Հողի արդյունաբերությունը ...» (յեր. 68)։

Բայց հենց իրենք գյուղագիրները վերջնականապես ի չիք են դարձրել այդ յեզակի հույսն ևս, պատկերացնելով ինտելիգենտների գործունեության ապարդյուն լինելը։ Մուրացանի Կամսարյանը («Առաքյալ») գյուղում չի մնում, բայց Բարկենցի Ալեքսանդրը («Նորեկ») ինչպես և Փափազյանի Ալեքսանդրը («Ժայռ») մնում են և գործում, մեկն իբրև վարչական պաշտոնյա, մյուսն իբրև փաստաբան։ Մեկին պաշտոնանկ են անում, մյուսին՝ բանտարկում։ Այդ բոլորից հետո, թվում է թե, հայ գյուղագիրները պետք է հեղաշրջական գաղափարախոսություն հանդես բերեին, բայց մանր-բուրժուական մտայնության դժգոհությունը «կարգից»—շատ հեռու չեն գնում։

Ինտելիգենտների գյուղական գործունեության խնդիրը լուսաբանելու համար շատ հետաքրքրական կլիներ մի նմուշ բերել ռուս գրականությունից։ Տուրգենևն իր „Новь“ վեպում կողմնակից է ինտելիգենցիայի լուսավորական գործունեությանը, տիրրորիստական ընդվզումներին նա համամիտ չէ։ Նրա կարծիքով «անմշակ հողը պետք է հերկել վոչ թե մակերեսային արորով, այլ խորն ընդգրկող գութանով»։ Վորովհետև նա նկարագրել է շարժման սկիզբը, ուստի և իր գլխավոր հերոսին (Նեժդանովին) համլետակոն գծեր է տվել, մի բան, վոր՝ Կրապոտկինի կարծիքով՝ շատ ճիշտ եր։ Սկզբնական «առաքյալներն» յերկու թերություն ունեին. նախ՝ չեին ճանաչում գյուղը, յերկրորդ՝ նրանց մոտ, ինչպես Շեքսպիրի հերոսը կասեր՝ «բնածին ծաղիկը վճռականության թոշնում եր մտածության դժգույն յերանգից»։ Շլիսսելբուրգցի Մ. Պոպովն «առաքյալների» մասին ասում է, թե՝ նրանք դիմում եյին գործունեության «գլխի ուղեղով», տրամաբանական դատողությունների ուղիով, իդեալիստական պատմահայեցողությամբ (տես «Былое», 1906, № 2)։

Ինտելիգենտ այն տիպերը, վոր տվել են հայ գյուղագիրները, նման շատ գծեր ունեն. յերկու դեպքումն էլ սայթաքման գլխավոր պատճառն

այն եր, վոր «առաքյալները» փոխանակ գյուղացու տնտեսության մեկուսացումը վերացնելու, ձգտում էին նրանց մտածողության կոնսերվատիզմը շտկելու. գյուղացիական ապստամբությունների պատմությունը ցույց և ավել այդ ուղու սխալ լինելը։ Ցեթե Գուրիայի գյուղացիության շարժումը վորոշ չափով հաջողվել և 1905 թվականին, դրա պատճառն այդ շարժման ուսումնասիրողները հետևյալ հանգամանքն են համարում։ «Գուրիայի գյուղացիության ճնշող մասն իր տնտեսական դրությամբ ավելի մոտ եր գյուղական պրոլետարներին, քան թե ինքնուրույն սեպհականատերերին... Գուրիայում հարուստ գյուղական շերտը—բուրժուազիան շատ թույլ եր, ուստի և նրա ազդեցությունը յերկրագործական գյուղացիության կյանքի ընդհանուր ընթացքի վրա չնչին եր... Դրա հետ միասին մասսաների մեջ (սոցիալիստական) գաղափարներ տարածում եյին հենց նույն գյուղացիք, վորոնք արդյունաբերական քաղաքում բանվորական բովով եյին անցել» (տես Каландадзе и Мхеидзе. „Очерки революционного движения в Гурии“): Այստեղ ներկա յին շարժման հաջողության համար նշանակալից յերկու պայման. մասսաների տնտեսական պատրաստականությունը և գաղափարախոսների դասակարգային պատկանելությունը։ Այդ յերկու պայմաններն ել «առաքյալների» գործունյության մեջ պակասում են, և նրանց գործը վիժում և։ Նույն պատճառներով հայ մանր սեպհականատեր գյուղացիների շարժումը կրում և անհատական բնույթ, ստանալով հատ--հատ, պատահական ընդվզումների թեքում։ Ծեծ, հրդեհ, սպանություն—ահա այն միջոցները, վոր գործադրում են հայ գյուղացիք կուլակության դեմ։ Հայ գյուղագիրների մեծամասնությունը նման անհատական յելույթներից դենը չի անցնում, մասսայական, կազմակերպված և նպատակավոր կռիվ չե պատկերացնում։ Այդպես և մանր գյուղացու բողոքը իր շահագործողի դեմ, այդպես անզոր և նաև տղամարդուց տնտեսական կախում ունեցող հայ կնոջ ըմբոստացումը, վորը անեծքից կամ՝ անզոր լացից այն կողմը չի անցնում։ Ամենուրեք կազմակերպության բացակայություն, վորի հիմքը մանր-գյուղացիական տնտեսության բնույթի մեջ պետք և վորոնել։

Այս բոլորից հետո հեշտ և վորոշել հայ գյուղագիր գրողների գրական, յեթե կուզեք՝ գեղարվեստական արժեքը։

Ամենից առաջ ինքնուրույն գոյության իրավունք ունի՞ մեր գյուղագրական գրականությունը։ Այս հարցի պատասխանը դրական և վոչ միայն անցյալի, այլ և հենց այս որվա տեսակետից։ Շատ ճիշտ կերպով և նկատել Բուխարինը ասելով, գյուղացու սոցիալիստ դառնալը պիտի կատարվի տնտեսական, կենցաղական և հոգեբանական այնպիսի ուղիներով, վորոնք տարբեր են բանվորի ուղիներից, ուստի և **առանձին** գյուղագրական գրականության կարիք պետք և լինի։

Մեր գյուղական վեպը, ինչպես և Ցեվրոպական ու ռուսական գյուղացիական գրականությունը զարմանալի կերպով իրար զուգադիպում են ժամանակագրական տեսակետից։ Գյուղական վեպի կամ պատմվածքների սկիզբը Ցեվրոպական գրականության մեջ դրել և գերմանացի Աուերբախը,

վոր շվարցվայլդյան իր պատմվածքները հրատարակել է 1843 թ., այնուհետև Ժորժ Զանդի գյուղական պատմվածքները լույս տեսան 1846 թ., Տուրգենևի հայտնի «Հիշատակարանը» լույս տեսնել սկսեց 1848 թ.։ Դրա հետ միասին պետք է նկատի առնել, վոր Աբովյանի «Վերքը» թեև լույս է տեսել 1858 թ., բայց արդեն գրված պատրաստ է յեղել 1841 թվին։

Այսպես, ուրեմն, անցյալ դարի քառասնական թվականները գյուղագիրների հանդես գալու պերյոդն է։ Ինչով բացատրել այդ յերևույթը։ Տուրգենևը յերկու պատճառ է ցույց տալիս. 1) հեղինակների ձգտումը թողնել քաղաքի ներքուստ յերկպառակված տիպերին և ընդգրկել գյուղական ամբողջական դեմքեր, և 2) նրանց գրավում եր գյուղական բնությունն իր թովչանքներով (տես Грузинский, „Тургенев“, 1918 г. стр. 86—87)։

Իսկ Ժորժ Զանդը՝ փետրվարյան հեղափոխությունից հետո, վերադարձրակելով իր գյուղական պատմվածքները, հայտնում է, թե քաղաքային դասերի թշնամությունը, փոխադարձ ատելությունն իր մեջ կարիք է առաջ բերել գյուղական «պարզ բարքերին, քնքույշ զգացմունքներին դիմելու» (ibid. 92)։

Ի հարկե, այդ բոլոր խոստովանություններում շատ չնչին չափով ճշմարտություն կա, բայց հիմնական պատճառի մասին վոչ մի խոսք չի ասվում։ Գյուղացիական գրականության սկզբնավորությունը զուգադիպում է կապիտալիզմի վերելքին և նրա ներարշավին դեպի գյուղը, վորի հիմքերին վտանգ եր սպառնում նոր յերևույթը։ Շատ բնորոշ է, վոր գյուղագրությունը բնականորեն սկսվում է յեվրոպական այն յերկրներում, ուր հոծ մեծամասնությամբ հողին կպած մանր-գյուղացիություն կար.—Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա։ Աբովյանի վեպում անգամ գյուղի և «քաղաքի» հակամարտությունն է հիշված, «գյուղական» շահերի պաշտպանությունն է շեշտված։ Շատ բնորոշ է և այն հանգամանքը, վոր թե Ցեվրոպայում և թե մեզ մոտ «քաղաքը» գյուղագիրների յերկերում հանդես է բերված իրոնիկ և կարիկատուրային շարիխներով, մի հանգամանք, վոր առհասարակ դասակարգային քննադատություն և մերկացնում և մի կողմ վանում «գյուղական թովչանքների» հրապույրը։ Գրական այդ ձևերի մեջ կա խորունկ հասարակական բովանդակություն։

Մեր գյուղագիրների գրական ամենախոշոր առավելությունն այն է, վոր նրանք հոյակապ կերպով գիտեն այն աշխարհը, այն միջավայրը, վորոնք նյութ են մատակարարել նրանց գրչին։ Այսոր մեր գյուղագիրները, յեթե վորևե գրական արժեք ունեն, դա հենց նրանց լավ գյուղաճանաչությունն է, այն **օբյեկտիվ արժեքների** մերկացումը, վոր նրանք կատարել են իրենց ժամանակին։ Ցեվ այսորվա գյուղի անցյալն ըմբռնելու համար դեռ բավական չէ պատմությունը, հասարակագիտությունը, այլ և անհրաժեշտ աղբյուր է մեր գյուղագրությունը, վորքան էլ նա գեղարվեստական մի մեծություն չէ, վորպես այդպիսին։ Այսոր վորոշ գյուղագիրներ շատ դժվարությամբ են կարդացվում նրանց թերի արվեստի և փոքր տաղանդի հետևանքով (որինակ՝ Ալեք. Արարատյանը)։

Շատ խստապահանջ մեկը այսպես կընորոշեր հայ գյուղագիրների գեղարվեստական արժեքը.—մեր գյուղագիրները, վերջ ի վերջո, տվել են ազգագրական-կենցաղագրական պատմվածքներ, վորոնց գլխավոր եյությունը կազմում է տեղական առանձնահատկությունների ցուցադրությունը։ Այդ բանը նրանք կատարել են բնորոշ լեզվով ու վոճով։ Կենցաղը՝ թեև հաճախ ճիշտ և աշխույժ է պատկերացված, բայց գլխավորապես ըմբռնված է արտաքուստ և տնեկդոտային յեղանակով, դեմքերը հաճախ դիպվածական են և վոչ թե տիպական, իսկ լեզուն վոմանց մոտ, թեև ժողովրդական է, բայց սեթևեթված և արվեստակյալ։ Մեծ մասամբ նրանց տրված է թույլ տաղանդ և սենտիմենտալ հոգեբանություն։ Նրանց ամենախոշոր թերին իրենց աշխարհայացքի նեղությունն է և սխալը, վորոնք բղխում են նրանց դասակարգային պատկանելությունից։ Հաճախ հայ գյուղագիրների մոտ կուլակը հանդես է գալիս վոչ թե իբրև մարդ, այլ մի կատարյալ հրեշ։ Մինչդեռ հենց ռուսաց նորագույն գրականության մեջ կան գյուղագիրներ, որինակ, Նեվերովը, վորը տալիս է կուլակի կենդանի տիպը։ Այդ ռուս հեղինակը կուլակին չի սիրում, բայց նրան մարդագայլ չի դարձնում, այլ մնում է արվեստի պահանջած չափի սահմաններում, չափ, վոր արվեստի համար նույնն է ըստ Լ. Տոլստոյի, ինչպես տակտը սովորական մարդկային հարաբերությունների մեջ։ Հայ գյուղագիրների մի այլ թերին նրանց տիպերի միանմանությունն է, վոր հետևանք է հեղինակների հոգեբանական ներքնատեսության (ինտուիցիա) անզարգացած լինելուն։

Չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ, մեր յերեկը վորոշ արտացոլում է ստացել հայ գյուղագիրների յերկերում և ինչպես ասել ենք, մեր գյուղի անցյալն ուսումնասիրելու համար նրանք ոժանդակ աղբյուր կարող են ծառայել, միայն թե զգուշությամբ պետք է մոտենալ նրանց մտայնությանն ու նկարագրին, վոր չափով սրանց մեջ անդրադարձել են գյուղագիրների դասակարգային պատկանելությունն ու միտումը։ Մեր միտքն ապացուցելու համար մի նմուշ բերենք։ Որինակ՝ Բարկենցը։ Նա շատ լավ է հասկանում հայ գյուղացու տնտեսության համար մեր յերկրի վառոդման գործի մեծ կարևորությունը։ Իր այդ ճիշտ հասկացողությունը նա արտահայտել է հետևյալ բնորոշ պատկերով. «Այն ժամանակ, յերբ ցորենը իր հատը լցնում է հյութով և պետք է վերջին անգամ ջրել արտը՝ ջրի կաթիլը արյան կաթիլ է դառնում» (տես «Նորեկ», յեր. 39)։ Բայց յերբ նույն Բարկենցը իդեոլոգիայի սահմաններն է թևակոխում, դառնում է միանգամայն խոցելի։ Այսպես որինակ՝ «Հայոց հարցի լուծումը» գրվածքում, հղոր ռուս պետականության պաշտպանությունք է քարոզում, վորպես համադարման մեր գյուղացու սակավահողության դիմաց, կամ հետևյալ արտառոց միտքն է արտահայտում հիշյալ «Նորեկ» վեպում, ասելով. «Հայերն իրենց թվի սակավության պատճառով չեյին կարող իրենց ազգությունն ու հավատքը կռվի ղենք ընդունել, այլ ստիպված եյին համամարդկային գաղափարների դիմել» (տես. յեր. 143)։

Նույնը պիտի ասել Ստ. Տեր-Ավետիքյանի մասին։ Յերբ նա իր ապ-

բած, դիտած գյուղական կյանքն է պատկերացնում և առարկայորեն նկարագրում, նա շատ հաջող եղեր է տալիս։ Այսպես որինակ. գյուղական կուլակները, իրենք ընիկ գյուղացիներ լինելով՝ շատ լավ գիտեն շինականի հոգեբանությունը, և իրենց շահագործման յեղանակները հարմարեցնում են նրա մտածողության աստիճանին։ Ստեփան Տեր-Ավետիքյանի «Պատմվածքներում» մի կուլակ այսպես և պատճառաբանում կաշառքի տարբեր քանակի ազդեցությունն իր հպատակի հետ խոսելու ժամանակ. «Ձիուդ վոր կես չափ գարի տաս՝ բա նա քեզ սարի կատարը կբարձրացնի. խսկի չկարծես...»։ Մի այլ աֆորիզմ կաշառքի կրկնողության մասին. «կես չափ գարին ձիդ մարսեց, պետք է նորոգես, թե չե» (տես, յեր. 32—34)։ Այդպես համոզիչ չե նույն հեղինակը, յերբ իր ազգային-ռամկավարական գաղափարախոսությունն է դրվատում...

Այսպես ուրեմն, անպայման հայ գյուղագիրներն արժեքավոր են այն չափով, վորքան նրանք դիտել են և նկարագրել, դիտածը և նկարագրածը բացատրելիս՝ նրանք սայթաքում են. իդեոլոգիան նրանց ստեղծագործության «աքիլլեսյան գարշապարն» է։

Մեր գյուղագիրներից նրանք, վորոնք բավական աչքի զարնող տաղանդ ունին,(Գուշյան, Մուրացան, Ագայան, Սանդալ, Արշ. Շահնազարյան, Թումանյան, Աղայան, Ադելյան) տվել են հայ գյուղի դասակարգային շերտավորման համեմատաբար ճշգրիտ պատկերը։ Մի քանիսը դրանցից, որինակ՝ Սանդալը, բավական այժմեական և ակտուալ մտայնություն են հանդես բերում գյուղի հասարակական դիֆերենցիացիան նկարագրելու գործում։ Ցավ ընդհանրապես մեր վողջ գյուղագրությունից դուրս բերած շերտավորման տվալվորությունը վորոշ չափով չի հակասում այն վիճակագրական տվյալներին, վոր ռուս գյուղի դիֆերեցիացիայի համար տվել են տնտեսագետ Խրյաշչևը և ֆինանսիստ Բրյուխանովը (տես „Заря Востока“, 1926 թ. ապրելի 22)։

Հայ գյուղագիրներից վոմանք դասակարգային շերտավորումը հաջող կերպով պատկերացնելով, շատ քիչ փորձեր են արել աշխատավոր գյուղացիության և բանվորության շահերի ներդաշնակությունն ընդգծելու համար։ Այդտեղ, գուցե, դեր է խաղացել այն հանգամանքը, վոր մեր յերկրում զուտ բանվորական կենտրոններ չենք ունեցել։ Բայց ավելի կարևորն այդ բաժնում հայ գյուղագիրների մանր-սեպհականատիրական աշխարհայացքն է, վոր նրանց հնար չի տվել հասարակական զարգացման գալիք ուղին գծելու։ Շատ ճիշտ է նկատել Լ. Կամենևը, ասելով թե սոցիալիզմ գռեհկացնողներն են գյուղացիության և բանվորության մեջ անջրպետ տեսնում, մինչդեռ շահերի հակադրություն նրանց միջև չկա (տես «К вопросу о расселении крестьянства, стр. 272, изд. Куйбуч)։

Այդ կապի գիտակցությունը մեր նորագույն գյուղագիրների համար շատ նշանակալից մի հանգամանք է, վորովհետև ներկայումս վոչ մեկի համար գաղտնիք չե, վոր արդյունաբերության զարգացումը համընթաց է առաջ գնում գյուղի շերտավորման ուժգնության հետ, քանի վոր յերկրա-

գործությունը դեռ մանր սեպհականատիրական տիրող բնույթ ունի։ Այդ հանգամանքը մի հայտնի չափով ճիշտ պատկերացում է տացել Ակսելի գյուղագրության մեջ, իսկ ռուսաց նորագույն գրականության մեջ այդ խնդրին փայլուն ելք է նվիրել Սեյֆուլլինան։ Ըստ վերջինի՝ գյուղում ագրարային հեղափոխությունը, սկզբնական շրջանում, ընդունում է կատաղի կերպարանք, ուղղվելով այն բոլորի դեմ, ինչ վոր քաղաքն է հիշեցնում—դիրք, ինտելիգենցիա, և այլն։ Բայց նման մտայնության դեկավար Սոֆրոնի վորդին,-մի տիպիկ նոր գյուղացի, գնում է քաղաք և ապա վերադառնում միացնելու, զոդելու գյուղը քաղաքի հետ, այսինքն վերացնելու իր հոր՝ մի բնորոշ հին գյուղացու ձեռքով ստեղծված առանձնացումն ու անջրպետը։

Մանավանդ մեր սակավահող յերկրի համար գյուղի ինդուստրիալիզացիան շատ կարևոր նշանակություն ունի։ Հաշվել են, վոր մեր յերկրի անջրդի հողերի վոռոգումից հետո ևս հողի հետ կապված մեր գյուղացին միջին հաշվով 3/4 դեսյատին հողաբաժին պետք է ունենա (չհաշված արոտատեղիները)։ Հետևապես, պարզ է, վոր մեր գյուղատնտեսության առաջադիր նպատակը պիտի լինի ամերիկանացումը։

Գյուղատնտեսության ինտենսիֆիկացիայի, ինչպես և գյուղի ինդուստրիալիզացիայի տեսակետով խոշոր արժեք և ստանում կոոպերացիայի տեսականն ու գործնականը, վորոնք տարբեր աշխարհայացքից յելնելով՝ պաշտպանել են մեր գյուղագիրներից վոմանք. որինակ՝ Ադելյան և Ակսել։ Ներկա մեր գյուղում, հեղափոխությունից հետո, տիրող շերտը միջին գյուղացիությունն է, վորն իր հիմնական տարրերով աշխատավորական յերանգավորում ունի, այսինքն չի շահագործում վարձու աշխատանքը։ Նրան կից կան գյուղացիական յերկու շերտեր. կապիտալիստական տնտեսություն ունեցող գյուղացիությունը, այսինքն գյուղական բուրժուազիան, և բատրակությունը, այսինքն գյուղական պրոլետարիատը։ Միջին գյուղացու առաջ կա յերկու ճանապարհ. կամ պահել իր հիմնական եությունը՝ դաշնակից դառնալով բատրակությանը, վորի հանդեպ շահերի ներհակություն չունի, կամ յելնել այդ տարբերից և կուլակության գիրկն ընկնել։ Առաջին թեքումին խոշորապես նպաստել է և դեռ պիտի նպաստի կոոպերացիան՝ իր արտադրական և սպառողական ճյուղերով, մեքենայական ընկերություններով, ելեքտրոֆիկացիային ուժ տալով, և այլն։ Այդ յեղանակով միջին գյուղացին կոոպերացիային հարելով, դուրս կգա գյուղական կուլակության ազդեցությունից, ինչպես ապացուցել են ժամանակակից ռուս տնտեսագետները։

Եթե դա ճիշտ է տնտեսության բնագավառում, բնականորեն ճիշտ է և մեր նոր գյուղագրության թեքումը՝ մանր-սեպհականատիրական արժեքները ժխտելու ուղղությամբ։ Այդ կողմից շատ բնորոշ է Ստ. Զորյանի «Ճանկապատը» պատմվածքների ժողովածուն։ Ճանկապատը թեև պատմվածքներից մեկի խորագիրն է, բայց բոլոր պատմվածքների բացատրական սիմվոլն է. սակավահող մանր-սեպհականատիրական գյուղացիների

շարունակական վեճերը մի բուռն հողի համար. «Ո՛, այդ ցանկապատը. վորքան վեճ, կռիվ ու դանդատ է տեսել դա. քանի դատավոր, հաշտարար ու միջնորդ ել յեկել դրա մոտ» (տես յեր. 33)։ «Ցանկապատու

» պատկերացրած կյանքին շատ համապատասխան է սակավահողության այն պատկերը, վոր գծել է Հայաստանի Գյուղատնտեսական I Համագումարը։ Ըստ զեկուցողի՝ նորմալ հողաբաժանության համար հարկավոր է գյուղացիներին հատկացնել՝

տափարակներում	1	դեսյատին
նախալեռնային շրջանում	$1^1/_4$	»
լեռնային շրջանում	2	»
ալպիական շրջանում	3	»

Բայց ստիպված են յեղել այդ նորման 50%-ով կրճատել։ Նորմալ վիճակ ունի միայն Ղարանցովկայի շրջանը։ Այս պայմաններում, ուսումնասիրողի կարծիքով, անհատական տնտեսությունը չի կարող արդյունավետ լինել և անհրաժեշտորեն կոլեկտիվ տնտեսության պետք է անցնել։ Հետո՝ վոռոգման գործին պետք է ուժ տալ՝ անջրդի վայրերը շենացնելու համար, իսկ լեռնային արդյունաբերությունը պիտի զարգացնել և գյուղացու նահապետական գործիքները փոխարինել կատարելագործված տեխնիկայով։ Մանավանդ, վոր մեզանում տարածված մի քանի գյուղատնտեսական ճյուղեր—մեղվաբուծություն, մետաքսագործություն, այգեգործություն—շատ հող չեն պահանջում։ Բամբակագործության զարգացման անհրաժեշտությունը կասկածից դուրս պետք է համարել (տես Մ. Շահինյանի գիրքը, յեր. 88—120)։

Բնական է, վոր տնտեսական վերելքի այդ բոլոր յերևույթներին խոշորապես ուժ պիտի տա և գլխավոր աղդակ պետք է հանդիսանա կոոպերացիան։ Տնտեսագիտական գրականությունից հայտնի յե, վոր գյուղի շերտավորման ընթացքում կուլակների ուժեղացումը կատարվում է ի հաշիվ միջին և աղքատ գյուղացիության։ Դա տեղի ունի տնտեսական կյանքի վերելքի ու զարգացման հետևանքով։ Այսորվա գյուղում միջին և չքավոր գյուղացիների յերկու տիպ կա։ Ինչպես հայտնի յե, մեկը խզում է իր կապը հողի հետ և տեղափոխվում քաղաք, մտնելով պրոլետարական բանակի շարքերը, իսկ մյուս մասը մնում է գյուղում, կպչելով հողին։ Դրամի և ինվենտարի պակասությունը, պարարտացման միջոցների սղությունն ու ձեռնտու վարկի անհրաժեշտությունը հաճախ այդ վերջին տարրին նետում է կուլակության ազդեցության տակ։ Ցերկրի տնտեսական զարգացման ցանկալի գծի տեսակետից կոոպերացիայի ուժանդակությունն այդ գյուղացուն, վոր է ամեն մի տարակուսանքից։ Եթե այսորվա ավելի պատրաստակամությամբ կուլակի հետ է գործարքներ անում մանր գյուղացին, դա արդեն նշան է, վոր կոոպերացիան իր կոչման բարձրության և ծավալման գագաթնակետին չե դտնվում։ Կոոպերացիայի զարգացմանը զուգընթաց է կուլակության վարելքը։

Սա. Զորյանը մի այլ պատմվածքում գեղարվեստորեն պատկերացնում է առաջին յերկաթուղի բացման տոպավորությունը հայ գյուղում

«Յերկաթուղին» պատկերի մեջ այսպես և նկարագրված անդրանիկ սուլոցի առաջ բերած տպավորությունը. «Առաջին սուլոցը մեր գյուղում հնչեց այնպես, ինչպես վոր, ս. գրքի ասելով, Գաբրիելյան փողը պիտի հնչի ահեղ դատարանի որը՝ իրարանցում գցելով մարդկանց մեջ», «այդ սուլոցը լսելուն պես, գյուղում ամենքն իրար անցան, ինչպես մի մեծ հրդեհի ժամանակ», մի այնպիսի սուր սուլոց եր դա, վոր «մեր լեռներում ու ձորերում չեր լսվել յերբեք»։ Ֆուրգոնչի Պետրոսը՝ իր վողջ ատելությամբ հանդերձ դեպի յերկաթուղին, վերջը սպիտված և լինում ծախծխել ամեն ինչ և յերկաթուղային բանվոր մտնել (տես «Տխուր մարդիկ», յեր. 82—102)։

Մենք արդեն տեսանք, վոր ռուս նորագույն գյուղագիր բանաստեղծների յերկերում ևս (որինակ՝ Յեսենինի) շատ կան կրոնական պատկերացումներ, վորոնք արդյունք են ռուս գյուղի հետամնացության։ Նման յերևույթ աննկատելի յև բելգիացի բանաստեղծ Վերհարնի գյուղագրության մեջ։ Մեր գյուղագիրների մտայնությունն ավելի մոտ է ռուսականին նման պատճառներով, ինչով վոր պայմանավորված է ռուս գյուղագիրների կվիետիզմը։ Հայի գյուղի տնտեսության առաջիկա զարգացումը, անպայման, իր ժամանակին կը վերացնի այդ գրական մեծ թերին, վոր ունի մեր գյուղագրությունը։ Վերջ ի վերջո. մարդկային մտքի վրա գերիշխող կրոնական բռնությունը, ինչպես և առհասարակ ամեն մի «բռնություն, ըստ Մարքս-Ենգելսյան թեորիայի, տնտեսական ներուժ է» (տես այդ մտքի հիմնավորումը Маркс и Энгельс „Собр. соч.“, т. IV. 775)։

Ինչպես գյուղատնտեսության զարգացումը, այնպես ել գյուղացու գործունությունը պետական կյանքում անպայման յերաշխիք են այն բանի, վոր գերազանցորեն գյուղացիական մեր յերկիրը վերջ ի վերջո կունենա ավելի ուժեղ մի գյուղացիական գրականություն, քան ունենք։ Իսկ այսպիսի գրականության ինքնուրույն գոյությունը, ինչպես տեսանք, վոչ միայն չեն ժխտում, այլ և պերճախոս կերպով պաշտպանում են այնպիսի թեորետիկներ, ինչպես Պլեխանովն և Բուխարին են։

Ինչպես հայ գյուղը, այնպես ել հայ գյուղագրությունը պետք և ունենա իր վերելքը։ Վոչինչ չի արգելում այդպիսի մի սպասում ունենալու։

1971 թ.

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0074232

A III 5235